

ՀԲԸՄ

ԵՐԿԱՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2012 - 2013

ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ 88^Դ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ
ԱՊՐԻԼ 4, 2015, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ





ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Հ.Բ.Ը. Միությունը աշխարհի մեծագույն ոչ-շահամետ հայկական կազմակերպությունն է, որ նուիրուած է հայկական ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումին եւ զարգացումին կրթական, մշակութային եւ բարեսիրական յայտագիրներու միջոցով: Մեր կազմակերպութիւնը ամեն տարի կ'աջակցի եւ կ'օժանդակէ Հայաստանին, Արցախին եւ Սփիւռքին: Իր տարբեր ծրագիրներով եւ գործունէութիւններով ան կ'առնչուի աւելի քան 400,000 անհատներու:

Տեսլապաշտ հիմնադիրներու, ղեկավարներու, ինչպէս նաեւ առատաձեռն բարերարներու եւ անդամներու աշխատանքին եւ տարիներու վրայ երկարող նուիրատուութիւններուն շնորհիւ, Հ.Բ.Ը. Միությունը նշանակալի դերակատարութիւն մը ունեցած է հայկական արժանաւորութիւններու եւ արժէքներու պահպանման գործին մէջ, իր ուսերուն վրայ առնելով հայ աշխարհի կարիքները հոգալու եւ ժամանակի պահանջները բաւարարելու պարտականութիւնը: 1906էն ի վեր Հ.Բ.Ը. Միությունը հաւատարիմ մնացած է հայութեան բարիքին համար մնայուն հիմքեր ստեղծելու կոչուած իր գլխաւոր առաքելութեան:

Իր բազմաթիւ բարերարներուն շնորհիւ, Հ.Բ.Ը. Միութեան այժմու ամավարկը կը կազմէ աւելի քան 36 միլիոն ամերիկեան տոլար: Միութեան Նիւ Եորքի Կեդրոնական Գրասենակը կը համադրէ կազմակերպութեան գործունէութիւնները, համաշխարհային տարողութեամբ, գործօն ներկայութիւն մը ապահովելով 30 երկիրներու մէջ:

Աւանդական եւ նորարարական յայտագիրներու միջոցաւ, որոնց շարքին դպրոցներ, սկաւոտական խումբեր, ճամբարներ, կատարողական արուեստ, ասպարեզային փորձառութիւն, գիտելիքներու փոխանցման հեռավար միջոցառում եւ արհեստավարժ խմբաւորումներու ցանցեր, Հ.Բ.Ը. Միությունը կը հանդիսանայ Մայր Հայրենիքի եւ համայն Սփիւռքի մէջ սփռուած հայութեան համար կենսունակ կազմակերպութիւն մը:

Հ.Բ.Ը. Միությունը կը ձգտի երիտասարդութեան մօտ հետաքրքրութիւն ստեղծել մեր ազգային հարուստ ժառանգութեան նկատմամբ, ազգային պատկանելիութեան եւ հպարտութեան խորունկ զգացում զարգացնելով անոնց մօտ, մղելով զիրենք պահպանելու եւ մշակելու այդ ժառանգութիւնը ապագայ սերունդներուն համար:

Կողքի նկար՝ Յայտնաբերէ Հայաստանը Ծրագրի մասնակիցներէն:

Վերի նկար՝ Հ.Բ.Ը.Մ.ի 87^{րդ} Ընդհանուր Անդամական Ժողովի մասնակիցներ, Հոկտեմբեր 20, 2012, Ս. Էջմիածնի նորակառոյց մատենադարանի բացման առիթով:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

03

Մեր պատմությունը

04

Կեդրոնական
Վարչական Ժողով

05

Նախագահին խօսքը

07

Նիթական
Տեղեկագիր 2012-2013

09

Մարդասիրական
շտապ-օգնության
հիմնադրամ

11

Հայաստան/Ղարաբաղ

19

Կրթական

26

Ասպարեզային
Փորձագիտության եւ
Խորհրդատուական
Աջակցություն

31

Մասնաճիւղեր

49

Լուսարձակի Տակ

51

Յատուկ շրջայցեր

53

Կատարողական
Արուեստներ

59

«Կիզակետ» Երկամեայ
Շաբաթավերջ

61

Երիտասարդ
Արիեստավարժներ

65

Երիտասարդական

72

Ծրագիրներ



ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ազգային պարտականության խոր գիտակցություն է մղում, Հ.Բ.Ը.Մ.ի Հիմնադիր Նախագահ Պողոս Նուպար, ինն հիմնադիր անդամներու հետ միասին, նախաձեռնեց կազմակերպության մը ստեղծումին, որ պիտի ծառայէր համայն հայութեան բարիքին եւ պիտի պահպանէր հայ ինքնութիւնը:

1906 Ապրիլ 15ին իր հիմնադրութենէն ի վեր, կազմակերպութեան անբասիր համբաւը արձագանգ գտաւ հայ ժողովուրդին մէջ եւ Հ.Բ.Ը.Մ.-ը ամբողջ 20րդ դարու ընթացքին եղաւ ու փսաց հայ ժողովուրդի խօսնակն ու անխոնջ մարտիկը: Հ.Բ.Ը.Մ.-ի գործունէութիւնը, որ ինքնին հայ ժողովուրդի կեանքի ժամանակագրութիւնն է, հաւատարմօրէն սատար հանդիսացաւ հայութեան Յեղասպանութեան, բնական աղէտներու, ներգաղթի, գաղթավայրերու հաստատման, վերածնունդի եւ պետական անկախութեան վերիվայրուիմներով հարուստ իր պատմութեան ամբողջ ընթացքին: Մեր անդամներու եւ բարերարներու վստահութեան եւ օժանդակութեան ու մանաւանդ իր անշեղ կողմնորոշումին շնորհիւ, Հ.Բ.Ը.Մ.-ը աճելով դարձաւ համաշխարհային տարողութեամբ կազմակերպութիւն մը, որ իր անդամներու նուիրեալ աշխատանքով եւ իր նիւթական միջոցներով կը ծառայէ հայ ժողովուրդին՝ Սփիւռքի ամբողջ տարածքին եւ Մայր Հայրենիքի մէջ:

Շնորհիւ նախորդող սերունդներու նուիրումին եւ նախաձեռնութեան ոգիին, մեր կազմակերպութեան աւելի քան

մեկդարեայ ծառայութիւնը, Յեղասպանութենէն վերապրած հայ ժողովուրդին համար եղած է նախախնամական, յատկապէս կրթական, մշակութային եւ մարդասիրական մարզերէն ներս:

Հ.Բ.Ը.Մ.-ը համաշխարհային գործունէութիւն կը ծաւալէ իր 69 մասնաճիւղերով եւ մասնաժողովներով, 47 համայնքային կեդրոններով ու գրասենեակներով, 27 Երիտասարդ Արհեստավարժներու խումբերով, 25 ամենօրեայ եւ շաբաթօրեայ դպրոցներով, եւ զանազան ծրագիրներու իր օժանդակութեամբ, որոնց շարքին՝ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, Հայորդեայց Տուները, Տարեցներու Ճաշարաններ, Համալսարանական կրթաթոշակներ, ամառնային ճամբարներ, մարզական եւ սկաուտական խումբեր, ասպարէզային փորձառութեան ծրագիրներ, կատարողական արուեստներ եւ վեց տարբեր լեզուներով լոյս ընծայուող հրատարակութիւններ:

Այսօր, արդէն 21-րդ դարուն, Հ.Բ.Ը.Մ.-ը յանձնառու կը փսայ իր իննամակարութեան տակ գտնուող ասանդներու անխաթար պահպանումին, իր պարտաւորութիւններուն տէր կանգնելու հաստատակամութեամբ եւ ժամանակին հետ քայլ պահող նախաձեռնութիւններով: Իր արմատներուն հաւատարիմ Հ.Բ.Ը.Մ.-ը կրթական եւ մշակութային պատեհութիւններ կը շաունակէ ընձեռել մերօրեայ հայ երիտասարդութեան, յօգուտ հայրենիքի եւ աշխարհասփիւռ հայ համայնքներու բարօրութեան:

ՀԲԸՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ 2012 – 2013

ՆԱԽԱԳԱՀ

Պերճ Սեդրակեան

ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ

Սեմ Սիմոնեան, Սինան Սինանեան

ԳԱՆՁԱՊԱՀ

Երուանդ Տեմիրճեան

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Պերճ Փափազեան

ՓՈԽ-ԱՏԵՆԱԴՊԻՐ

Սարգիս Ճեպէճեան

ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.

Ամենայն Հայոց Կաթողիկոս

ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՄՆ՝ Նուպար Աֆեան, Մ. Մայրը Անսուր, Գերոլ Պաղտասարեան-Ասլանեան, Ժոզէֆ Պասրալեան, Նազարէթ Ֆրստըքճեան, Արտա Յարութիւնեան, Լեւոն Նազարեան, Տիգրան Թերիզեան, Երուանդ Զօրեան

ԱՐԺԱՆԹԻՆ՝ Ռուբէն Քէշիշեան, ՖՐԱՆՍԱ՝ Արիս Ադամեան
ԶՈՒԻՅԵՐԻԱ՝ Վահէ Կապրաշ, ՍՈՒՐԻԱ՝ Վազգէն Եագուպեան
ԱՆԳԼԻԱ՝ Ժոզէֆ Ուղուրլեան

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ


Սարգիս Տեմիրճեան, Ռիչըրտ Մանուկեան, Նազար Նազարեան,
Լուիզ Մանուկեան Սիմոն, Գառնիկ Եագուպեան

Ի ՅԻՇԱՏԱԿ

Պօղոս Նուպար, Հիմնադիր
Ալէք Մանուկեան, Յկեանս Պատուակալ Նախագահ

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԽՕՍՔԸ

ՄԵՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ, ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ



Պեյրութէն Պոսթոն, Միլանոյէն Մելպուռն, Գահիրէէն Գորտոպա, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան առաքելութիւնը միշտ եղած է սատարել հայ համայնքներու ծաղկումին: Անցնող տարիներուն, Միութիւնը հաւատարիմ ժառանգ կրթական, մշակութային եւ մարդասիրական նախաձեռնութիւններու նկատմամբ իր յանձնառու կեցուածքին, օժանդակելով տարուէ տարի իրաքանչիւր մարզի զօրացման: 2012 եւ 2013 տարիներուն, Կազմակերպութիւնը նաեւ նախաձեռնութիւններ ծաւալեց խոստմնալից նոր ուղղութիւններով:

88-րդ Ընդհանուր Ժողովի այս Երկամայ Տեղեկագիրը կը դրսեւորէ Միութեան իրաքանչիւր անդամի, նուիրատուի եւ օժանդակողի ներդրումը՝ ի նպաստ կազմակերպութեան ձեռքբերումներուն: Իբր Միութիւն, մեր ընդհանրական իրագործումները կարելի կը դառնան իրաքանչիւր անդամի յանձնառութեան եւ հետեւողական ճիգերուն շնորհիւ:

Մեր յաջողութիւններուն համար յաճախ անհրաժեշտ եղած է յաղթահարել բազմաթիւ դժուրութիւններ: Հայաստանը եւ Սփիւռքը վիթխարի մարտահրաւերներ կը դիմագրաւեն, տարածաշրջանային թէ միջազգային ճակատներու վրայ: Այս շրջանին, հայութեան դիմագրաւած դժուարագոյն խնդիրներէն մին էր Սուրիոյ մէջ շարունակուող տագնապը: Հ.Բ.Ը.Մ.-ը առաջին իսկ օրէն ընդառաջեց Սուրիոյ շրջանակի դիմումին, տրամադրելով անհրաժեշտ գումարներ, միաժամանակ ստեղծելով Հ.Բ.Ը.Մ.-ի Շտապ Օգնութեան Հիմնադրամ մը Սուրիահայութեան համար, որուն իբր արդիւնք այս երկու տարիներու ընթացքին կարելի եղաւ փոխանցել 1.5 ամերիկեան միլիոն տոլարի օժանդակութիւն հասնելու համար Սուրիահայ պատմական գաղութի անմիջական կարիքներուն: Տագնապին պատճառով բազմահազար սուրիահայեր հարկադրուած եղան լքելու իրենց ծննդավայրը եւ ապաստան գտնելու Հայաստանի եւ Արցախի մէջ: Շատեր առժամայ կայք հաստատեցին Լիբանան, բազմաթիւ ընտանիքներ

Հայկական Ցեղասպանութեան
Հարիւրամեակը նկատելով
անկիւնադարձային հանգրուան,
Հ.Բ.Ը.Միութիւնը պատրաստ
է երթալու աւելի հեռուն,
զարգացնելով իր աւանդական
առաքելութիւնը՝ Հայ ինքնութեան
եւ ժառանգութեան պահպանումէն,
մշակումէն եւ տարածումէն
անդին, համադրելով աշխարհի
հայութեան ներուժը եւ միջազգային
շրջանակներու մէջ բացայայտելով
Հայութեան կշիռը եւ դրոշմը

յաջողեցան անցնիլ Գանատա, իսկ ուրիշներ գաղթեցին Միացեալ Նահանգներ կամ Եւրոպայի այլ շրջաններ: Այս պատմական խաչմերուկին, երբ իւրաքանչիւր կողմնորոշում իր ճակատագրական հետեւանքները կրնայ ունենալ, անհրաժեշտ է որ մեզմէ իւրաքանչիւրը գիտակցի իր պատասխանատուութեան եւ պարտաւորութիւններուն, իր շարունակական ներդրումը բերելով ի նպաստ մեր ընդհանրական ճիգերու արդիւնաւորութեան:

2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Միութիւնը շարունակեց իր գործունէութիւնը Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ, մինչ սփիւռքի տարածքին Հ.Բ.Ը.Մ.-ի իւրաքանչիւր շրջանակի եւ մասնաճիւղի աշխոյժ գործունէութիւնը, դրսեւորեց Միութեան մեծ ընտանիքի անկայութիւնը եւ աչքառու դերը հայութեան աշխարհասփիւռ տարբեր համայնքներէն ներս: Այս շրջանին արագ թափով ընթացան Հ.Բ.Ը.Մ.-ի Երեւանի շէնքի շինարարական աշխատանքները: Ժամանակակից շինարարական լուծումներու կիրարկումով եւ բնապահպանման նորագոյն ճարտարագիտութեամբ իրականացած այս կառոյցը պիտի հանդիսանայ մեր Միութեան Հայաստանի գործունէութեանց կեդրոնատեղին, մեկնելով այն համոզումէն, որ սփիւռքահայ կազմակերպութիւններ պէտք է զօրացնեն ու զարգացնեն իրենց ներկայութիւնը հայրենիքի մէջ:

Հայկական Համացանցային Հեռավար Համալսարանի աշխատանքները, լեզուի, պատմութեան եւ մշակոյթի ծրագիրներուն առընթեր, ընդարձակուեցան, նախաձեռնելով բազմահաղորդակցական ԷԼ-գիրքերու շարքի մը պատրաստութեան: Այս շարքէն առաջինը՝ “Հայկական Լեռնաշխարհը” արդէն տրամադրելի է անվճար, եւ կարելի է ներբերել համակարգիչով որպէս ԷԼ-գիրք, եօթը տարբեր լեզուներով:

2012-ին ստեղծուեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստներու նոր բաժանմունքը, որ շուտով ձեռնարկեց իր աշխատանքներուն, հայ տաղանդներ յայտնաբերելով եւ անոնց մասնակցութեամբ կազմակերպուած ելոյթներով, տարբեր շրջանակներու մէջ հայ արուեստը եւ հայագգի երաժիշտներու ստեղծագործութիւնները ծանօթացնելով բազմազգի ունկնդիրներու: Նոյն տարին Նուպար Ճամբարը տօնեց իր 50-ամեակը: Այդ առթիւ ծրագրուած յայտագիրներուն մասնակցելու եկան աշխարհի զանազան կողմերէն նախկին բանակոդներու յաջորդական սերունդներ, խորհրդատուներ, ուսանողներ ու բարեկամներ:

Հ.Բ.Ը.Միութեան ուշադրութեան եւ յատուկ հոգածութեան առարկայ է միշտ երիտասարդութիւնը: Աշխարհի տարածքին հայ ուսանողներու յատկացուած բարձրագոյն ուսման կրթաթոշակներու ծրագիրը արագ աճ արձանագրեց դիմումագրերու համար համացանցային դրութեան որդեգրումով: Երիտասարդական ծրագրերու ընդարձակումը Ասպարէզային Փորձառութեան, Յաջորդ Սերունդ խորհրդատուական ծրագրի եւ ղեկավարման կարողութիւններու մշակման յատուկ նախաձեռնութիւնները, որոնց շարքին դպրոցներու

դասաւանդման միջոցներուն եւ կրթական ճարտարագիտութեան զարգացումները, կը սատարեն հայ երիտասարդ առողջ սերունդի կազմաւորումին եւ ղեկավար տարրեր մէջտեղ բերելու ճիգին, հաստատուն հիմերու վրայ դնելով համայնքներու ապագայ կենսունակութիւնը:

Մենք գոհունակութեամբ եւ հպարտութեամբ կը հաստատենք, թէ մեր Միութիւնը արժանապատուութեամբ եւ կորովով կը դիմագրաւէ մեր ազգին դիմաց ցցուող քաղաքական, ընկերային եւ տնտեսական ծանր մարտահրաւերները: Հայկական Յեղասպանութեան Հարիւրամեակը նկատելով անկիւնադարձային հանգրուան, Հ.Բ.Ը.Միութիւնը պատրաստ է երթալու աւելի հեռուն, զարգացնելով իր անդամական առաքելութիւնը՝ Հայ ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումէն, մշակումէն եւ տարածումէն անդին, համադրելով աշխարհի հայութեան ներուժը եւ միջազգային շրջանակներու մէջ բացայայտելով Հայութեան կշիռը եւ դրոշմը: Մենք համոզուած ենք որ մեր Միութեան ղեկավարութիւնը եւ անդամակցութիւնը պատրաստ են այս տեսլականի պահանջած կեդրոնացեալ ճիգին եւ ունին վճռակամութիւնը զայն իրականացնելու:

Հ.Բ.Ը.Միութիւնը, ինչպէս մեր ազգը ընդհանրապէս, կարեւոր խաչմերուկի մը վրայ կը գտնուի այսօր: Վերջին տարիներուն մենք կարեւոր քայլեր առած ենք, կազմակերպչական նախաձեռնութիւններով, նոր ծրագիրներու ստեղծումով եւ աշխարհի տարածքին նոր գործընկերութիւններ զարգացնելով: Կոչ կ'ուղղենք մեր շրջանակներուն եւ համայն անդամակցութեան, որ անոնք համոզումով, խանդավառութեամբ եւ գործօն դեր ստանձնելու պատրաստակամութեամբ ընդգրկեն այս նոր կողմնորոշումները, որոնք կը ձգտին մեր ազգը առաջնային դիրքերու վրայ դնել համաշխարհային նոր եւ զարգացող իրականութեան մէջ:

Ինծի համար մեծագոյն պատիւ կը սեպեմ Հ.Բ.Ը.Միութիւնը առաջնորդելու ծանր պատասխանութիւնը՝ Կեդրոնական Վարչական Ժողովի նուիրեալ կազմին եւ բազմահազար նուիրատուներու, վեհանձն բարերարներու եւ բարեկամներու աջակցութեամբ: Հաւատաւորներ, որոնք կը բաժնեն միեւնոյն պատուաբեր յանձնառութիւնը՝ որ է աշխատիլ ի խնդիր Հայ ազգի յառաջդիմութեան: Հպարտութեամբ կը հաստատեմ, որ 2012 եւ 2013 տարիները կազմեցին կենսունակ շրջան մը Միութեան կեանքին մէջ եւ վստահութեամբ կրնամ ըսել, թէ գալիք տարիները պիտի ըլլան աւելի փայլուն եւ արդիւնաբեր թէ Հ.Բ.Ը.Մ.ին եւ թէ Համայն հայութեան համար:



Պերճ Սեդրակեան
Նախագահ



ՆԻԻԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2013 - 2012

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Դեկտեմբեր 31

ԳՈՅՔ	2013 (**)	2012
Ընթացիկ Գոյք		
Դրամատան մեջ պատրաստ Արժեթուղթեր (*)	\$ 9,914,439	\$ 12,991,151
Գանձելի աւանդներ/հաշիւներ	57,135,609	47,319,824
Գանձելի տոկոս	5,011,538	5,552,029
Գումար Ընթացիկ Գոյքի	72,482,027	66,517,892
Արժեթուղթեր-երկարժամայ (*)	186,226,898	191,089,763
Անշարժ Կալուածներ (***)	87,288,005	84,705,237
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր գուտ	1,919,745	1,950,669
Գումար Գոյքի	\$347,916,675	\$344,263,561
ՊԱՐՏԱԿԱՆՔ ԵՒ ՋՈՒՏ ԳՈՅՔ		
Պարտականք		
Վճարելի հաշիւներ	\$7,255,202	\$7,766,780
վճարելի պարտաթուղթեր	263,534	369,432
Գումար Պարտականքի	7,518,736	8,136,212
Ջուտ Գոյք		
Ոչ պայմանաւորեալ	45,193,337	46,763,558
Առժամապէս պայմանաւորեալ	63,076,190	62,986,291
Մշտապէս Պայմանաւորեալ (Հիմնադրամներ)	232,128,412	226,377,500
Գումար Ջուտ Գոյքի	340,397,939	336,127,349
Գումար Պարտականքի եւ Ջուտ Գոյքի	\$347,916,675	\$344,263,561

ՄՈՒՏՔ

Օժանդակութիւն՝
Նուիրատուութիւններ
Անդամավճարներ
Յատուկ Ձեռնարկներ եւ այլ մուտքեր

Հասոյթ՝

Շահաբաժին եւ տոկոս
Կալուածային
Դպրոցական

Յայտագիրներու Մատակարարման

ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ

ԵԼՔ

Յայտագիրներ եւ Վարչական Ծախք
Յայտագիրներ
Կրթական
Մշակութային
Կրօնական
Մարդասիրական

Վարչական Ծախք

Դրամահաւաքի Ծախք
Դրամասակային Տարբերութիւն/
Վերադասաւորում

ԳՈՒՄԱՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔԻ

Յաւելում (Նուազում) Ելեւմուտքի

Միջ-յատկագումարային փոխանցում

Յաւելում (Նուազում) Ջուտ Գոյքի

Ջուտ Գոյք՝ տարեսկիզբին

Ջուտ Գոյք՝ տարեվերջին

(*)Կը ներկայացնեն ՀԲԸՄիոյթեան արժեթուղթերու տումարական արձանագրութիւնը 12/31/2013-ին եւ 12/31/2012-ին, որոնց սակարանային արժեքը յաջորդաբար Ամերիկեան Տոլարով **\$265,243,970** եւ **\$251,020,323** են:

(**)Միութեան 2013-ի եւ 2012-ի տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու (Մ.Ն.) Տէլաուէրի ընկերակցութեան, հաշուեքննիչներու կողմէ վաւերացուած տուեալները, առաւել Մ.Ն.է դուրս գործող շրջանակներու եւ մասնաճիւղերու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը: Նկատի ունենալով որ գրքոյկի պատրաստութեան ժամանակ Մ.Ն.է դուրս գտնուող մարմիններէ 2013-ի կարեւոր թիւով Նիւթական տեղեկագրեր մեր տրամադրութեան տակ չէին գտնուիր, 2013-ի ընդհանուր համարատուութիւնը 2012-ի իրականացած թիւերուն վրայ հիմնուած գումարներ կը պարփակէ:

(***)Կեդրոնական վարչութեան գնահատումով, կալուածներու ներկայ շուկայական արժեքը նկատելիօրէն աւելի բարձր է քան անոնց տումարական արժեքը որ արձանագրուած է նիւթական տեղեկագրին մէջ, համաձայն ընդհանրապէս ընդունուած ամերիկեան հաշուապահական սկզբունքներուն (U.S.-GAAP):

ԱՍՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Տեղեկագիր 10-Տարուայ Բաղդատական Գումարներու

	2013	% ⁽¹⁾	2012	% ⁽²⁾	2002
Ընդհ. Գոյք	\$347,916,675	1.07%	\$344,263,561	46.34%	\$235,247,104
Ընդհ. Մուտք	49,810,477	11.04%	44,858,378	67.31%	26,811,319
Ընդհ. Ելք	45,539,887	<1.28%>	46,128,182	53.43%	30,064,590

⁽¹⁾Միամեայ % Յաւելում (Նուազում) ⁽²⁾10-ամեայ % Յաւելում (Նուազում)

Ամերիկեան Տոլարով

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ԵԼԵԽՄՈՒՏՔ

Առ Դեկտեմբեր 31, 2013 (**)

Առ Դեկտեմբեր 31, 2012

Ոչ Պայմանաւորեալ	Առժամայէն Պայմանաւորեալ	Մշտապէս Պայմանաւորեալ	Ընդհանուր Գումար	Ոչ Պայմանաւորեալ	Առժամայէն Պայմանաւորեալ	Մշտապէս Պայմանաւորեալ	Ընդհանուր Գումար
\$ 4,084,676	\$ 7,338,177	\$ 5,525,577	\$ 16,948,430	\$ 3,973,273	\$ 10,028,515	\$ 2,484,401	\$ 16,486,189
316,594	-	-	316,594	311,254	-	-	311,254
5,071,004	36,232	-	5,107,236	4,565,469	32,620	-	4,598,089
9,474,274	7,374,409	5,525,577	22,372,260	8,849,996	10,061,135	2,484,401	21,395,532
11,309,629	-	-	11,309,629	7,398,909	-	-	7,398,909
1,860,116	19,719	-	1,879,835	1,873,456	19,860	-	1,893,316
14,248,753	-	-	14,248,753	14,170,621	-	-	14,170,621
27,418,498	19,719	-	27,438,217	23,442,986	19,860	-	23,462,846
36,890,772	7,394,128	5,525,577	49,810,477	32,292,982	10,080,995	2,484,401	44,858,378
12,219,381	(12,219,381)	-	-	13,223,073	(13,223,073)	-	-
49,110,153	(4,825,253)	5,525,577	49,810,477	45,516,055	(3,142,078)	2,484,401	44,858,378
23,705,478	-	-	23,705,478	21,368,716	-	-	21,368,716
11,552,831	-	-	11,552,831	12,142,665	-	-	12,142,665
2,031,314	-	-	2,031,314	3,721,616	-	-	3,721,616
3,419,210	-	-	3,419,210	4,227,419	-	-	4,227,419
40,708,833	-	-	40,708,833	41,460,416	-	-	41,460,416
3,931,345	-	-	3,931,345	3,485,324	-	-	3,485,324
521,601	-	-	521,601	286,517	-	-	286,517
378,108	-	-	378,108	895,925	-	-	895,925
4,831,054	-	-	4,831,054	4,667,766	-	-	4,667,766
45,539,887	-	-	45,539,887	46,128,182	-	-	46,128,182
3,570,266	(4,825,253)	5,525,577	4,270,590	(612,127)	(3,142,078)	2,484,401	(1,269,804)
(5,140,487)	4,915,152	225,335	-	(5,599,447)	5,511,386	88,061	-
(1,570,221)	89,899	5,750,912	4,270,590	(6,211,574)	2,369,308	2,572,462	(1,269,804)
46,763,558	62,986,291	226,377,500	336,127,349	52,975,132	60,616,983	223,805,038	337,397,153
\$45,193,337	\$63,076,190	\$232,128,412	\$340,397,939	\$46,763,558	\$62,986,291	226,377,500	\$336,127,349

Հ.Բ.Ը.Մ.-Ի ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՇՏԱՊ-ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



Տարիներու պատերազմն ու անկայունությունը պատճառ դարձան, որ Սուրիան եւ սուրիահայ համայնքը այսօր դիմագրաւէ մարդասիրական ամենամեծ տագնապը: 100-է աւելի կամաւորներու խումբ մը օգնած է Հ.Բ.Ը.Մ.-ի մարդասիրական գործնական օժանդակությունը հասցնելու սուրիահայ համայնքին: Հ.Բ.Ը.Մ.-ի ընտանիքը եւ յատկապէս կամաւորները Սուրիոյ, Լիբանանի եւ Հայաստանի մէջ, աննկարագրելի անձնուրացություն եւ նուիրածութիւն ցուցաբերեցին տագնապի սկիզբի օրէն եւ գործադրողները եղան կազմակերպութեան շտապ-օգնութեան աշխատանքներուն:

2012-ին եւ 2013- ին Հ.Բ.Ը.Մ.-ի նուիրատուները 1,5 միլիոն տոլարով օժանդակեցին Սիւրիեան մարդասիրական շտապ-օգնութեան հիմնադրամին սուրիահայութեան համար: Հ.Բ.Ը.Մ.-ի բարեսիրական ջանքերը շտապ-օգնություն փութացուցին հազարաւոր հայ ընտանիքներու, որոնք տեղաշարժած եւ ապաստանած էին Սուրիոյ մէջ, ինչպէս նաեւ անոնց, որոնք ստիպուած ապաստանած էին Հայաստան կամ Լիբանան:

Մասնաճիւղերու, կեդրոններու, դպրոցներու եւ շրջանի կամաւորներու համագործակցութեան ջանքերով Հ.Բ.Ը.Մ.-ը կազմեց Հ.Բ.Ը.Մ.-ի Շտապ Օգնութեան Մարմինը նպատակաւորաբար համայնքի հարաճուն կարիքներուն եւ մագլցող մարդասիրական տագնապին:

Հ.Բ.Ը.Մ.-ը արտակարգ օժանդակություն ցուցաբերեց հազարաւորներու ամբողջ երկրի տարածքին, անոնց տրամադրելով բժշկական օգնություն եւ դեղորայք, կացարան, մաքուր խմելու ջուր, ուտեստեղէն, կաթ, մանկական սնունդ եւ այլ կենցաղային անհրաժեշտ պարագաներ, ինչպէս եփելու համար պիւթէն կազ եւ հագուստեղէն: Որպէս մէկ բաժինը իր հովանաւորած օժանդակութեանց, Հ.Բ.Ը.Մ.-ը նպաստեց նաեւ դպրոցական ուսումնաւարձներուն եւ երեխաներու ձեռնարկներուն: Ապաստանեալներ, որոնք հաստատուած են Հայաստան եւ Լիբանան, անոնցալ տրամադրեց վերաբնակեցման օժանդակություն, դրամական օգնութեան ձեւով, անվճար բժշկական ծառայութեամբ, համալսարանական կրթաթոշակով եւ Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցական կրթաթոշակի յատկացումներով:

Ընտանիքներ, որոնք հաստատուած են Ղարաբաղի հեռաւոր վայրերը, անոնց ալ տրամադրեց երկրագործական անհրաժեշտ պարագաներ, որպէս վերաբնակեցման օժանդակութեան գործընթացի մէկ բաժինը:

Հ.Բ.Ը.Մ.-ի օժանդակությունը հասած է տուժած սուրիահայերուն եւ նպաստած անոնց ապահովութեան եւ վերապրումին: Վերջին երկու տարիներու ընթացքին, երբ ժողովուրդին կարիքները բազմապատկուեցան, Հ.Բ.Ը.Մ.-ը ծաւալեց իր աշխատանքը եւ հասողությունը, որպէսզի վստահ ըլլայ որ իւրաքանչիւր կարիքաւոր սուրիահայի հասնի անհրաժեշտ օժանդակություն:



ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՑԱԽ





Երեւանի Նորքի Հայորդեայց Տան սաներ:

Հայ Կին Յդի Կանանց չորս կեդրոնները նախաձեռնելու շրջանի եւ ծննդաբերած կանանց հոգատարութիւն կը ցուցաբերեն:

Սարեցներու ճաշարանները վեց օր ճաշ կը մատակարարեն հարիւրաւոր թոշակառուներու:

Արցախի Սենեկային Նուագախումբը երոթ ունեցաւ Մոսկուայի մէջ Ապրիլ 2013ին:

ՎԱՆԱՁՈՐ
ՍԵՒՈՒՆ
ԹԱԼԻՆ
ԷՋՄՐԱՏՐԻՆ
ԵՂՈՒԱՐԴ
ԵՐԵՒԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐԷՏ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՐՑԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՏԵՄՆԵԼ ԷՁ 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2012-ին Հ.Բ.Ը.Մ.ը եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը սկսան ուսումնական շարունակական ծրագրի մը գործարարութեան, աւելցնելու համար տեղական աշխատանքի առիթները եւ լճացումէ դուրս բերելու համար Ղարաբաղի գիւղական տնտեսութիւնը: Այս նպատակակէտը իրականացնելու համար Հ.Բ.Ը.Մ.-ը յանձնառու եղաւ 575,000 ԱՄՆ տոլար տրամադրել երկու տարուայ ընթացքին, սատարելու համար հիմնական Ուսումնական Շարունակական Ծրագրի մը Ղարաբաղի մէջ, Համալսարանի Տարածումի Ծրագրին ընդմէջէն: Ուսումնական շարունակական ծրագիրը կը տրամադրէ անգլերէն լեզուի ուսուցման վեց մակարդակ եւ չորս վկայական ստանալու ուղի, ռազմավարութեան, գործադիր ղեկավարութեան, հանրային քաղաքականութեան ծրագրումի եւ տնօրինութեան, զբօսաշրջութեան եւ հիւրընկալութեան տնօրինում-կառավարումի: Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Ամերիկեան Համալսարանի Ղարաբաղի նոր ծրագիրը կը հայթայթէ շարք մը դասընթացներ ինչպէս ստեղծագործական արուեստի վարժեցում, հաղորդակցութեան միջոցներ եւ արհեստագիտութիւն: Այս դասարանները հասու են բարձրագոյն եւ երկրորդականի աշակերտութեան, տեղական գործարարութեան, ձեռնարկատերերու եւ կառավարական պաշտօնէաներու: Համալսարանին մէջ Շարունակական Կրթութեան ծրագիրը կը հայթայթէ նաեւ համալսարանական քննութեանց պատրաստութեան դասընթացքներ, խորհրդաժողովներ տնօրինութեան, ճառախօսութեան եւ համակարգչային սօֆթուէրի, ինչպէս նաեւ գործնական դասընթացքներ աշխատանքի դաշտի զարգացման, եզրակացութեան գրառութեան եւ հարցազրոյցի:

2013-ին Ամերիկեան Համալսարանը մեկնարկեց չորս տարուան ծրագիր մը նախապատրաստական աստիճանի, 281 ուսանողներու համար: Համալսարանի Պսակաւորի (Bachelor) նոր ծրագիրը կը հայթայթէ գլխաւոր նիւթեր հաշուողական գիտութեան, գործարարութեան (Business), անգլերէնի եւ հաղորդակցութեանց: Պսակաւորի աստիճանը հաշուողական գիտութեան, կը պարունակէ նիւթեր կիրառական թուաբանութեան եւ համակարգչային գիտութեան, ինչպէս նաեւ համակարգչային հնարքներ, կապուած գիտութեան եւ երկրաչափութեան: Գործարարութեան Պսակաւորի աստիճանի դասընթացքը կը պարունակէ տնտեսագիտութեան, էլեմէնտական, հաշուակալութեան, շուկայացումի, տնօրինութեան եւ գործարարական հաղորդակցութեանց հիմունքները, մինչ անգլերէնի եւ հաղորդակցութեանց պսակաւորի աստիճանը կը պարունակէ դասընթացքներ լրագրութեան, հանրային յարաբերութեանց, գրելու, թարգմանելու եւ հաղորդակցութեանց այլ ազդակներ: Համալսարանը նաեւ հաստատած է Մագիստրոսի (Master's) աստիճանի նոր ծրագիր մը քանակական տնտեսագիտութեան, համագործակցութեամբ Հայաստանի Կեդրոնական Դրամատան:

Հիմնադրուած 1991-ին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը սեփական, անկախ համալսարան մըն է, գործող Երեւանի մէջ եւ կապուած է Գալիֆորնիոյ Համալսարանին. Հ.Բ.Ը.Մ.-ը անոր հիմնադիրներէն մին է:

Հ.Բ.Ը.Մ.-Ի ՀԱՅՈՐԴԵԱՅՑ ՏՈՒՆԵՐ

2012-ին եւ 2013-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Հայորդեայց Տուները Նորքի, Արաբկիրի եւ Մալաթիայի մէջ շարունակեցին իրենց դասաւանդութիւնները



նկարչութեան, ձեռարուեստի, համակարգիչի, պարարուեստի, մարմնամարզութեան, պատմութեան եւ երաժշտութեան գծով, ինչպէս նաեւ շարունակեցին իրենց ելոյթները ամբողջ Երեւանի տարածքին: Բոլոր այս երեք կեդրոններն ալ ունին մատուռներ, ուր ամեն շաբաթ տեղի կ'ունենան ժամերգութիւններ եւ Աւետարանի սերտողութիւն: Մօտաւորապէս 2,000 աշակերտներ – չորսէն, քսանհինգ տարեկան – արձանագրուած են այս մանկական կեդրոններուն մէջ, որոնք կը հսկուին 175 հոգիւնց գործավար մարմնի մը կողմէ: Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Մայր Աթոռի Հայորդեայց Տուներու աշակերտները կը մասնակցին նաեւ զանազան փառատօներու, ցուցահանդէսներու եւ պարզեւտարումի ձեռնարկներու, ինչպէս նաեւ մշակութային եւ մարզական առիթներու: 2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Հայորդեայց Տուներու երախաները մասնակցեցան Մանկական Եւրատեսիլի (Eurovision) մրցանքին, Նոան Հատիկ հանրապետական թատերական փառատօնին, «Տելֆի» միջազգային Խաղերուն եւ Միջազգային Մանուկներու Խաղերուն:

1993-ին Հ.Բ.Ը.Մ.-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ գործակցաբար նախկին խորհրդային երիտասարդական պիոներ պալատները վերածեց երեք հիմնարկներու: Այդ օրէն սկսեալ կեդրոնները հայթայթած են շարք մը արտադպրոցական դասաւանդութիւն եւ ամառային ծրագրեր, երախաներու եւ պատանիներու համար:

«ՀԱՅ ԿԻՆ» ՅՂԻ ԿԱՆԱՆՑ ԿԵԴՐՈՆՆԵՐ

2012-ին Հայ Կին-ը բացումը կատարեց Արշակուհի Դաւիթեան Յղի Կանանց Կեդրոնին Երեւանի մէջ: Կեդրոնը կը հայթայթէ անվճար խնամք կիներու նախաձեռնելիութեան եւ յետձեռնելիութեան շրջանին եւ ունի մասնագէտներու աշխատակազմ մը, որոնք կիներուն կը զինեն անհրաժեշտ գիտելիքներով եւ վարժութիւններով, որպէսզի բարելաւեն անոնց եւ անոնց զաւակներուն վիճակը: Խորհրդատուները, փաստաբանները, բժիշկները, հոգեբաններն ու ընկերային ծառայութեան մասնագէտները կը ղեկավարեն կանոնաւոր առանձին-առանձին խորհրդատուութիւններ կիներուն հետ եւ կը կազմակերպեն խմբային նիստեր, որպէսզի ստեղծեն միասնական ցանցեր, որոնք անհրաժեշտ են իրենց հոգեկան արիւթեան համար: Արշակուհի Դաւիթեան Յղի Կանանց Կեդրոնին բացումը, որ զուգահեռաբար էր Հ.Բ.Ը.Մ.-ի 87-րդ ընդհանուր ժողովին, կը հաստատէ նոր փուլ մը «Հայ Կին»-ի գործունէութեան ընդարձակման: Այս արդիւնաբեր նուաճումը կը նշէ Յղի Կանանց չորրորդ Կեդրոնի հիմնադրութիւնը Հայաստանի մէջ (Գիւմրի, Վանաձոր, Թալին եւ Երեւան), ուր աւելի քան 2062 առողջ նորածիններ եւ իրենց մայրերը կը ստանան օժանդակութիւն եւ առողջապահական հոգատար ծառայութիւն:

2002-ին առաջին կեդրոնի բացումէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.-ի «Հայ Կին» Յղի Կանանց Կեդրոնները կարելոր դերակատարութիւն ունեցած են ապահովելով 1,500 առողջ երախաներու ծնունդը եւ ստեղծելով օժանդակութեան ցանցեր հայ կիներուն համար:



ՄԻՋ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՃԱՏՐԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

2012-ին եւ 2013-ին միջոյրոցական Հանրապետական Ճատրակի մրցաշարքի մասնակիցներու թիւը հասած էր 5,000-ի եւ աւելի քան հազար դպրոցներ ներկայացուած էին: Հ.Բ.Ը.Մ.-ի հովանաւորած Ճատրակի մրցաշարքի յաղթողները նուէր ստացան Ճատրակի խաղատախտակներ, Ճատրակի ժամացոյցներ եւ լուսարձակներ իրենց դպրոցներուն համար, ինչպէս նաեւ նուէրներ Ճատրակի Ակադեմիայէն եւ իրենց տեղական քաղաքապետարանէն:

2008-էն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.-ը հովանաւորած է Միջոյրոցական Ճատրակի Հանրապետական Մրցաշարքերը Հայաստանի տարածքին, Ղարաբաղի եւ Վրաստանի Զաւախքի շրջանին մէջ: Ասիկա նախաձեռնութիւն մըն է գլխաւորաւ Հայաստանի Ճատրակի Ֆետերասիոնի կողմէ, հովանաւորութեան տակ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան:





ԱՐՑԱԽԻ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

2012-ին Արցախի Սենեկային Նուագախումբը հրախրուած էր Նանսենեան Հիմնադրամին կողմէ ելոյթ ունենալու Պերկանի մէջ, Պելճիքա: Ելոյթը Նանսենի ծննդեան 150-ամեակի տօնակատարութեանց առթիւ էր: Նուագախումբը 2013-ի իր տարեկան յայտագիրը սկսաւ համերգով մը, կազմուած ընտրեալ երաժշտական կտորներէ Վերտիէն, Լուչիէն, Թոսթիէն, Շուպերթէն, Շնորհալիէն, Պահլաունիէն եւ Պախ-Կունոյէն: Նուագախումբի խմբավարն է Մայլեսթո Գեորգ Մուրատեան, որ ղեկավարած է նուագախումբը անոր հիմնադրութենէն ի վեր: 2004-ին Ղարաբաղի Սենեկային Նուագախումբը հիմնուած է Մուրատեանի եւ 12 այլ երաժիշտներու կողմէ, որոնք Երեւանէն Ստեփանակերտ փոխադրուեցան կազմելու համար 19 հոգինոց համոյթը: Այդ թուականէն սկսեալ նուագախումբը նուիրուած է շրջանի երիտասարդութեան երաժշտական տաղանդները զարգացնելու գործին:

Հ.Բ.Ը.Մ.-ի շարունակական օժանդակութեամբ, Ղարաբաղի Սենեկային Նուագախումբը կ'օգնէ որ դասական երաժշտութեան սերը տարածուի տեղւոյն համայնքին մէջ, դաստիարակելով թէ՛ նուագողները եւ թէ՛ նոր տաղանդներ մշակող ուսուցիչները:

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ (ՆՈՒՌ) ԾՐԱԳԻՐ

2012-ին, Արժանթինահայ ձեռնարկատեր եւ բարերար Էտուարտո Էօրնէքեան պաշտօնապէս մեկնարկեց Նոր Կրթական Ռազմավարութիւնը Ղարաբաղի մէջ: Հ.Բ.Ը.Մ.-ի գործակցութեամբ Էօրնէքեան եւ իր բարեսիրական կազմակերպութիւնը «Արդիւնաբեր Արմէնիա» Հիմնադրամը, 3,500 անհատական համակարգիչներ (laptop) բաժնեցին նախակրթարաններուն, շրջանի ամբողջ տարածքին: Այս ծրագիրը մաս կը կազմէ միջազգային շարժումի մը, նպատակ ունենալով արդի ճարտարագիտութիւնը հասցնել անբարենպաստ պայմաններու մէջ գտնուող աշակերտութեան: NUR-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի գործընկերութիւնը laptop-եր բաժնեցին Առաջինէն մինչեւ չորրորդ կարգի աշակերտներուն Ստեփանակերտի, Շուշիի եւ Քարին Տակի մէջ: Գործիքը, որ պատրաստուած է One Laptop Per Child (OLPC)- իւրաքանչիւր մանուկի մէկ լափթօփ- ծրագրով, Մասաչուսեթսի Institute Of Technology-ի մէջ, աշակերտներուն առիթ կու տայ թէ խաղալու եւ թէ սորվելու, յստուկ ցուցմունքներով զարգացնելով ստեղծագործական ձիրքերը: Ճկուն կարեւորականութեամբ օժտուած համակարգիչը առիթ կու տայ աշակերտներուն, որ լափթօփերը օգտագործեն բացօթեայ, ուր կրնան կարդալ պատասառը ուղղակի արեւի լոյսով եւ անոր մարտկոցները լիցքաւորեն արեւի ուժով:

2011-ին, «Արդիւնաբեր Արմէնիա» Հիմնադրամը համագործակցեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի հետ, իրականացնելու համար Իւրաքանչիւր Մանուկի Մէկ Լափթօփ ծրագիրը, որպէսզի թերզարգացած երկիրներու աշակերտներուն հայթայթեն ցած գինով, ցած ուժով լափթօփեր, որոնք ունին յառաջացեալ ուսուցողական համակարգչային ծրագիր:





ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՃԱՇԱՍՐԱՀՆԵՐ

Հայաստանի անկախացումեն ի վեր Հ.Բ.Ը.Մ-ը հովանավորած է Տարեցներու ճաշարահներ, որոնք ամեն օր տաք ճաշ կը մատակարարեն 600 նպաստընկալներու եւ որբերու: Երեք ճաշարահները հաստատուած են Հ.Բ.Ը.Մ.-ի Հայրողեայց

Տուներուն մէջ, Նորք, Արաբկիր եւ Մալաթիա: Կեդրոնները կամավորներու կը դիմեն, որպէսզի ճաշերը հասցնեն անկողնի ծառայող տարեցներու, որոնք կարողութիւն չունին կեդրոններ երթալու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ-ը շարունակեց իր տարեկան կրթանպաստը յատկացնել Հայաստանի Ֆրանսական Համալսարանի ուսանողներուն, 60,000 ԱՄՆ տոլար պարգեւելով համալսարանի 46 ամենայառաջադէմ ուսանողներուն, Հ.Բ.Ը.Մ.-ի Բացառիկ Կրթանպաստներու ծիրէն ներս: 2007-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ ՀՖՀ-ի համագործակցութեան առաջին օրէն սկսեալ, աւելի քան 120 ուսանողներ օգտուած են հիմնադրամէն: 2013-ին ՀՖՀ-ի չորրորդ կարգի 11 ուսանողներ մասնակցեցան Ընկերութիւններու մէջ միամսեայ կեցութեան Լիոնի, Փարիզի եւ Վալանսի մէջ, գործակցութեամբ Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Երջանակի եւ Հ.Բ.Ը.Մ. Լիոնի մասնաճիւղի: Ուսանողները առիթ ունեցան մասնագիտական փորձառութիւն շահելու, փորձարկելու իրենց ֆրանսերէնի իմացութիւնը եւ միւրճուելու ֆրանսական մշակոյթին մէջ: Այցելութիւնները կ'ընդգրկեն հանդիպումներ եւ պտոյտներ Ազգային Ժողովին, Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան եւ Ղարաբաղի մայրոն Ներկայացուցչութեան Փարիզի մէջ, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի Փարիզի Նուպարեան Մատենադարանին, Վերսայի Պալատին, Լուվրին եւ Օրսէլի թանգարանին:



Համագործակցութիւնը Հ.Բ.Ը.Մ.-ի եւ ՀՖՀ-ի միջեւ կայացած է 2004-ին, երբ Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Երջանակայինը հիւրընկալեց առաջին խումբը ՀՖՀ-ի գիշերօթիկներու Փարիզի մէջ: Այդ թուականէն սկսեալ Համալսարանի 73 գիշերօթիկ ուսանողները մասնակցած են չորսէն-վեց շաբաթ տեւող փորձառական աշխատանքի Կրէնօպլի, Լիոնի, Փարիզի եւ Վալանսի մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ի նիւթական նպաստով:



Հ.Բ.Ը.Մ.Ի ՀՈՎԱՆԱԻՈՐԱԾ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ

ԸՆԹԱՅԻՔ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի Ամերիկեան Համալսարան
Հայաստանի Ճատրակի Ֆեդերասիոն
Հայկական Համացանցային Համալսարան
Հայորդեայց Տուներ (3)
Հայ Կին Յոլի Կանանց Կեդրոն (4)
Տարեցներու Ճաշարահներ (4)
Գերձայնային Հետազոտութեանց Կեդրոն
Երեւանի Պետական Համալսարան

ԱՐՑԱԽ

Հ.Բ.Ը.Մ./ԹՈՒՄՕ Կեդրոն
Երկրագործական Աջակցութեան Դրամաշնորհ
Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Շարունակական Ուսման Ծրագիր
Արցախի Սենեկային Նուագախումբ
Արցախի Հիւանդանոց
Նոր Ուսումնական Ռազմավարութեան Ծրագիր ՆՈՒՌ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հ.Բ.Ը.Մ.Ի Հայաստանի Սկաուտական Շարժում
Երեւանի Երիտասարդ Արհեստավարժներ

ՍՓԻՌՔԱՆՍՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Անդրանիկ Սկաուտական Բանակում
Յայտնաբերել Հայաստանը Ծրագիր
Երեւանի Ասպարեկային Փորձառութեան Ամառնային Ծրագիր
«Երաժշտական Հայաստան» Ծրագիր

ԳԼԽԱԻՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հ.Բ.Ը.Մ./ԹՈՒՄՕ Կեդրոն-Գիւմրի
Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Արաբկիրի եկեղեցի
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Հայաստանի Ծրագիրներ
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Մայր Տաճար
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Հայորդեայց Տուներ
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Հոգեւորականներու Բնակարաններ
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Հոգեւոր Կրթութեան Կեդրոն
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Գրադարան-Մատենադարան
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Թանգարան-Ալեք Մանուկեան Գանձատուն
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Թանգարան-Հին Վեհարան
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Օշականի Եկեղեցի
Մայր Աթոռ Ս. Էջմիածին Ընծայարան
Մայր Աթոռ Ս. Էջմիածին-Օտոնալոգիայի Կեդրոն
Մուրք Ներսէս Հիւանդանոց
Վանաձորի Հայորդեայց Տուն եւ Տարեցներու Ճաշարահ Վազգենեան Ընծայարան

ՅԱՏՈՒԿ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Արաբկիրի Մանկական եւ դեռահասներու ինստիտուտ ArmeniaNow Համացանցային Հրատարակութիւն
Հայաստանի Ֆիլիարմոնիք Նուագախումբ
Գիւմրիի Վերածնունդ Փառատուն
Գիւմրիի թիւ 3 Դպրոց
Գիւմրիի Հաշմանդամ երախաներու որբանոց
Գիւմրիի Պետական Երաժշտանոց
Հայաստանի Ֆրանսական Համալսարան
Մերոնք Հեռատեսիլի Յայտագիր
Ազգային Գիտութիւններու Ակադեմիա
Նոր Մալաթիայի Դպրոց
Նուիրե Կեանք Հիմնադրամ
«Օտար, ամայի ճամփէքի վրայ» Հեռատեսիլի Յայտագիր
Բաց Երաժշտութիւն Փառատուն
Բենիամին Ժամկոչեան Դպրոց
Հրատարակութիւններ
«Երեւան Իմ Մեր» Ծրագիր

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԵՐՂՈՒՄՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Արագածոտն, Նորաշէնի Մանկապարտեզի վերակառուցում
Արագածոտն, Աշնակի մէջ ծրագիր
Արագածոտն, Հնապատի մէջ ծրագիր
Արարատ, Արարատ քաղաքի մէջ ծրագիր
Արարատ, Զանգակատուն գիւղ, Պարոյր Մեսակի թանգարանի ընդունելութեան եւ գրապահոցի նորոգութիւն
Արմաւիր, Ոսկեհատ գիւղի մէջ ծրագիր
Գեղարքունիք, Արծունիստ գիւղի ջրամատակարարում եւ ջրամբար
Գեղարքունիք, Մարտունի գիւղի դպրոցի հիմնանորոգում
Գեղարքունիք, Գեղամաւանի մէջ ծրագիր
Գեղարքունիք, Օնվազարդ գիւղի դպրոցի ջեռուցում
Գեղարքունիք, Վազաշէն գիւղի մշակութային կեդրոնի նորոգութիւն
Կոտայք, Չարենցաւանի մանկապարտեզի նորոգութիւն
Լոռի, Արեւաշող գիւղի համայնքային կեդրոնի կառուցում
Լոռի, Դսեղի Թումանեանի թանգարանի ջեռուցման համակարգ
Լոռի, Յարդազիւղի համայնքային կեդրոնի կառուցում
Լոռի, Թեղուտ գիւղի մանկապարտեզի կառուցում
Շիրակ, Ամասիայի մշակութային կեդրոնի վերակառուցում
Շիրակ, Աշոցքի մանկապարտեզի հիմնանորոգում
Շիրակ, Մարալիկի առողջապահական կեդրոնի վերականգնում
Շիրակ, Պեմգաշէնի մանկապարտեզի նորոգութիւն
Սիւնիք, Հալիձորի մէջ վերանորոգութեան ծրագրեր
Սիւնիք, Լոր գիւղի Համո Սահեանի թանգարանի նորոգութիւն
Սիւնիք, ծրագրեր Գորիսի մէջ
Տաւուշ, Ներքին Կարմրաղբիւրի մանկապարտեզի նորոգութիւն
Տաւուշ, Պառուաքարի մէջ ծրագրեր
Տաւուշ, Վազաշէնի մշակութային կեդրոնի հիմնանորոգում
Տաւուշ, Ոսկեպարի համայնքային կեդրոնի կառուցում
Տաւուշ, Ոսկեպարի մանկապարտեզի կառուցում
Վայոց Ձեր, Գետափի մանկապարտեզի հիմնանորոգում
Վայոց Ձոր, Մալիշքայի մանկապարտեզի վերակառուցում
Վայոց Ձոր, Ընդունի խմելու ջուրի համակարգի կառուցում
Երեւան, Ճատրակի Ակադեմիա, ջեռուցման համակարգ

ԿՐԹՈՒԹԻՒՆ



Գալիֆորնիա, Գանոկա Փարքի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի 2012ի շրջանաւարտները:

Անցնող 80 տարիներու ընթացքին, Հ.Բ.Ը.Միութիւնը ստեղծած է համաշխարհային կրթական ցանց մը, որ կ'ընդգրկէ 15 ամենօրեայ վարժարաններ, նաեւ շարք մը շաբաթօրեայ եւ ամառնային դպրոցներ, որոնք իրենց գործունէութեամբ եւ յատուկ ծրագիրներով, կարեւոր ներդրում կը կատարեն ի նպաստ հայեցի դաստիարակութեան: Հ.Բ.Ը.Մ.ի կրթական կառոյցները իրենց ուսումնական որակաւոր ծրագիրներով եւ արտադասարանային մշակութային գործունէութիւններով, երիտասարդ սերունդին մօտ կը մշակեն ինքնութեան գիտակցութիւն եւ անոր կը փոխանցեն ազգային ժառանգութեան ծանօթութիւն, ի վերջոյ զիրենք պատրաստելով բարձրագոյն ուսման մրցունակ եւ որակաւոր հաստատութիւններ ընդունման:

Դպրոցները աշխարհի տարածքին, հայկական համայնքներու անկիւնաքարերը կը հանդիսանան եւ Հ.Բ.Ը.Միութեան

առաքելութեան կորիզը կը կազմեն: Միջին Արեւելքի մէջ ծայր առած տագնապի առաջին օրէն, Հ.Բ.Ը.Մ. -ի վարժարանները Սուրիոյ մէջ շարունակեցին իրենց առաքելութիւնը, կրթական եւ ընկերային ապաստան դառնալով հարիւրաւոր երախաներու, մինչ Լիբանանի վարժարանները, տեղահանուած երեխաներուն ապահովեցին հոգատար միջավայր մը, դիւրացնելով անոնց յարմարեցումը անցումային իրավիճակի պարտադրած դժուար պայմաններուն:

Հ.Բ.Ը.Մ. -ի վարժարանները Հիւսիսային Ամերիկայի մէջ, ճանաչուած են իրենց ուսումնական բարձր մակարդակով ինչպէս նաեւ եւ իրենց շրջանակներէն եւ համայնքներէն ներս կատարած աջքառու դերով: 2012-ին եւ 2013-ին, յաջորդաբար, փութեան ինը երկրորդական վարժարաններէն 235 եւ 258 աշակերտներ շրջանաւարտ եղան: Նոյն տարիներուն, Հ.Բ.Ը.Մ. -ի վարժարաններէն ներս արձանագրուած աշակերտութեան թիւը կը հասնէր աւելի քան 4,000-ի:

ՀԲԸՄ-Ի ԴՊՐՈՑՆԵՐԸ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ

ԱՐՄԱՆԹԻՆ: ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿ

2012-ին Հ.Բ.Ը.Մ. -ի Պուէնտա Այրէսի Մարի Մանուկեան Հիմնարկը իր Սրբուհի Էքշեան մանկապարտէզի բաժնին մէջ բացումը կատարեց երկու նոր դասարաններու: Իրենց կահաւորումով, լատեստողական միջոցներով եւ համակարգիչներով, նոր սենեակները լաւագոյն կարելիութիւններ կ'ընձեռեն ուսուցիչներուն եւ մանուկներուն: 2012-ը նաեւ յատկանշուեցաւ աշակերտութեան բարձր թիւով, որ դպրոցի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով անցաւ

400ի սահմանը, նախամանկապարտէզէն մինչեւ տասներկրորդ դասարան: Տարուան ընթացքին ընդարձակուեցաւ եւ նոր կազմածներով ամբողջացաւ համակարգիչի գիտաշխատանոցը, ուր աշակերտներ կը մասնակցին Հայկական Համակարգչային Համալսարանի դասընթացներուն, համալսարանի ուսուցիչներուն աջակցութեամբ եւ յարմարեցումով յատուկ ծրագրով:





ԳԱՆԱՏԱ: ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Նախադպրոցական բաժնեն մինչև ութերորդ, 300 աշակերտներով, Մոնթբելալի Ալեք Մանուկեան վարժարանը, վերակազմակերպչական եւ բարեկարգութեամբ կարելու նախաձեռնութիւններ իրականացուց: Նոր Տնօրէն Մարմինը ամբողջացուց նախադպրոցի բաժինը դպրոցէն առանձնացնելու նախաձեռնութիւնը, կառոյցային եւ ծրագրային համապատասխան փոփոխութիւններով, որոնք ապագայի ուղղութեամբ աւելի հաստատուն հիմք կ'ապահովեն դպրոցին: Կարելու յառաջդիմութիւն արձանագրուեցաւ նաեւ ծնողներուն հետ հաղորդակցութեան եւ համագործակցութեան սերտացումին ուղղութեամբ, ինչ որ մեծապէս սատարեց համայնքէն ներս դպրոցի

դիրքի զօրացումին: Դպրոցի տնօրէնութիւնը աշխատանք տարաւ նաեւ դպրոցի ուսումնական ծրագիրը բարելաւելու եւ ուսուցման արդիւնաւորութիւնը բարձրացնելու ուղղութեամբ: Դպրոցը լայն շրջանակներու մէջ ճանչցուած է իբր տիպար հիմնարկ, որ համակազմային կրթական ճարտարագիտութիւնը մեծ արդիւնաւորութեամբ ի գործ կը դնէ ուսուցման եւ աշակերտներու հետազօտական եւ ստեղծագործական բոլոր աշխատանքներուն մէջ: 2012-ին եւ 2013-ին դպրոցի ենթակառոյցին մէջ կարելու բարեկարգութեամբ իրականացան, համայնքի շարք մը ազնիւ բարերաններու եւ նուիրատուներու օժանդակութեամբ:

ՊԱՐՄԿԱՍՏԱՆ: ՆՈՒԱՐԴ ԿԻՒՂԷՆԿԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ՄԱՆՉԵՐՈՒ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՐԿՐՈՂԱԿԱՆ ՎԱՐժԱՐԱՆ ԱՂԶԿԱՆՑ

Հ.Բ.Ը.Մ-ը երկու վարժարաններ ունի Պարսկաստանի մէջ: Նուարդ Կիւղէնկեան նախակրթարան մանչերու համար, հիմնուած 1966-ին, եւ Մարի Մանուկեան Երկրորդական Վարժարան աղջկանց համար, հիմնուած 1975-ին: 2012-ին, մանչերու նախակրթարանի բաժինը ունէր 119 աշակերտներ, իսկ երկրորդականի բաժինը 170 աշակերտուհիներ: Երկու վարժարանները կը գործեն ընդարձակ համալիրի մը մէջ, որ կը պարփակէ զուգահեռ երկու գեղեցիկ ու բազմալայրկ կառոյցներ: Համայնքէն ներս միութեան դպրոցները

գնահատուած են իրենց ուսումնական բարձր մակարդակով եւ հայեցի դաստիարակութեան բծախնդիր ծրագրով: Նաեւ տարուան ընթացքին իրենց տարբեր գործունէութիւններով, դպրոցները իրենց շուրջ կը համախմբեն համայնքի շրջանակները: Մարի Մանուկեան Վարժարանի 35 շրջանաւարտուհիներ, յաջողութեամբ անցուցած ըլլալով համալսարան մուտքի քննութիւնները, իբր վարձատրութիւն այցելեցին Հայաստան, հիւրընկալուելով Հ.Բ.Ը.Մ-ի Հայաստանի ներկայացուցչութեան կողմէ:

ԼԻԲԱՆԱՆ: ԼԵՒՈՆ Կ. ՆԱԶԱՐԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ, ՊՕՂՈՍ ՎԱՐՄԻՐԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԵՒ Հ.Բ.Ը.Մ.-Ի ԴԱՐՈՒԶԻ-ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԵՐԿՐ. ՎԱՐժԱՐԱՆ

Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի վարժարաններու աշակերտութեան ընդհանուր թիւը 489 էր: Դպրոցի տնօրէնութիւնը իր ճիգերը կեդրոնացուցած էր գլխաւորաբար դպրոցական ծրագիրներու համադրումին եւ նախակրթարաններու ուսումնական արդիւնաւորութեան բարձրացումին ուղղութեամբ: Տարածաշրջանային քաղաքական եւ տնտեսական դժուար պայմաններուն տակ, Միութեան դպրոցները կենսական դեր կը կատարեն Լիբանանի համայնքին համար: 2012-ին Դարուհի-Յովակիմեան վարժարանը համակարգչային նոր գիտաշխատանոցով սարքաւորուեցաւ: Դասարանները նոյնպէս օժտուեցան smart board-երով, որոնց գործածութեան ուղղութեամբ ուսուցիչները մասնակցեցան յատուկ փորձառական աշխատանքներու: Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի վարժարանները գործնական աջակցութիւն ցոյց տուին, օգնելով տեղաշարժի ենթարկուած սուրիահայ ընտանիքներուն, 120 դպրոցականներ հիւրընկալելով դպրոցներէն ներս եւ անոնց տրամադրելով յաւելեալ դասաժամեր, ուսուցչական աջակցութիւն եւ անհրաժեշտ միջոցներ, որպէսզի անոնք շրջապատուին հոգածութեամբ եւ կարենան յարմարիլ եւ քայլ պահել ուսումնական տեղական պահանջներուն հետ:

Լեւոն Կ. Նազարեան Վարժարանը մեծ խանդավառութեամբ եւ յատուկ հանդիսութիւններով նշեց իր հիմնադրութեան եւ լիբանանահայ համայնքի մատուցած իր կրթական ծառայութեան 50-ամեակը:





ՍՈՒՐԻՍ: ԿԻՆԼԼԱՊԻ ԿԻՆԼՊԵՆԿԵԱՆ ՆԱԽԱԳՐԹԱՐԱՆ ԵՒ Հ.Բ.Ը.Մ.-Ի ԼԱԶԱՐ ՆԱՃԱՐԵԱՆ- ԳԱԼՈՒՍՏ ԿԻՆԼՊԵՆԿԵԱՆ ԵՐԿ. ՎԱՐԺԱՐԱՆ

Պատերազմական վիճակի մեջ, Սուրիոյ Հ.Բ.Ը.Մ.-ի վարժարանները, նուազած եւ տատանող աշակերտութեան թիւերով, շարունակեցին գոյատեւել եւ գործել: 600 աշակերտ Հալէպի Լազար Նաճարեան վարժարանին մէջ եւ 125 աշակերտ Դամասկոսի Կիլլայի Կիլլպէնկեան վարժարանին մէջ: Ոչ մէկ աշակերտ դուրս ձգուեցաւ նիւթական դժուարութիւններու պատճառով: Իրագործուած բազմաթիւ ձեռնարկները եւ ուսումնական ձեռքբերումները, շրջանաւարտ աշակերտութեան թիւը եւ անոնց բացառիկ յաջողութեան տոկոսը պետական

քննութիւններուն մէջ, կը դրսեւորեն ղեկավար մարմիններու կորովը, ուսուցիչներուն նուիրումը եւ համայնքի դիմադրականութիւնը: Տարբեր առիթներով եւ ամենադժնդակ պայմաններու մէջ գործադրուած մեծաթիւ մշակութային, ընկերային եւ սկաութական գործունէութեանց որակն ու տարողութիւնը հիացում եւ հպարտութիւն կը ներշնչեն: Լ.Ն.-Գ.Կ. վարժարանի 53 աշակերտներ միջնակարգէն եւ 50 աշակերտներ երկրորդականէն շրջանաւարտ եղան 2013-ին:

ՈՒՐՈՒԿՈՒԷՑ: ՆՈՒՊԱՐԵԱՆ-ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Նուպարեան-Մանուկեան վարժարանը տօնեց իր 40-ամեակը, շարք մը մը ձեռնարկներով եւ աշակերտական ներկայացումներով: Յոբելեանը նշող յիշատակի դրոշմաթուղթ մըն ալ հրապարակուեցաւ, եւ շրջագայութեան դրուեցաւ պաշտօնական յատուկ հանդիսութեան մը ընթացքին: Մոնթեվիտոյի քաղաքապետարանի խորհուրդը յատուկ ձեռնարկ մը կ'ազմակերպեց քաղաքապետարանին մէջ, յայտարարութեամբ մը, որ յատուկ ճանաչումի կ'արժանացնէր Վարժարանին մշակութային եւ ընկերային ներդրումը քաղաքին:

2012-ին վարժարանը նախադպրոցական բաժին մըն ալ աւելցուց համապատասխան սարգաւորումով օժտուած դասարաններով եւ ուսուցիչներով: Համագործակցութեան ծրագիր մը նախաձեռնուեցաւ Մարի Մանուկեան վարժարանի 6-րդ եւ 7-րդ կարգի աշակերտութեան մասնակցութեամբ, որուն ընթացքին աշակերտները աշխատեցան տարեկան թեմաթիք ծրագրի մը վրայ եւ փոխանակեցին այցելութիւններ:

ԳԱՆՈՎԱ ՓԱՐՔ, ԳԱԼԻՖՈՐՒԱ: ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Գալիֆորնիոյ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանը շարունակեց փալ Միութեան առաջընթաց վարժարաններէն մին, իր 800 աշակերտներով: Մասնակցելով Հարաւային Գալիֆորնիայի սեփական վարժարաններու ակադեմական մրցաշարքին, աշակերտները, 2012-ին շահեցան 26 մետալ, որոնցմէ 10ը ոսկի, մրցելով տասը տարբեր մարզերու մէջ: Մրցումի ստեղծագործական գրականութեան բաժնին մէջ, Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի աշակերտները մրցեցան 200 մասնակիցներու դէմ եւ շահեցան 9 մետալներէն 5-ը: 2013-ին, «Ձայներ Յեղասպանութենէն», խորագրով ստեղծագործական բեմադրութիւն մը իրագործուեցաւ Կատարողական Արուեստի բաժանմունքի ասարական դասարանին կողմէ, պարով, երաժշտութեամբ եւ նկարչութեան համադրումով: Բեմադրութիւնը ներկայացուեցաւ համայնքին, ինչպէս նաեւ տեղական վարժարաններուն, շարք մը ելոյթներով: Այս շրջանին 87 աշակերտներ շրջանաւարտ եղան եւ անցան Հարաւային Գալիֆորնիոյ ինչպէս նաեւ նահանգէն դուրս համալսարաններ, բարձրագոյն ուսման համար:



ՓԱՍՏԵՆԱ, ԳԱԼՖՈՐՆԱ: ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարանը շարունակեց ընդարձակուիլ, իր աշակերտութեան թիւով եւ ուսումնական նիւթերու յաւելումով: Ընտրովի նոր դասանիւթերու շարքին աւելցան իրաւաբանութիւն, ընկերաբանութիւն, robotics, Ap Biology, Ap Calculus, ճառախօսութիւն, վիճաբանութիւն, հայերէնի

կատարողական ծրագիր, թատրոն, միջազգային հարցեր եւ լրագրութիւն: 2013-ին 32 աշակերտներ ներգրաւուեցան National Honor Society (Ազգային Պատուոյ Ընկերութեան) մէջ: 78 աշակերտներ շրջանաւարտ եղան վարժարանէն եւ ընդունուեցան մրցունակ համալսարաններ:

ՍԱՌԻԹՅԻՆՏ, ՄԻՇԻԿԸՆ: ԱԼԷՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԶԱՐԹԸՐ ՎԱՐԺԱՐԱՆ

2013-ին Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանը 422 աշակերտներով, երկրորդ տարին ըլլալով շարունակեց դասաւորուիլ պրոնգ մետալակիր դպրոցներու շարքին, երկրի երկրորդական վարժարաններու, US News and Report-ի կողմէ: Վարժարանը շահեցաւ նաեւ Charter School State Academic Champion տիտղոսը, Bridge Magazine-ի կողմէ, չորրորդ կարգի

թուաբանութեան եւ ընթերցանութեան նիւթերուն մէջ: 2013-ի շրջանաւարտ դասարանի 30 աշակերտներ արժանացան չորս տարուան քոլէճի կրթաթոշակներու \$1.5 միլիոն ընդհանուր արժողութեամբ: Նաեւ բոլոր այն աշակերտները որոնք դիմած էին Միջիկընի Էնն Արպէր Համալսարանը, ընդունուեցան առանց բացառութեան յատուկ կրթաթոշակներով:



Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ՝ Մարի Մանուկեան Վարժարան (Երկրորդ.)

ԱՖՍՏՐԱԼԻԱ

ՄԻՏՏԻ՝ Միտնիի Ալեքսանտր Նախակրթարան Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Դպրոց

ՊՈՒԼՎԱՐԻԱ

ՏՈՊՐԻՉ՝ Շաբաթօրեայ Դպրոց
 ՀԱՍՔՈՎՕ՝ Շաբաթօրեայ Դպրոց
 ՓԼՈՎՏԻԻ՝ Շաբաթօրեայ Դպրոց
 ԲՈՒՍԷ՝ Շաբաթօրեայ Դպրոց
 ՍԼԻՍԹՐԱ՝ Շաբաթօրեայ Դպրոց
 ՍԼԻՎԸՆ՝ Շաբաթօրեայ Դպրոց
 ԵԱՄՊՈՒԼ՝ Շաբաթօրեայ Դպրոց

ԳԱՆԱՏԱ

ՍՈՆԹՐԷՍԼ՝ Արմեն Քեպէք-Ալեք Մանուկեան Վարժարան (Երկրորդ.)

ՖՐԱՆՍԱ

ՓԱՐԻՉ՝ Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Դպրոց
 ՎԻԷՆ՝ Զորեքշաբթօրեայ Դպրոց

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱԹԷՆՔ՝ Արթաքի Գալվաքեան Վարժարան (նախկրթ.)

ԻՐԱՆ

ԹԵՀՐԱՆ՝ Մարի Մանուկեան Աղջկանց Վարժարան (Երկրորդ.)
 Նուարդ Կիւլպէնկեան Մանչերու Վարժարան (նախկրթ.)

ԼԻԲԱՆԱՆ

ՊԷՅՐՈՒԹ՝ Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան (նախկրթ.)
 Տեմիրճեան Կեդրոնի Հայոց Լեզուի «Միօրեայ Դպրոց»
 Լեւոն Կ. Նազարեան Վարժարան (նախկրթ.)
 Դարուի-Յովակիմեան Վարժարան (Երկրորդ.)

ՍՈՒՐԻԱ

ՀԱԼԷՊ՝ Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարան (Երկրորդ.)
 ԴԱՄԱՍԿՈՍ՝ Կիւլպայի Կիւլպէնկեան Վարժարան (նախկրթ.)
 ԳԱՄԻՇԼԻ՝ Շաբաթօրեայ Դպրոց

ՈՒՐՈՒԿՈՒԷՅՑ

ՍՈՆԹԷՎԻՏԷՕ՝ Նուպարեան-Մանուկեան Վարժարան (Երկրորդ.)

ԱՄՆ

ԳԱՆՈԿԱ ՓԱՐՔ՝ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան (Երկրորդ.)
 ՇԻՔԱԿՕ՝ Սիսակ Յ. Վարժապետեան Շաբաթօրեայ Դպրոց
 ԳԼԻՎԸՆՏ՝ Շաբաթօրեայ Դպրոց
 ՔՈՍԹԱ ՄԵՍԱ՝ Օրէնճ Քառնիթի Շաբաթօրեայ Դպրոց
 ՓԱՍԱՏԻՆԱ՝ Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան (Երկրորդ.)
 ՏԻԹՐՈՑԻԹ՝ Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան (Երկրորդ.)



Հ.Բ.Ը.Մ.ի աջակցությունը վայելող Կատարողական Արուեստի Կրթաթոշակներ ստացած արուեստագետներ ելոյթ կ'ունենան դասական եւ ավանդական հայկական երաժշտական կատարումներով, Պոսթոնի մեջ նուիրահաւար-համերգի մը ընթացքին, հանգանակելով 60,000 տոլար աջակցելու տեղական երիտասարդական ծրագիրներու:

ՀԲԸՄ-Ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

2012-ի Յունուարին, Հ.Բ.Ը.Մ.-ը մեկնարկեց Հ.Բ.Ը.Մ.-ի կրթանպաստի կայքէջի նոր ծրագիր մը: Բոլոր դիմումները կ'ընդունուին եւ ընթացք կը ստանան էլեքթրոնիք ձեւով Նիւ Եորքի Կեդրոնական Գրասենեակին մէջ, առցանց հաղորդակցութեան միջոցաւ:

Առցանց կայքէջի միջոցաւ դիմումագրի ներմուծման հետ, դիմողներուն թիւը աւելի քան կրկնապատկուեցաւ: 2012-ին 1,000-է աւելի ուսանողներ դիմումներ ներկայացուցին Հ.Բ.Ը.Մ.-ի կրթանպաստին, աշխարհի զանազան հաստատութիւններու մէջ ուսանելու համար - բաղդատած նախորդ տարիներու, միջին հաշուով 400-500 դիմորդներու: Նոյնն էր պարագան նաեւ 2013-ին:

2012-2013-ի իւրաքանչիւր տարեշրջանին, մօտաւորապէս 500 արտական դասարանի աշակերտներ, շրջանաւարտներ եւ մասնագետներ, որոնք կ'ուսանէին 35 երկիրներու մէջ, օգտուեցան Հ.Բ.Ը.Մ.-ի կրթաթոշակի աջակցութենէն, որուն գումարը հասաւ **750,000 ԱՄՆ տոլարի** 2012-ին եւ **1,1 միլիոն ԱՄՆ տոլարի** 2013-ին:

Այս անհատական կրթաթոշակներու կողքին, Հ.Բ.Ը.Մ.-ը իւրաքանչիւր տարի 500,000 ԱՄՆ տոլար յատկացուց, Հայաստանի զանազան համալսարաններուն, ներառեալ Հայաստանի Ամերիկեան Համալսարանն ու Հայաստանի Ֆրանսական Համալսարանը:

Հ.Բ.Ը.Մ.-Ի ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

տրամադրուեցան մագիստրոսական ուսանողներու հետեւեալ ասպարէզներու մէջ.- Ճարտարապետութիւն, ատամնաբուժութիւն եւ բժշկութիւն, համակարգչային գիտութիւն, կրթութիւն, զծագրութիւն եւ ճարտարարուեստական զծագրութիւն, ատողջապահական քաղաքականութիւն

- Գոլումպիա Համալսարան
- Հարվըրտի Համալսարան
- Սթանֆորտ Համալսարան
- Թաֆթս Համալսարան
- Եիլի Համալսարան

եւ հանրային կառավարչութիւն, էլեմտագիտութիւն, տնտեսագիտութիւն, միջազգային կապեր ու դիւանագիտութիւն եւ իրաւաբանութիւն: Կրթանպաստ ստացողներէն շատերը արձանագրուած էին Միացեալ Նահանգներու ընտրելագոյն քոլէճներու եւ համալսարաններու մէջ, ինչպէս

- Ճոն Հոփքինս Համալսարան
- Մասաչուսեցի Ճարտարարուեստի Բնութիւտ (MIT)
- Նիւ Եորքի Համալսարան (NYU)
- Գալիֆորնիայի Համալսարան, Լոս Անճելլոս (UCLA)
- Հարաւային Գալիֆորնիայի Համալսարան (USC)

Հ.Բ.Ը.Մ.-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

տրամադրուեցան յառաջադէմ երաժիշտներու, երգահաններու, դերասաններու, բեմադրիչներու եւ շարժանկարային թատերագիրներու,

- Գլիվլընտի Երաժշտական Ինստիտուտ
- Քոլպըրնի Կատարողական Արուեստից Դպրոց
- Գոլումպիա Համալսարան
- Ճէյքոպի Երաժշտական Դպրոց
- Ճիւլիարտի Դպրոց

Աւստրիոյ, Պելճիքայի, Պուլկարիոյ, Գանատայի, Ֆրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Հոլանտայի, Զուիցերիոյ եւ Միացեալ Նահանգներու երաժշտանոցներէն եւ համալսարաններէն: Ներառեալ հիմնարկներն են՝

- Արքայական Երաժշտական Ակադեմիա
- Մասաթրիխտի Երաժշտական Ակադեմիա
- Նիւ Ինկլընտի Երաժշտանոց
- Ման Ֆրանսիսքոյի Երաժշտանոց
- Վիեննայի Երաժշտանոց

Հ.Բ.Ը.Մ.-ի ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ տրամադրուեցան Մ. Ներսէս Հայկական ընծայարանի ուսանողներու, Նիւ Ռոշէլի մէջ, Նիւ Եորք եւ Գալիֆորնիոյ Արեւմտեան Թեմէն թեկնադուներու, ինչպէս նաեւ այլ Աստուածաբանութեան ուսանողներու,

որոնք կը պատրաստուին Մագիստրոսի եւ Դոկտորական աստիճան Քրիստոնէական ուսմունքի, հոգեւորական Աստուածաբանութեան, խորհրդատուութեան եւ երիտասարդութեան ծառայութեան գծով:

Հ.Բ.Ը.Մ.-ի ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԸ կ'ընդգրկեն ամենաընդարձակ խմբաւորումը անհատական կրթանպաստներու, որոնք կը յատկացուին աշակերտներու, որոնք կը հետապնդեն բարձրագոյն ուսում Միացեալ Նահանգներէ դուրս: Շատերը աշխարհի գանազան վայրերու

- Պէրուի Ամերիկեան Համալսարան
- Պոդգրիչի Համալսարան
- Կեդրոնական Եւրոպայի Համալսարան
- Լոզանի Դաշնային Բազմաբուհեան Դպրոց
- Զիւրիխի ETH Համալսարան
- Հայկագեան Համալսարան
- Լոնտոնի Կայսերական Դպրոց

Հ.Բ.Ը.Մ.-ի վարժարաններու շրջանաւարտներն են: Այս ծրագրին անհրաժեշտ օժանդակութիւն ցուցաբերելու համար Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղերը իրենց ներդրումը կը կատարեն ճշդելու եւ գնահատելու լաւագոյն թեկնածուները: Ընդունուողները արձանագրուած են՝

- Մըզկիլ Համալսարան
- Moscow Institute of Physics & Technology
- Լոնտոնի Համալսարանական Դպրոց
- Օքսֆորտի Համալսարան
- Փարիզի Համալսարան
- Թորոնթոյի Համալսարան
- Վիէնայի Ճարտարուեստի Համալսարան

Հ.Բ.Ը.Մ.-ի ԳՆԱՀՍԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ կը տրուին Հ.Բ.Ը.Մ.-ի Մ. Նահանգներու երեք վարժարաններու իւրաքանչիւրի յաջողագոյն շրջանաւարտ աշակերտներուն, որոնք ուսումնական կատարողութեան, դպրոցական ոգիին եւ համայնքային ծառայութեան բարձր կարողութիւններ կը ցուցաբերեն: Յատկացում ստացողները կ'ընդգրկեն յառաջադէմ աշակերտներ, ինչպէս նաեւ աշակերտներ որոնք գործօն եւ առաջնորդող դեր կը կատարեն իրենց

համայնքներուն մէջ: Անոնցմէ շատեր կը յաճախեն Գալիֆորնիոյ Բազմաբուհեան Պետական Համալսարանը, Գալիֆորնիոյ Պըրքլի կամ Լոս անճէլըսի Համալսարանը, եւ Միչիկընի Անն Արպըր Համալսարանը: Անոնք կենսաքիմիագիտութեան, բջիջային եւ մոլեքիւլար կենսաբանութեան, պատմութեան, լրագրութեան, ջրագիտական բժշկութեան եւ քաղաքագիտութեան ուսանողներ են:

Մօտաւորապէս մէկ դարու ընթացքին Հ.Բ.Ը.Մ.-ի Կրթանպաստի Օրագիրը, կարողացած է բարձրագոյն ուսումով օժտել տասնեակ հազարաւոր խոստմալից համալսարանական հայ

պատանիներ, արձանագրուած կարգ մը գերազանց մակարդակի համալսարաններու մէջ:



Հ.Բ.Ը.Մ.ի կրթաթոշակով յատուկ երաժշտութեան մասնագիտութեամբ մագիստրոսի աստիճանի ձգտող օփերային երգիչ Արամ Օհանեան կը փայլի գուիցերական բեմադրութեամբ “Le Huron” ի ներկայացման ընթացքին:



Հ.Բ.Ը.Մ.ի կրթաթոշակի շնորհիւ Ռիմա Կարապետեան կրցաւ ուսումը շարունակել Լէյտըն Համալսարանին մէջ, Հոլանտա, ուր ան գիտական աստիճանի կը հետեւի նախքան Հայաստան վերադառնալը, ուր պիտի աշխատակցի Արտաքին Գործոց Նախարարութեան:



Հ.Բ.Ը.Մ.ի կրթաթոշակ ստացած Ռաֆֆի Էլ-Շէմսա (աջին), կ'ընկերանայ Լեռնային Ղարաբաղի նախագահին, Արցախի ի նպաստ Միչիկընի մէջ կազմակերպուած նուիրահաւաքին:




Դոկտ. Երուանդ Զօրեան (ձախին) հիմնադիր նախագահ Հ.Բ.Ը.Մ.ի Համացանցային Հեռավար Համալսարանի, Միութեան Ընդհանուր Ժողովին կը ներկայացնէ համալսարանի նորագոյն ծրագիրները: Աջին Հայաստանի Գիտութեան եւ Կրթութեան Նախարար Արմէն Աշոտեան:

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՅԱՆՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.ի Հայկական Համացանցային Համալսարանը շարունակեց ընդարձակել իր համացանցային հեռավար ուսուցման առաջադրութիւնները եւ համաշխարհային հասողութիւն ապահովելով անհատներու եւ խումբերու: Իր ունեցած առցանց Հայերէն լեզուի, Հայոց պատմութեան եւ մշակոյթի դասընթացներուն կողքին, համալսարանը այս շրջանին իրականացուց կարգ մը նոր նախաձեռնութիւններ: Համալսարանը ձեռնարկեց նոր մաթիմատիկա էլ-գիրքի շարքի մը պատրաստութեան Հայոց պատմութեան, Մշակոյթի, Զբօսաշրջութեան եւ Տնտեսագիտութեան բնագավառներուն մէջ, նկարներով,

համայնապատկերային տեսարաններով եւ տեսաերկով: Առաջին էլ-գիրքը, Հայկական Լեռնաշխարհը, այժմ պատրաստ է թօլեզուներով: 2012-ին համալսարանը սկսաւ առցանց ճատրակի դասաւանդութեան ծրագիր մը, գործակցութեամբ Հայաստանի ճատրակի Ակադեմիային: Աշխատանքը սկսաւ 2012-ին, զարգացնելու համար գործնական դասընթացք մը, հիմնուած հայկական ճատրակային ուսուցման մեթոտին վրայ: Ճատրակի ծրագրին մասնակցեցան աւելի քան 300 աշակերտներ Հայաստանէն եւ Սփիւռքէն: Համալսարանը գործակցեցաւ նաեւ հայաստանեան համայնքներու, կրթական հիմնարկներու եւ այլ կազմակերպութիւններու հետ աշխարհի չորս կողմը, օգնելու որ կազմակերպեն համալսարանի ճիւղեր, յատուկ խումբերու եւ կարիքներու համար պատշաճեցուած ծրագիրներով: Այս ծրագիրը գործադրուեցաւ 12 հայկական վարժարաններու եւ համայնքային կեդրոններու մէջ 2012-ին եւ 2013-ին: Այս ընթացքին Համալսարանը նաեւ գործակցեցաւ ԱՅԲ արդիական վարժարանին հետ Հայաստանի մէջ, որպէսզի ճատրակի դասընթացք հաստատէ նախակրթարանի աշակերտներուն համար:



Հայկական Համացանցային Համալսարանի առաքելութիւնն է աշխարհի շուրջ ուսանողներու առիթ ստեղծել ստանալու համար համապարփակ գիտելիքներ Հայկական ուսուսման իրութեանց, առանց նկատի առնելու անոնց տարիքը, բնակութեան վայրը եւ զարգացման մակարդակը:



Պուէնոս Այրէսի Մարի Մանուկեան Վարժարանի աշակերտները կ'օգտագործեն Հեռավար Համալսարանի դասընթացները:

ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ



Խումբ մը Նիւ Եորքի Ամառնային Ասպարեզային Փորձագիտութեան 25-ամեակի կազմակերպիչ յանձնախումբի անդամներէն, Battery Park-ի շքեղ սրահներուն մէջ կայացած հաւաքոյթի ընթացքին, Կիրակի 21 Յուլիս 2012:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2012-ին, Ասպարեզային Փորձագիտութեան Ամառնային Ծրագիրը նշեց Նիւ Եորքի մէջ իր 25-ամեայ գործունէութիւնը ի սպաս երիտասարդ հայորդիներու, անոնց հայթայթելով արհեստավարժական առիթներ: 2012-ին եւ 2013-ին 64 մասնակից ուսանողներ **Հայաստանէն, Գանատայէն, Լիբանանէն, Ռուսիայէն, Սուրիայէն, Մ.Նահանգներէն եւ Միացեալ Թագաւորութենէն** ուրը շաբաթներ անցուցին, պաշտօնավարելով իրենցընտրած մասնագիտական մարզերուն մէջ, որոնք ապահովուած էին Հ.Բ.Ը.Մ.-ի կողմէ, հիւրընկալ հաստատութիւններու անոր լայն ցանցին միջոցաւ: Ծրագրի մասնակիցները տեղաւորուեցան կազմակերպութիւններու եւ ընկերութիւններու մէջ, ինչպէս Գոլիւմպիա Համալսարանի Բժշկական կեդրոնը, Տեօչէ Պանքը, Մէրիլլ Լինչ, Միքըրթոլ եւ NYU բժշկական Կեդրոնը եւ ուրիշներ:

2012-ին, 25-Ամեակի Յանձնախումբը կազմակերպեց դրամահաւաքի ձեռնարկներ, ինչպէս 25-Ամեակի Կալա մը, պատուելու համար այս ծրագրին հիմնադիրները եւ Հ.Բ.Ը.Մ.-ի երկարամեայ օժանդակողներ Տիկին Ռիթա Պալեանը եւ անոր հանգուցեալ ամուսին Վարդգէս Պալեանը, ինչպէս նաեւ ծրագրին հովանաւորները: Ձեռնարկին մեծ թիւով ներկայ եղան անցեալ շրջաններու Ասպարեզային Փորձագիտութեան մասնակիցները:

Նիւ Եորքի Ամառնային Ծրագիրը հիմնուած է 1987-ին եւ ունի աճող ցանց մը մօտաւորապէս 900 շրջանաւարտներու աշխարհի շուրջ:

25 տարիներու ընթացքին, Նիւ Եորքի Ասպարեզային Փորձագիտութեան Ամառնային Ծրագիրը հիւրընկալած է մասնակիցներ 21 երկիրներէ, գրեթէ բոլոր արհեստավարժական դաշտերու մէջ եւ յառաջադէմ համալսարանական ուսանողներուն տուած է արժէքաւոր աշխատանքային փորձառութիւն, օգնելով անոնց որ հաստատ հիմքերու վրայ դնեն իրենց մասնագիտական յաջողութիւնը:



ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՇԵՍԱՎԱՐԺՆԵՐՈՒ ՇԵՏ

Նիւ Եորքի Ասպարեզային Փորձագիտութեան Ամառնային Ծրագիրը 1999-էն ի վեր գործակցութիւնը ընդարձակած է Մեծն Նիւ Եորքի Երիտասարդ Արհեստավարժներու Համալսարանին հետ: Ամենակարեւոր բաղադրիչը այս գործընկերութեան, ուսուցանելու ծրագիրն էր, մասնակից մը օժտելու ուսուցիչով մը, որ կ'աշխատի իր հետաքրքրութեան դաշտին մէջ: 2012-ին եւ 2013-ին ուսուցանողներն ու ուսանողները ղեկավարութեամբ մը գործեցին որպէս տիպար օրինակներ, յաճախ հանդիպումներ ունենալով ամուսն ընթացքին, անհատապէս կամ խումբերով, որպէսզի քննարկեն զանազան հարցեր, կապուած իրենց մասնագիտութեան դաշտերուն:



Հ.Բ.Ը.Մ.ի Երեւանի Ամառնային Ասպարեզային Փորձագիտութեան մասնակիցներ, Արաբկիրի Մանուկներու Հիւանդանոցի բժիշկներէն մէկուն ընկերակցութեամբ:

ԵՐԵՒԱՆԻ ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Երեւանի Ասպարեզային Փորձառութեան Ամառնային Ծրագիրը համալսարանական ուսանողներու կ'ընձեռէ մշակութային յայտագիր մը, հայրենիքի մէջ կարեւոր արհեստավարժական փորձառութեան կողքին: 2012-ի եւ 2013-ի ամառները ականատես եղան 56 շրջանաւարտներու յաւելումին հետզհետէ ստուարացող իր շարքերուն մէջ, **Գանատայէն, Պուկարիայէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Լիբանանէն, Ռուսիայէն, Սուրիայէն, Միացեալ Թագաւորութունէն եւ Մ. Նահանգներէն:** Հետեւեալ հաստատութիւններն ու կազմակերպութիւնները հիւրընկալեցին մասնակիցները, Ամերիա Պանքը, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, Ժամանակակից Փորձառական Արուեստի Հայկական Կեդրոնը, Արաբկիրի Բժշկական Կեդրոնը, Հայաստանի Մանուկներ Հիմնադրամը, Միվիլիթաս Հիմնարկութիւնը, Deem Communications, Grant Thornton, «Ոսկէ Ծիրան» Փառասօն, «Յետք» լրատուական կայքէջ, IDS Design Studio, RepatArmenia կազմակերպութիւն, Հայաստանի Հանրապետութեան Մարդու Իրաւունքներու Գրասենեակ, Հայաստանի Ազգային Ժողով, Ազգային Պատկերասրահ, ՄԱԿ-ի Զարգացման Գործակալութիւն, ԹՈՒՄՕ Կեդրոն, Սփիւռքի Նախարարութիւն եւ Մ. Ներսէս Հիւանդանոց:



Ուսանողները իրենց վեց շաբաթեայ կեցութեան շրջանին փացին սեփական կացարանի մը մէջ: Անոնք նաեւ մասնակցեցան մշակութային ձեռնարկներու, հանդիպեցան երիտասարդ ձեռնարկատերերու, ներկայ եղան հայրենի լեզուի եւ ազգագրական պարերու դասերու, այցելեցին յուշարձաններ եւ ծանօթացան Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի ծրագիրներուն:



2007-էն ի վեր Երեւանի Մասնագիտական Փորձառութեան Ամառնային Ծրագիրը կրցած է արժեքաւոր կապ մը հայթայթել ակադեմական ուսումի եւ արհեստավարժական աշխատանքի մէջ, առիթ տալով ուսանողներուն փորձարկել գործը մասնաւոր դաշտի մը մէջ, սորվեցնելով անոնց կարեւոր միջոցներն ու հնարքները, որոնք կրնան ձեւաւորել իրենց ապագան:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2012-ին Մոսկուայի Ասպարեզային Փորձառութեան Ամառնային Ծրագիրը իրար մօտ բերաւ երիտասարդ հայեր արհեստավարժական զարգացման ամառնային ծրագրի մը համար: Վեց մասնակիցներ առիթը ունեցան աշխատելու մեծ ընկերութիւններու մէջ, ինչպէս Ռուսական Դրամատուներու Ըկերակցութեան, Cigar Clan Magazine, Մոսկուայի Ախտաճանաչման Կեդրոնի եւ SCOLCOVO School of management-ի: Անոնք իրենց երեկոները անցուցին հանդիպելով հայ ձեռնարկատերերու հետ, խառնուելով տեղական համալսարանականներու եւ ներկայ ըլլալով դասախօսութիւններու: Քանի որ մշակութային ներթափանցումն ալ ծրագրին կարեւոր նպատակներէն մին էր, ապա մասնակիցները ներկայ գտնուեցան ռուսերէն լեզուի եւ հայկական պարի դասերու: Մասնակիցները նաեւ շրջապտոյտով մը այցելեցին Ս. Փեթերսպուրկ, ուր խումբը այցելեց Հերմիթաժի թանգարանը, Փեթերհոֆի Ամառնային պալատը, Պետրոս եւ Պօղոս ամրոցը եւ Ս. Իսահակ եկեղեցին: Յայտագրին մէջ մասնակիցներուն միացան Հ.Բ.Ը.Մ.-ի Ռուսիոյ գործընկեր, Մոսկուայի Հայ Երիտասարդ Արհեստավարժներու Կազմակերպութեան անդամները (SIVAM), որ մեծ դերակատարում ունեցած էր ծրագրի ընդարձակման մէջ: Ծրագրի սկիզբէն, SIVAM ցուցադրած էր ամենայն աջակցութիւն, հաղորդակցութիւններ եւ ակունքներ: Անոր կամաւորները 2012-ին օգնեցին մասնակիցները, որ շրջագային քաղաքին մէջ, օգնեցին որպէս տրվեցնողներ, թարգմանողներ եւ նաեւ որպէս ընկերներ:



Մոսկուայի Ասպարեզային Ամառնային Փորձառութեան Ծրագիրը իր վերջին ուսումնական շրջանը ունեցաւ 2012-ին:

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳԻՐ



2012-ի ամռան, Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստից Բաժանմունքը, Երաժշտական Հայաստան Ծրագրի իր անդրանիկ ելոյթը ունեցաւ, նախաձեռնութիւն մը ուղղուած երիտասարդ երաժիշտներու, որոնց առիթ տրուած էր մարզուելու եւ ելոյթ ունենալու Հայաստանի անուանի երաժիշտներուն հետ: Իր մեկնարկէն սկսեալ, ծրագիրը ի մի բերած էր տաղանդաւոր Հայ երգահաններ, երգիչներ եւ նուագողներ **Պուկարիայէն, Գանատայէն, Յունատանէն, Մուրիայէն եւ Մ. Նահանգներէն:** Յուլիսին եւ Օգոստոսին անոնք երեք շաբաթ դասեր առին երկրի կարգ մը լաւագոյն երաժիշտներէն եւ ներկայ եղան

մասնագէտներու դասերուն, որոնց նիւթերը կը տարածուէին Հայկական միջնադարեան երաժշտութենէն, մինչեւ Հայկական դասական երաժշտութիւն: Մասնակիցները նաեւ այցելեցին տեղական հիմնարկներ, ինչպէս Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոց, Գիւմրիի Երաժշտանոցը եւ Սայէաթ Նովա Երաժշտական Դպրոց եւ այցելեցին երկրի տեսարժան վայրերը: Աւարտին, անոնք ներկայացուցին Կալա Համերգ մը, հրաւերովը Արամ Խաչատուրեան Թանգարանին, ուր անոնք ցուցադրեցին իրենց տաղանդները:

«ՅԱԶՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ» ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիրը կը շարունակե՛ բարերար դեր կատարել, հայթայթելով դրական օրինակելի կերպարներ, ղեկավարություն և օժանդակություն Հարաւային Գալիֆորնիոյ մէջ ընկերային յոռի բարքերու հակամէտ Հայ պատանիներուն: 1980-ին 80 Յաջորդ Սերունդի ուսանողներ շրջանաւարտ դարձան այս ծրագրէն և 30 նոր մասնակիցներ և խորհրդատուներ ընդունուեցան, սկսելու համար խորհրդատուական նոր շրջան մը: Յաջորդ Սերունդը շարունակեց գործել դպրոցական շրջանակին և տեղական կազմակերպութիւններուն հետ: Յաջորդ Սերունդը նաև միացուց իր ուժերը Didi Hirsch Community Center-ին, Glendale Community College-ին և Glendale Healthy Kids-ին: Այս գործակցութիւնը հիմնուեցաւ WMCA-ի, YWCA-ի և Կլէնտլի ռատիկանական բաժնին հետ, ծրագրին արդէն գոյութիւն ունեցած գործընկերութեան հիման վրայ: 2013-ին, Յաջորդ Սերունդը մեծարուեցաւ Լոս Անճելըս Քաղաքին կողմէ Հայկական Յեղասպանութեան ռզեկոչման հանդիսութեան առթիւ, որ տեղի ունեցաւ Լոս Անճելըս-ի քաղաքապետարանի սրահին մէջ, իր բացառիկ օժանդակութեան համար Հայերուն և Լոս Անճելըսի մեծ համայնքին:

Հ.Բ.Ը.Մ-ի Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիրը Հարաւային Գալիֆորնիոյ տարածքին, Հայ երիտասարդութեան կը հայթայթէ զօրաւոր, հոգատար խորհրդատուներ, որոնք



կ'օգնեն անոնց որ յաջողութեամբ դիմակալեն պատանեկութեան մարտահրաւերները, գերազանց դառնան դպրոցի մէջ, դառնան պատասխանատու և ինքնաբար չափահասներ:

«ԿՈՐԻՁ» ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

2012-ին ԿՈՐԻՁ Առաջնորդութեան Ծրագիրը ունեցաւ իր չորրորդ տարեկան խորհրդաժողովը, որ իրար մօտ բերաւ երիտասարդ առաջնորդներ, որոնք բացառիկ ուսումնական և արհեստավարժական ենթահող ունին և զանոնք մարզեց, որպէսզի ներկայացնեն Սփիւռքի իրենց Հայկական համայնքները Եւրոպայի տարածքին: 2012-ի խորհրդաժողովը հաղորդակցութեան և տեղեկատուութեան նիւթերուն շուրջ դարձաւ, որու ընթացքին մասնակիցները սորվեցան ինչպէս ազդել լրատուամիջոցներուն վրայ, որպէսզի Հայկական հարցը դրուի միջազգային լուսարձակի տակ: Աշխատելով անուանի լրագրողներու կողքին, 22 մասնակիցները, - եկած **Հայաստանէն, Պեղծիքայէն, Պուկարիայէն, Ֆրանսայէն, Սպանիայէն, Գերմանիայէն, Ռումանիայէն, Թուրքիայէն, Միացեալ Թագաւորութենէն և Ուքրանիայէն**, - ռազմավարութիւններ պատրաստեցին հեռատեսիլային հարցազրոյցի համար և լրատուամիջոցներուն հետ կապուելու նպատակով:

2013-ին ԿՈՐԻՁ-ը տեղի ունեցաւ Պոլսոյ մէջ և կեդրոնացաւ Թուրքիոյ Հայ համայնքին դիմագրաւած դժուարութիւններուն վրայ: Չորսօրեայ սեմինարի ընթացքին, ԿՈՐԻՁ-ի 22 մասնակիցները քննարկեցին միջոցներ Հայկական ժառանգութիւնը պահպանելու համար Իսթանպուլի մէջ, յատկապէս ուսումի և լրատուամիջոցներուն ճամբով: Նախորդ



խորհրդաժողովները պարունակած են նիւթեր Եւրոպական Միութեան քաղաքացիութեան, ժողովրդավարութեան և քաղաքացիական ընկերութիւնը ամրացնելու և քարոզչական ռազմավարութեան մասին:

ԿՈՐԻՁ Առաջնորդական Ծրագիրը կը մարզէ երիտասարդ առաջնորդներ, որոնք կը ցուցադրեն բացառիկ ակադեմական կարողութիւն, ներկայացնելու համար իրենց Հայկական Սփիւռքը Եւրոպայի տարածքին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Համալսարանականներու Հաղորդակցական Ծրագիրը շարունակեց հաստատել եւ զօրացնել իր յարաբերութիւնը համալսարանական ուսանողներու հետ աշխարհի շուրջ: Հիւսիսային Ամերիկայի վրայ կեդրոնանալով, Համալսարանականներու Հաղորդակցական Ծրագիրը հիւրընկալեց դասախօսութիւններ Հ.Բ.Ը.Մ.-ի երիտասարդական ծրագիրներու, գործընկերութեամբ Հայ ուսանողներու ընկերակցութեանց, Columbia Համալսարանի, New York Համալսարանի եւ Գալիֆորնիոյ Համալսարանի տարբեր հիմնարկներու: Ձեռնարկներ տեղի ունեցան նաեւ Մ.Նահանգներու եւ Գանատայի Հ.Բ.Ը.Մ.-ի երկրորդական վարժարաններու եւ համայնքային կեդրոններու մէջ: Ակադեմական, արհեստավարժական եւ ընկերային զարգացման խթանհանդիսանալով իր ճիգին մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ի Համալսարանական Հաղորդակցական Ծրագիրը միացաւ այլ կազմակերպութիւններու, առիթներ ներկայացնելու համար հայ ուսանողներուն տարեկան Խորհրդատուական Ծրագրին, հիւրընկալութեամբ Ամերիկայի Հայ երկրաչափներու եւ գիտնականներու, Fordham համալսարանին մէջ: Ծրագիրը գործակցեցաւ նաեւ զանազան համայնքային կազմակերպութիւններու հետ որպէսզի մասնակցի հովանաւորելու շարք մը կրթական, մշակութային եւ յիշատակի ձեռնարկներ Նիւ Եորքի տարածքին: Աստուծոյ մէջ ներգրաւուած էր ցուցադրումը PBS-ի վաւերագրական Ֆիլմին The Armenian Genocide-ին եւ քննարկում մը արտադրիչ/բեմադրիչ Andrew Goldberg-ի հետ, եւ լուսանկարներու ցուցահանդէս մը վերնագրուած՝ «Լեռնային Ղարաբաղ, Սոււրբայիթի յիշողութիւններէն մինչեւ անկախ պետութիւն», ինչպէս նաեւ ֆիլմի մը ցուցադրումը, որ կը ներկայացնէր Հայ նորեկ եւ խոստմնալից բեմադրիչներ Ճէյ Սուրսուրեանի եւ Սարօ Վարժապետեանի գործը: 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի



Համալսարանականներու Հաղորդակցական Ծրագիրը տարածեց իր էլ-լրատուն, հայթայթելով հայ համալսարանականներուն եւ երկրորդականի ուսանողներուն նիւթեր եւ յօդուածներ, օգնելու անոնց յաջողութեան, միեւնոյն ատեն անոնց իրազեկ դարձնելով Հ.Բ.Ը.Մ.-ի գործունէութեան աշխարհի շուրջը:

Հ.Բ.Ը.Մ.-ի Համալսարանականներու Հաղորդակցական Ծրագիրը կը նպատակադրէ հաստատել եւ ամրացնել կապերը Հ.Բ.Ը.Մ.-ի հայ ուսանողական կազմակերպութիւններուն միջեւ աշխարհի տարածքին, խորհրդածողութիւններու եւ աշխատանքային նիստերու միջոցաւ, որպէսզի նպաստէ անոնց արհեստավարժական զարգացման:

ԱԿԱԴԵՄԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՄԲԱԻՈՐՈՒՄ



2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Ակադեմականներու Խմբաւորումը կազմակերպեց դասախօսութիւններ **Սոսկուա, Փարիզ, Լոնտոն, Նիւ Եորք** եւ **Երեւան**, ուսանողներուն ներկայացնելու համայնքը եւ աղբիւրներ հայ ուսանողներուն, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի զանազան ծրագիրներուն: 2013-ին կայքէջը ընդլայնեց իր հասողութիւնը եւ ընդարձակեց անդամագրութիւնը համալսարանական ուսանողներէն մինչեւ Հ.Բ.Ը.Մ.-ի ընդարձակ

կայքէջը, յատկապէս կեդրոնանալով շրջանաւարտից խումբեր ստեղծելու վրայ:

2011-էն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.-ի Համալսարանական Խմբաւորումը հայթայթած է ընկերային համացանցային ասպարէզ մը, հայ ուսանողներու համար, որպէսզի հաղորդակցին եւ օգնեն իրար իրենց ակադեմական նպատակներուն համար:

ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ





ԱՓՐԻԿԷ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ



Հ.Մ.Ը.Մ.-Նուպար Մարգարաշտի բացում՝ 9 Նոյեմբեր 2013ին:



2011-2012 ուսումնական տարեշրջանի Գահիրեի հայ աշակերտության պարգևատրում:

ԵԳԻՊՏՈՍ

ԳԱՀԻՐԷ՝ 2012-ին Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.-ը հրատարակեց արաբերեն թարգմանությունը պատմագետ ճորճ Պուռնուբեանի «Ամփոփ Պատմություն Հայ ժողովուրդի» գիրքին, մեծապես կարևոր աղբիւր մը Հայոց Պատմութեան: 2013-ին Մասնաճիւղը իրականացուց երկու տարուայ ծրագիրը, ստեղծելու մատենագիտութիւն մը եւ սկսաւ աշակերտական խումբները մը Հայ դասական երգիչներու գործերուն: Ձայնագրութիւնները հաւաքուած էին զանազան աղբիւրներէ եւ թուայնացուած էին mp3 ձևաչափով: Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.-ի «Օրհան» Մանկական Երգչախումբը նաեւ շարունակեց իր բեմական համերգային ելոյթները, հաճոյք պատճառելով Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ հայկական գաղութին, իրենց կենսունակ ներկայացումով: Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.-ը նաեւ շարունակեց իր ընկերային եւ բժշկական օժանդակութիւնները Եգիպտոսի հայ գաղութի կարիքաւոր անդամներուն, իր բժշկական խնամատարական ծրագրին, թոշակներու եւ նիւթական նուէրներու ճամբով, զորս ան կը տրամադրէ կարիքաւոր հայերուն, ուսումի, ընկերային բարօրութեան եւ առողջութեան նպատակով: 2013-ը նաեւ սկսանաւ եղաւ Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Մ.Ը.Մ- Նուպար մարզական ակումբի ֆութպոլի արդիական դաշտին:



Հ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի մասնաճիւղի Օրհան մանկական երգչախումբը՝ Ալեքսանդրիոյ մասնաճիւղին հետ համագործակցաբար կայացած ելոյթին, 2 Նոյեմբեր 2012:

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿ

ԱՂԵՔՄԱՆՆԵՐ

Երիտ. Գործ.

ԳԱՀԻՐԷ

Օրհան Մանկական Երգչախումբ

Բարեսիրական Ծրագիր

ՀԵՆՈՂՈՒՄ

Երիտ. Գործ.

ԵԹՈՎՊԻԱ

ԱՏԻՄ ԱՊԱՊԱ

ՀԱՐԱՆԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ՃՈՋԱՆՆԵՍՊՈՒՐԿ


ԿԻՂՐՈՍ

ԼԱՌԱՍՔԱ՝ 2012-ին Լաոնաքայի Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպեց ցուցադրություն մը զծագրուած համայնապատկերային քարտէսներու, պատրաստուած համաշխարհային անուանի քարտեսագիր Ռուբէն Արոյանի կողմէ, նոր Հայկական մշակոյթի կեդրոնին մէջ, որուն բացումը կատարուած էր 2011-ին: Ձեռնարկը կ'ընդգրկէր քսան քարտէսներ, Պետիինի, Լվովի, Մինսքի, Մոսկուայի, Վենետիկի եւ Երեւանի, այլ քաղաքներու կողքին: 2013-ին Մասնաճիւղը կազմակերպեց ճաշատեսակներու բարեփոխական տօնավաճառ մը, օժանդակելու համար կարիքատուր ընտանիքներու Կիպրոսի մէջ, որոնք տագնապներ կը դիմագրաւէին Կիպրոսի տնտեսական ճգնաժամին պատճառով:

ՆԻԿՈՍԻԱ՝ 2012-ին Նիկոսիոյ Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպեց դասախօսութիւն մը, ծննդաբան-սերնդաբան Քոնստանտինոս Տելթասի կողմէ, Կիպրացիներու ծննդաբանական-սերնդաբանական իւրայատկութիւններուն մասին: Անոր դասախօսութիւնը կեդրոնացած էր ծննդաբանական նմանութիւններուն Արեւելեան Սիջերկրականի երկիրներու ժողովուրդներուն, Կիպրոսի, Յունաստանի, Թուրքիոյ եւ Հայաստանի: Կիպրոսը նաեւ կայքն էր Համահայկական Խաղերու Կեդրոնական Ցանձնախումբին, որու առթիւ Նիկոսիոյ Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպած էր բարի գալուստի ընդունելութիւն մը: Ձեռնարկի ընթացքին Կեդրոնական Ցանձնախումբի անդամներուն միացաւ տեղւոյն Կիպրոսի Խաղերու Ցանձնախումբը եւ Կիպրոսի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանը:



Հ.Բ.Ը.Մ.ի Նիկոսիոյ Ատենապետ Վիզէն Քէթթիլեան (ձախ) Համբիկ Մարտիրոսեանի հետ, 16 Փետրուար 2012ին:



ԿԻՂՐՈՍ
ԼԱՌԱՍՔԱ
ՆԻԿՈՍԻԱ
Երիտ. Գործ.

ԻՐԱՆ
ԹԵՀՐԱՆ
Մարի Մանուկեան Վարժարան
Նուարդ Կիլպէնկեան Վարժարան
Փարոս Թատերախումբ
Երիտ Գործ.
ԵԱ

ԻՐԱՔ
ՊԱՐՏԱՅ
Հ.Ե.Ը.ի Օհան Երզնայի
Երջանիկ Թաճիրեան Ամառնային Դպրոց
Երիտ. Գործ.

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԿ
**ԱՄԱՆՈՍ/ԱՆԹԻԼԻԱՍ/ԱՄՊԵՏՆԵՐ/
ՊԷՅՐՈՒԹ/ՄՆԷԼ ՏԻԼ**
Հ.Ե.Ը. Արին Պարախումբ
Հ.Ե.Ը. Կրտսերաց Երգչախումբ
Հ.Ե.Ը. Վահրամ Փափագեան
Թատերախումբ
Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան
Տեմիրճեան Կեդրոնի Ամառնային Ճամբար
Տեմիրճեան Կեդրոնի Շաբաթօրեայ Դպրոց
Լեւոն Կ. Նազարեան Վարժարան
Դարուհի-Յովակիմեան Վարժարան
Դարմանատուն (2)
Երիտ. Գործ.
ԵԱ
ԶԱՀԼԷ

ՍՈՒՐԻՌՑ ՇՐՋԱՆԱԿ
ՀԱԼԷՊ
Արամ Խաչատուրեան Երաժշտական Դպրոց
Հ.Ե.Ը. Անդրանիկ Պարախումբ
Հ.Ե.Ը. Անդրանիկ Փողերախումբ
Հ.Ե.Ը. Պետրոս Ադամեան Թատերախումբ
Հ.Ե.Ը. Նուագախումբ
Հ.Ե.Ը. Կոմիտաս Մենեկային Նուագախումբ
Հ.Ե.Ը. Փունջ Մանկական Պարախումբ
Հ.Ե.Ը. Սպենդիարեան Երգչախումբ
Լ. Նաճարեան. Գ. Կիլպէնկեան Վարժարան
Սարեան Ակադեմիա
Երիտ. Գործ.
ԴԱՄԱՄԿՈՍ
Կիլլապի Կիլպէնկեան Վարժարան
Երիտ. Գործ

ԳԱՄԻՇԼԻ
Ախթամար Պարախումբ
Շաբաթօրեայ Վարժարան
Ամառնային Յերեկային Ճամբար
Երիտ. Գործ.
ՔԵՄԱՊ
Ամառնային Ճամբար
ԼԱՕՍՔՐԱ
ԵՄԳՈՒՊԻԷ

ԱՄԷ
ՏՈՒՊՈՑ
Տուպայի Երիտասարդ
Արիեստավարժներ



Հ.Բ.Ը.Մ.ի Պաղտատի Մասնաճիղի Մշակութային Ցանձնախումբը պատուեց իրաքահայ ջութակահար Նուպար Փշտիկեանը եւ անոր դուստր՝ արուեստագիտուհի Աստղիկ Փշտիկեան-Վարդանեանը, 8 Մարտ 2013ին:

ԻՐԱՔ

ՊԱՂՏԱՏ՝ 2013-ին Պաղտատի Հ.Բ.Ը.Մ.-ը պատուեց իրաքահայ ջութակահար Նուպար Փշտիկեանը եւ անոր դուստրը, արուեստագիտուհի Շաղիկ Փշտիկեան-Վարդանեան, Արուեստի եւ Գրականութեան Երեկոյ-ի մը ընթացքին: Ձեռնարկին կը մասնակցէր նաեւ Իրաքի Ազգային Սինֆոնիք Նուագախումբը, որ ներկայացուց երաժշտական կտորներ Արամ Խաչատուրեանէն: Մասնաճիղը նաեւ կը շարունակէ իր ամառնային բանակումները երախաներու համար:

ԼԻԲԱՆԱՆ

2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի Մասնաճիղը բաւական թիւով դրամահաւաքի ձեռնարկներ կազմակերպեց, ինչպէս սօփրանօ Յասմիկ Պապեանի համերգը եւ Լիբանանի Ֆիլիհարմոնիք Նուագախումբը Երաժշտութեան Շողշողուն Երեկոյ մը, կատարողութեամբ հանրաձանօթ արուեստագետ Միխայիլ Միմոնեանի եւ Վահան Մարտիրոսեանի, գործակցութեամբ Լիբանանի Մշակոյթի Նախարարութեան եւ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութեան, նշելու համար ծննդեան 110-ամեակը Արամ Խաչատուրեանի: «Խօսնակ» ամսագիրը կազմակերպեց շարք մը դասախօսութիւններ, որոնք ընդգրկեցին նիւթեր հայ գրականութենէն մինչեւ Հայկական Յեղասպանութեան ոգեկոչումը: 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի Մասնաճիղը տօնեց Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.Ի Էհրամճեան Կեդրոնի բացումը Ամանոսի թաղամասին մէջ, որպէս նոր մշակութային կեդրոն: Իսկ Հ.Բ.Ը.Մ.-ի Տեմիրճեան կեդրոնին մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի Մասնաճիղը կարեւոր յաւելում մը նկատեց կեդրոնի զանազան ձեռնարկներու մասնակիցներուն, յատկապէս Հայերէն լեզուի շաբաթօրեայ դպրոցին:

ՍՈՒՐԻՆ

ՀԱԼԷՊ՝ 2012-ին մտաւորապէս 500 հանդիսատես հաւաքուած էին Հ.Բ.Ը.Մ.-ի Գ. Յ. Նազարեան հանդիսասրահին մէջ, նշելու համար Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան հիմնադրութեան 80-ամեակը: Ձեռնարկը



Հայոց Յեղասպանութեան զոհերու ոգեկոչման յիշատակին առիթով, Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.Ի սկաւտներ եւ անդամներ մասնակցեցան Անթիլիասի Կաթողիկոսարանին մէջ տեղի ունեցած հաւաքին եւ Պուրճ Համուտէն Նահատակաց հրապարակ ընթացած երթին:



Լիբանանահայ Տիկնանց Օժանդակ Ցանձնախումբը Միջինքի ճաշկերոյթ մը կազմակերպեց 6 Մարտ 2013ին:

կազմում էր մշակութային հարուստ յայտագրով, որ կը յիշեցնէր Ընկերակցութեան նուաճումները անցնող ութ տասնամեակներու ընթացքին, տեսաերիզով, պարով, թատերական եւ երաժշտական բաժիններով: Հ.Բ.Ը.-ի Կոմիտաս Սենեկային Նուագախումբը, Հ.Բ.Ը.-ի Սպենդիարեան Երգչախումբը, Հ.Բ.Ը.-ի Անդրանիկ Պարբախումբը, Հ.Բ.Ը.-ի Ադամեան Թատերախումբը, բոլորն ալ իրենց մասնակցութիւնը բերին: Երեկոն նշանակուեցաւ նաեւ Հ.Բ.Ը.-ի Յուշամատենի լոյս աշխարհ գալով, խմբագրուած Միութեան Հալէպի Մասնաճիւղի Ատենապետ Յակոբ Միքայէլեանի եւ Զեփիտ Ղալիկեան-Թամերեանի կողմէ: Ամբողջ 2012 եւ 2013 տարիներու ընթացքին Հ.Բ.Ը.-ի Արամ Խաչատուրեան երաժշտանոցը շարունակեց իր ուսուցումը դաշնամուրի, ջութակի, վիոլայի, կիթառի, ֆլիւթի, քանոնի եւ փողային գործիքներու, դպրոցական տարեշրջանին եւ ամռան արձակուրդին: 2012-ին երաժշտանոցը ունեցաւ 180 աշակերտներ, որոնցմէ շատերը կը մարզուին դասատուներ դառնալու համար:



Հալէպի Սարեան Ակադեմիայի Ուսանողներ:



Հալէպի Պետրոս Ադամեան Թատերախումբը:



Հ.Բ.Ը.Մ. Հ.Բ.Ը.ի արանց պատեթալի մարզիկները իրենց մարզիչներուն հետ, 2012ին:



Հ.Բ.Ը.Մ.ի Սուրիահայրութեան Մարդասիրական Օգնութեան Հիմնադրամէն ստացուած օգնութիւնը Հալէպի Հ.Բ.Ը.Մ.ի անդամներ կը բաժնեն կարօտեալներուն:

ԵՒՐՈՊԱ



Մոֆիայի Հ.Բ.Միությունն Մենեկային Նուազախումբի Գարուն Մայիս ձագային երաժշտության համերգը մաս կը կազմէր Եւրոպական Փառատօնին, 19 Մայիս 2013ին:



ՄԻՍՏԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀՈՒԱՆՏԱ

ՊԵՂՃԻՔԱ

ԳԵՐՄԱՆԻԱ

ՄԻՍՏՐԻԱ

ՖՐԱՆՍԱ

ԻՏԱԼԻԱ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՌՈՒՍԱՍԱՆ



Հ.Բ.Մ.ի գործընկեր կազմակերպություն Հայր 2013ին նշեց իր 10-ամեակը:



Փյոլտիի Մասնաճիւղը կազմակերպեց իր 103րդ տարեդարձին նուիրուած բարեսիրական Կալա մը:

ՄԻՍՏՐԻԱ

ՎԻԷՆՆԱ
Կարօտ պարախումբ
ԵԱ

ՊԵՂՃԻՔԱ

ՊԵՂՃԻՔԱ ՊԵՂՃԻՔԱ
Inside Europe
(գործընկերություն)

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊՈՒԼԿԱՐԻԱ ՏՈՊՐՈՅ
Շաբաթօրեայ Դպրոց
ՀԱՍՔՈՎՕ

Շաբաթօրեայ Դպրոց
Երիտասարդաց
Թատերախումբ

ՓՈՒՎՏԻԻ

Երեբունի Երգչախումբ
Կանաչ ճամբար
Շաբաթօրեայ Դպրոց

Երիտ. Գործ.
ԵԱ

ՌՈՒՍԷ
Շաբաթօրեայ Դպրոց
ՄԻԼԻՍԹՐԱ

Շաբաթօրեայ Դպրոց
ՄԻԼՎԷՆ
Շաբաթօրեայ Դպրոց

ՍՈՏԻԱ
Ընկեր ճամբար
Մենեկային Նուազախումբ
Նոտ Պարախումբ
ԵԱ

ԵՍՄՊՈՒ
Առաջօտ Երգչախումբ
Շաբաթօրեայ Դպրոց

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐԶԱՆԱԿ

ԼԻՈՆ
Հայկական Ռատիօժամ
Երիտ. Գործ.
ՄԱՐՄԵՅԼ

Երիտ. Գործ.
ԵԱ
ՆԻՄ ՓԱՐՐՔ

Ակադեմիական
Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ
Դպրոց

Անազանգ Թատերախումբ
Քոլոնի տէ Վազանս
Կորիզ Առաջնորդութեան
Շրագիր

Գողթան Երգչախումբ
Նուպարեան Գրադարան
Երիտ. Գործ.
ԵԱ

ՄԷՆ ԵՍՄՈՆ/ՄԷՆ ԷԹԷՆ
ՎԱԼԱՆՍ
ՎԻԷՆ

Չորեքշաբթի Դպրոց

ԳԵՐՄԱՆԻԱ

ԿՈՒՆ

ԵԱ

ՖՐԱՆՔՏՈՒՐՔ

ՀԱՅՔ (գործընկերություն)

ՀԱՄԱՌՈՒՐԿ

ԵԱ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵՂՈՆԱԿԱՆ

ԱԹԷՆՔ

Արթաքի Գալիպեան

Վարժարան

Երիտ. Գործ.

ԵԱ

ԹԵՍՏՂՈՆԻԿԷ

Պարախումբ

ՀՈՒԱՆՏԱ

ԱՍԵՆՕ

ԵԱ

ՌՈՒՍԱՍԱՆ

ՍՈՍԿՈՒՍ

Ապարեգային Փորձառութեան

Շրագիր

SIVAM (գործընկերություն)

ՍՊԱՆԻԱ

ՊԵՐՍԵՆՈՆԱ

ACAB (գործընկերություն)

ՄԻՍՏԵԱԼ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԼՈՏՏՈՆ

ԵԱ

ԵՐՐՈՊԱՅԻ ԵՐԶԱՆԱԿԱՅԻՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Եւրոպայի Մասնաճիւղը կազմեց ձեռնարկներու իր ծրագիրը, նպատակ ունենալով Հ.Բ.Ը.Մ.-ի ձայնը լսելի դարձնել Եւրոպայի տարածքին եւ օժանդակել Եւրոպայի Հայկական համայնքներուն: Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.-ը իր ծրագիրներուն մէջ ունի ԿՈՒԻՉ Առաջնորդութեան Ծրագիրը, Երեցներու Առաջնորդութեան ցանցը եւ ձեռնարկներ կապուած Ցեղասպանութեան յիշատակութեան եւ Եւրոպական Միութեան դատի պաշտպանութեան: 2012-ին Armeniaica ծրագրի յաջողութեամբ ամբողջացուելէն ետք, որ նուիրուած է պահպանելու, թուայնացնելու եւ զարգացնելու Հայկական ճարտարապետութեան ժառանգութիւնը, ձեռնարկ մը կազմակերպուած էր Եւրոպական Խորհրդարանին մէջ եւ ցուցահանդէս մը ներկայացուած, որ հիւրընկալուած էր Եւրոպական Խորհրդարանի անդամ Միշէլ Ռիվասի կողմէ: Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.-ը նաեւ ջանաց զարկ տալ համագործակցութեան Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղերուն միջեւ եւ զարգացնել յարաբերութիւնները կազմակերպութիւններու եւ համայնքներու հետ, հաստատելով կապեր խումբերու հետ Լեհաստանի, Ռումանիոյ, Թուրքիոյ եւ Ուքրանիոյ մէջ:

Հ.Բ.Ը.Մ.-ի պատուիրակութիւն մը հրաւիրուած էր Ուքրանիա Փետրուար 2013-ին Արսէն Աւագովի կողմէ, որ խորհրդարանի անդամ է եւ Վերածնունդ Հիմնարկի նախագահը: Պատուիրակութիւնը Քիեւի մէջ տեսակցութիւն



Ձախէն աջ՝ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Երուանդ Զօրեան եւ Վազգէն Եագուպեան, Ուքրանիոյ խորհրդարանի անդամ Արսէն Աւագով, Հ.Բ.Ը.Մ.ի Ռազմավարական Խորհրդատու Յանձնախումբի անդամ Կի Մանուկեան եւ Աւագովի խորհրդական Տիգրան Աւագեան կը քննարկեն Ուքրանիոյ մէջ Միութեան Մասնաճիւղ հիմնելու ծրագիրները:

ՊՈՒԿԱՐԻՍ

ՓԼՈՎՏՏԻՒ՝ 2012-ին Փլովտիւի Հ.Բ.Ը.Մ.-ը ճաշկերոյթ մը կազմակերպեց Հրանդ Տինքի Երկու Մօտիկ Ժողովուրդ, Երկու Հեռու Դրացիներ պուկարերէնի թարգմանուած գիրքին լոյս ընծայման առթիւ: Հրանդ Տինք Հիմնարկութիւնը Փլովտիւի Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղին շնորհեց գիրքին պուկարերէնի թարգմանելու իրաւունքը, որ իրականացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Պուրկասի Պագլայեան Հիմնարկութեան ջանքերով: Տինքի այրին, Ռաքէլը, Փլովտիւ գնաց այս ձեռնարկին համար, որուն տեղեկատուութիւնը երեւաց պուկարական մամուլի էջերուն: 2013-ին Փլովտիւի Հ.Բ.Ը.Մ.-ը տօնեց իր երաժշտական համոյթին, «Էրեբունի»ի 40-ամեակը: Ձեռնարկը սկսաւ ցուցադրութեամբը վաւերագրական տեսաերիզի մը «Էրեբունի»-ի կտրած ճամբուն մասին 1978-էն մինչեւ ներկայ օրերը: 2013-ին դարձեալ, Մասնաճիւղը տօնեց իր 103-րդ տարեդարձը բարեսիրական Կալայով մը, Մանուկներ եւ Պատանիներ-Մեր Ապագան, որպէսզի դրամ հանգանակուի Պուկարիոյ մանուկներուն, Հայաստանի մէջ ամռան ծրագրին մասնակցելու համար:



Սեպտեմբեր 2013ին, Վարշաւայի մէջ Հ.Բ.Ը.Մ.ի հովանաւորութեամբ տեղի ունեցած աշխատաժողովի մը ընթացքին Եւրոպայի տարածքէն Արդիւնաբերողներ եւ իրաւագէտներ հայ առաջնորդներու ցանց մը ստեղծեցին:

ունեցաւ երկրի խորհրդարանի ղեկավարութեան, ինչպէս նաեւ Ուքրանիոյ Հայկական համայնքի ղեկավարներուն հետ: Ապրիլ 2013-ին Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.-ը առաջնորդեց Եւրոպական առաջին պատուիրակութիւնը, մաս կազմելու Հայկական Ցեղասպանութեան յուշահանդէսին Իսթանպուլի Թաքսիմ հրապարակին մէջ: Սեպտեմբեր 2013-ին խորհրդաժողով մը պարփակեց Վարշաւայի տարեց Հայ ղեկավարները եւ արհեստավարժները, հրաւերովը լեհ Սենաթոր Լուքազ Ապկարովիչի, քննարկելու համար Հայերու Եւրոպական Միութիւն գաղթի խնդիրները:

ՍՈՏԻՍ՝ 2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Սոֆիայի Սենեկային Նուագախումբը, տասնչորս ելոյթներ ունեցաւ, որոնցմէ տասներկուքը հովանաւորուած էին Սոֆիայի Քաղաքապետարանի Մշակոյթի բաժանմունքին կողմէ: Նուագախումբը հիւրընկալեց մենակատարներ Հայկ Արսէնեանը Մ. Նահանգներէն, Մարգիս Զաքարեանը Լոնտոնէն եւ Սոֆիա Մելիքեանը Սպանիայէն: 2012-ին Եւրոպական Հայկական Տասներորդ Խաղերը կայացան Սոֆիայի մէջ, տողը եւ աղջիկներու մրցակցութեամբ, նարտի, փետրագնդակի, պասքէթ պոլի, ճատրակի, ֆութպոլի, փինկ-փոնկի եւ վոլիպոլի մէջ: 2012-ը նաեւ նշեց մեկնարկը «Հայ Լեռ» ամառնային բանակում մը Փլովտիւի, Սոֆիայի եւ Ռուսէի երախաներուն համար:

ՖՐԱՆՍԱ

ՓԱՐԻԶ՝ 2012-ին Փարիզի Ալեք Մանուկեան Կեդրոնը եղաւ առանցքը գլխաւոր մշակութային ձեռնարկներու, լուսարձակի տակ առնելով Ղարաբաղի Հայկական պատմական համայնքը, ինչպէս նաեւ հայկական արուեստն ու գրականութիւնը: Պատմաբան Ճորձ Պուռնուրեան ներկայացուց իր գիրքը, «1823-ի Ռուսական հսկողութիւնը Ղարաբաղի Մարզին. Սկզբնական աղբիւր մը Ղարաբաղի ազգակազմութեան եւ տնտեսութեան 19-րդ դարասկզբին», ձեռնարկի մը ընթացքին, որ կազմակերպուած էր Փարիզի Հ.Բ.Ը.Մ.-ին կողմէ եւ ներկայացնողն էր Հ.Բ.Ը.Մ.-ի Նուպարեան Գրադարանի տնօրէն Ռէյմոնտ Գէորգեան: Փարիզի Հ.Բ.Ը.Մ.-ը նաեւ հիւրընկալեց մասնակիցները խորհրդածոյովի մը, «Հայկական Արուեստի Գանձեր, Փրկուած Յեղասպանութենէն» խորագրով, որ ղեկավարուած էր Երեւանի Պետական Համալսարանի արուեստի պատմութեան Փրոֆ. Եւ UNESCO-ի հայկական արուեստի պատմութեան նախագահ, Լեւոն Չուգասգեանի կողմէ: Տարուան ընթացքին ներկայացուցաւ նաեւ քսաներորդ դարու թրքահայ գրող Զաւէն Պիպէտեանի վեպին «Մրջիններու Վերջալոյսը» խորագրով գիրքը, իր թարգմանիչին Herve Georgelin-ի կողմէ: Յաջորդական 16-րդ եւ 17-րդ տարին ըլլալով, Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Մասնաճիւղը կազմակերպեց մէկշաբաթեայ արշաւ մը 24 ֆրանսահայ երիտասարդներու: Ուսանողները շաբաթը անցուցին դահուկելով Զուիցերիոյ սահմանին մօտ, ֆրանսական La Vallee Abondance գիւղաքաղաքին մէջ եւ զուարճացան շաբթ մը ժամանցներով, ինչպէս կենտրոնակ վիճաբանութիւն Հայկական ինքնութեան մասին, հայկական պարի դասեր, նաեւ տեղեկատուական նիստեր Հ.Բ.Ը.Մ.-ի համաշխարհային Ծրագիրներու մասին:

ԼԻՈՆ՝ 2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ը շարունակեց իր առաքելութիւնը խթանելով ներ-մշակութային երկխօսութիւնը թրքական եւ Հայկական համայնքներուն միջեւ, շաբթ մը մշակութային ծրագիրներով: Ձեռնարկները կ'ընդգրկէին դասախօսութիւն եւ քննարկում մը Հայկական-Թրքական հաշտեցման գծով, թուրք լրագրող եւ թատերագիր Sedef Ecer-ի կողմէ, որ հեղինակն է The Decendants թատերգութեան. համերգ մը Մեծ Պագար Խմբաւորում -ին կողմէ, որ կազմուած էր հայ, քիւրտ եւ թուրք նուագածուներէ, լուսանկարներու ցուցահանդէս մը վերնագրուած «Անատոլիայի Հայկական Գանձերը» եւ ցուցադրութիւնը Էրիք Նագարեանի «Պոլիս» ֆիլմին:

ՍԱՐԱՆԵՅԼ՝ 2012-ին Մարսելի Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպեց հանդիպում մը, որ ի մի բերած էր պատուիրակութիւններ ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղերէն: Հանդիպումի գլխաւոր նիւթն էր ռազմավարական ծրագիր մը տեղական ձեռնարկներուն ուղղուած, օժանդակութիւն Սուրիոյ Հայկական համայնքին, ձեռնարկներ Հայկական Յեղասպանութեան հարիւրամեակի առթիւ եւ Հայ երիտասարդութեան դերը Հայկական Սփիւռքի մէջ: 2013-ին ձեռնարկ մը կազմակերպեց մեծարելու համար Ֆրանսահայ բեմադրիչ Հենրի Վերնէյը (բուն անունով Աշոտ Մալաքեան), ուր հիւրընկալուեցան նաեւ դերասաններ Օմար Շերիֆ եւ Ճէրի Ներսէսեան, 150 հրաւիրեալներու կողքին, որպէս գնահատանք բեմադրիչի վաստակին:

ՎԱԼԱՆՍ՝ 2012-ին Վալանսի Հ.Բ.Ը.Մ.-ը տօնեց իր 80-ամեակը, կալա ճաշկերոյթով մը: Այս առթիւ Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահ Ալեքսի Կեովչեան, ֆրանսահայ քանդակագործ Թորոս Ռաստկէլեանին յանձնեց Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի Վկայագիրը, առ ի գնահատանք անոր տարիներու ծառայութեան ֆրանսահայ համայնքին: 2013-ին, պատմագետ Մաքսիմ Եաւէտեան դասախօսութիւն մը ներկայացուց, որուն վերնագիրն էր «Հայկական Արուեստը հասկնալու բանալի, Զարդարուեստի քերականութիւնը» հիմնուած հայկական զարդարուեստի չորս սիւներուն վրայ, ճարտարապետութիւն, գորգագործութիւն,



Փարիզի Մասնաճիւղը հիւրընկալեց Արցախի նախագահին եւ հայկական կազմակերպութիւններուն միջեւ 2013ին տեղի ունեցած հանդիպում մը: Զախէն աջ Արցախի բարերարներէն Հայկ Մաղաքէլեան, Հ.Բ.Ը.Մ.ի նախագահ Պերճ Մեղրակեան, Դեսպան Վիգէն Զիթեճեան եւ Արցախի նախագահ Բակո Սահակեան:



Էրիկ Նագարեանի Պոլիս ֆիլմի ցուցադրութիւնը Լիոնի մէջ:



Ֆրանսահայ ֆիլմի բեմադրիչ Հենրի Վերնէյի մեծարման Կալա-ընթրիք Մարսելի մէջ:

մանրանկարչութիւն եւ Խաչքար: Եաւէտեանի դասախօսութեան հետ առնչուած, Վալանսի Հ.Բ.Ը.Մ.-ը տարուայ վերջաւորութեան կազմակերպեց շուրջօրեայ դարընթացք մը Հայոց Պատմութեան եւ Հայկական Արուեստի:

ԳԵՐՄԱՆԻԱ

ՖՐԱՆՔՏՈՐԹ՝ 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի գործընկեր կազմակերպությունը HAİK-Deuch Armenischer Studentenclube. V. կազմակերպեց վալերական ֆիլմի մը առաջին ցուցադրությունը, Armin T. Wegner der fotograf des Genozids, ինչպես նաև համերգ մը, որ ելոյթ ունենալու համար ի մի բերած էր Cologne-էն Հայ մանուկներ եւ երիտասարդներ: HAİK-ը նաև մասնակցեցաւ Ֆրանքֆուրթի գիրքի ցուցահանդէսին հայկական տաղաւարով եւ կազմակերպեց

բարեսիրական համերգ մը Հայ դասական երաժիշտներու՝ Տիանա Սահակեանի, Աստղիկ Պակլայեանի, Դաւիթ Տոնոյեանի եւ Լուսինէ Խաչատրեանի մասնակցութեամբ: Համերգի հասոյթը տրամադրուեցաւ յատուկ հիմնադրամի մը, հիմնուած Գերմանիոյ Հայերու Կեդրոնական Յանձնախումբին կողմէ, Պեղինի մէջ Հայկական Կեդրոնական Գրադարան մը կառուցելու նպատակով:

ԻՏԱԼԻԱ

ՄԻԼԱՆՕ՝ 2012-ին Միլանոյի Հ.Բ.Ը.Մ.-ը տօնեց իր հիմնադրութեան 100-ամեակը: Առիթը ծառայեց նաև, որ Հ.Բ.Ը.Մ.-ի Եւրոպայի Մասնաճիւղը ժողով մը գումարէ, որուն ընթացքին անդամները քննարկեցին համաշխարհային երիտասարդութեան ծրագիրներն ու գործունէութիւնները Եւրոպայի, Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ: Մասնաճիւղը նաև ունեցաւ երկու գեղարուեստական յայտագիրներ Միլանոյի Հայ Տուն-ին մէջ, տօնելու համար իր յոբելեանը, բանաստեղծութեան ասմունք, իտալերէն եւ հայերէն լեզուով Սալրի Տարագճեանի մատուցմամբ եւ դաշնակի ունկնդրութիւն մը, կատարողութեամբ Նունէ Կարապետեանի: 2013-ին Միլանոյի Հ.Բ.Ը.Մ.-ը երեկոյեան ձեռնարկով մը ոգեկոչեց Հայկական Ցեղասպանութեան 98-րդ տարելիցը:



Հ.Բ.Ը.Մ. Միլանի Մասնաճիւղը մշակութային ձեռնարկը Մարտ 2013ին:



Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ.ը կը մասնակցի Ցեղասպանութեան ոգեկոչման :

ՀՈԼԱՆՏՍ

ԱԼՄԷԼՕ՝ 2013-ին Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ.-ը գործընկերութիւն մը կազմեց հոլանտական ոչ-կառավարական կազմակերպութեան PAX Kinderhulp Apeldoorn-հետ, որ օգնութիւն կը բաշխէ զրկանքի մէջ գտնուող երեխաներուն Հոլանտայէն դուրս: Անոնք միատեղ երեք շաբաթեայ պտոյտ մը կազմակերպեցին դէպի Հոլանտա հայ մանուկներուն, որպէսզի գիտելիքներ ունենան հոլանտական մշակոյթին եւ ընկերութեան մասին: Փետրուարին Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ.-ը հանգանակութեան բարեսիրական ձեռնարկ մը կազմակերպեց Հայ մանուկներուն եւ PAX Kinderhulp Apendoom-ի համար: Հանդիսութեան մասնակցեցան Հ.Բ.Ը.Մ.-ի անդամներ, ինչպէս նաև Հոլանտայի ընդարձակ հայկական զարուքի անդամներ:

ՍՊԱՆԻԱ

ՊԱՐՄԵՆՈՆԱ՝ 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի գործընկեր կազմակերպությունը, Asociacion Cultural Armenia de Barcelona (ACAB) կազմակերպեց Հայկական ֆիլմերու փառատօն մը, վերանորոգեց իր մշակութային Կեդրոնը, Հայ Տուն-ը, ցուցակագրեց իր գրադարանի գիրքերը, մասնակցեցաւ Համահայկական Կրթական խորհրդածոյովին եւ կազմակերպեց դասախօսութիւն մը Հայաստանի անկախութեան 21-րդ տարեդարձին առիթով: 2013-ին ACAB-ի պատուիրակութիւն մը ճամբորդեց Ժընև, մաս կազմելու Եւրոպական- Հայկական Խաղերուն: Երկու տարիներուն ընթացքին ACAB շարունակեց իր Հայկական պարի եւ լեզուի դասընթացները մանուկներու համար, ինչպէս նաև երաժշտութեան դասերը, ուր աշակերտները կը սորվին տուտուկ նուագել:



Պարսելոնայի ACAB Հայկական Մշակութային Միութեան անդամներ:

ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԼՈՆՏՈՆ՝ 2012-ին եւ 2013-ին Լոնտոնի Հ.Բ.Ը.Մ.-ը եւ Լոնտոնի Երիտասարդ Արհեստավարժները գործակցեցան երիտասարդ Հայ երաժիշտներու հետ տարեկան դասական համերգի կազմակերպման նպատակով: 2012-ին համերգը ներկայացուց սրնգահար Նայրի Ագեգեան, դաշնակահար Նազիկ Ագեգեան, թէնոր Սիփան Յակոբեան, երգչուհի Թերեզա

Գեորգեան, ջութակահար Անի Կարապետեան եւ դաշնակահար Կարազդատ Խաչատրեան, որոնք, ի միջի այլոց, ներկայացուցին կտորներ Հայտընէն, Պապաջանեանէն, Պօրնէն, Կուփտասէն եւ Փրոքոֆիէէն: Համերգին զեղարուեստական ղեկավարն էր Սարգիս Զաքարեան:


ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ




Հ.Բ.Ը.Մ.ի Ամերիկայի Արեւմտեան Շրջանի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբի անդամները, որոնք 2013ին կազմակերպեցին տարեկան Կալա մը հանգանակելով 125,000 տողար երիտասարդական ծրագիրներու ի նպաստ:



Հ.Բ.Ը.Մ.ի Համաշխարհային Խաղերը տեղի ունեցան Լոս Անճելէսի մէջ 2012ին:



2013ին, Հ.Բ.Ը.Մ.ի երկարամեայ անդամ Յակոբ Ալթունեան Թորոնթոյի մէջ հրատարակեց երկու գիրք:



Միութեան Կեդրոնական գրասենակը 2012ին կազմակերպեց Թաներ Աքչամի նոր գիրքի շնորհանդէսը:

ԳԱՆԱՏԱ ՍՈՆՔԻՔԱՆ

Ալէք Մանուկեան Վարժարան Հայ-գանատական Քաղաքական Հարցերու Յանձնախումբը Ոսկեայ Տարիքի Յանձնախումբ Ասպարեզային Փորձառութեան Ծրագիր Մանուէլ Քէսեան Հայագիտական Դասախօսութիւններ: Փողերախումբ Համալսարանականներու Հաղորդակցական Ծրագիր Երիտ. Գործ. ԵԱ **ՔՈՐՈՆՔՕ** Երիտ. Գործ. Երիտասարդաց երգչախումբ ԵԱ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՇԻՔՍԿՕ, ԻԼԻՒՆՈՑ

Միսակ Յ. Վարժապետեան Շարափօրեայ Դպրոց ԵԱ **ԳԼԻՎԼԵՏ, ՕՉԱՅՈ** Շարափօրեայ Դպրոց **ՏԻՔՐՈՑԻՔ, ՄԻՇԻՎԸ** Ալէք եւ Մարի Մանուկեան Վարժարան Երիտ. Գործ. **ՀԻՒՄՔԸՆ, ԹԵՔՄՍԱՍ** **ՆԻՒ ԻՆՎԻԼԵՏ ՄԱՍՆԱՃԻՐՈՒ ՓՐՈՎԻՏԸՆՍ, ՐՈՏ ՄՅԸԼԵՏ** ԵԱ **ՆԻՒ ԵՈՐՔ** Կեդրոնական Գրասենակ Անդրանիկ Պարախումբ Նուպար ճամբար FOCUS Յանձնախումբ Ասպարեզային Փորձառութեան

Ծրագիր Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբ ՄԱԿ Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբ Համալսարանականներու Հաղորդակցական Ծրագիր ԵԱ **ՖԻԼԱՏԵԼՅԻՄ, ՓԵՆՄԻԼՎԱՐԻՄ** ԵԱ **ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ ԳԱԼԻՖՈՐԻՄ** ԵԱ **ՈՒՆԵԻՆՎԵՐՍ** ԵԱ **ԱՐԵՆՍՏԵԱՆ ՇՐՋԱՆԱԿ ԱՄՊԵՏԵՐ** **ԿԵՆՏԵՅԻ/ՓԱՍՏԱՏԵԱ** Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիր Հայ Հերոսներ Փողերախումբ

Գրիգոր Սաթամեան Թատերախումբ Սարղարապետ Պարախումբ Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան Երիտ. Գործ. ԵԱ **ՖՐԷՋՆՕ ՀԱՅ ԿԻՆ** **ՕՐԷԼՔ ՔԱՌՆԵԹ** Շարափօրեայ Դպրոց ԵԱ **ՍԱՆ ՏԻՔԿՕ** **ՍԱՆ ՖԵՐԱՆՏՕ ՀՈՎԻՏ/ԱՄՊԵՏԵՆԵՐ** Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան Երիտ. Գործ. ԵԱ **ՄԻՒՔՈՆԻ ՀՈՎԻՏ**

ԳԱՆԱՏԱ

ՄՈՆԹՐԷԱԼ՝ 2012-ին, Մոնթրեալի Հ.Բ.Ը.Մ.-ը գործընկեր դառնալով Զօրեան Հիմնարկին եւ այլ հայկական կազմակերպություններու հետ, կազմակերպեց Վահագն Տատրեանի եւ Թանէր Ազաւի նոր գիրքին, *Judgement at Istanbul: The Armenian Genocide Trials*-ի հրատարակումը: Գիրքը արդիւնքն էր 11 տարիներու ուսումնասիրութեանց եւ առաջին գիրքն էր Հայկական Ցեղասպանութեան մասին, որ գրուած էր թուրք եւ հայ գիտաշխատողներու հեղինակակցութեամբ:

Մասնաճիւղը նաեւ շարունակեց Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուէլ Քօստեան Հայագիտական դասախօսութեանց շարքը, իր ամպիոնին աւելցնելով անուանի ատենախօսներ, արուեստի եւ մշակոյթի բնագաւառին մէջ: 2013-ին Մոնթրեալի Հ.Բ.Ը.Մ.-ը հիւրընկալեց դաշնակահար Տիգրան Համասեանը, ելոյթի մը համար Հ.Բ.Ը.Մ.-ի Ժիրայր եւ Էլիս Տերիշեան հանդիսասրահին մէջ, համերգի մը ընթացքին, որ կազմակերպուած էր Մոնթրեալի Հ.Բ.Ը.Մ.-ի Մշակութային Յանձնախումբին կողմէ: դաշնակահարը ներկայացուց ճազ երաժշտութեան կտորներ, ինչպէս նաեւ կտորներ Կոմիտաս Վարդապետի հեղինակութիւններէն:

ԹՈՐՈՆԹՕ՝ Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.-ը միշտ ալ յատուկ հակում ունեցած է մշակութային ձեռնարկներու: 2012-ին տեսողական արուեստագիտուհի Նիրի Մելքոնեան ներկայացուց իր ցուցահանդէսը «Շէշտուած ֆեմինիստ. Հայ կանայք եւ արուեստը ներկայացումէն մինչեւ ինքնաներկայացում» խորագրով, Թորոնթոյի Մասնաճիւղին համար: Միտնիի Հ.Բ.Ը.Մ.-ի Վահրամ Փափազեան թատերախումբը ներկայացուց գանատական իր անդրանիկ ելոյթը, «Ինքնակոչ Երաժիշտը» եւ տեսողական արուեստագիտուհի Ալինա Սահակեան ցուցադրեց իր աշխատանքը, որ հին թաղիքագործութեան մասին էր, Հ.Բ.Ը.Մ.-ի Ալէք Մանուկեան Կեդրոնին մէջ: 2013-ին Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.-ը կազմակերպեց վիպագիր Նեսի Գրիգորեանի *All the light there was* պատմական գիրքին ներկայացումը, որ Նացիներու կողմէ Փարիզի գրաւման օրերուն, Հայ ընտանիքի մը պատմութիւնն է: Թորոնթոյի Հայկական Ընկերակցութեան հետ գործընկերութեամբ բեմ բարձրացուցին եօթը պատկերներ «Յովհաննէս Թումանեանի Հեքիաթները» վերնագրով, բեմադրութեամբ Վարազ Ստեփանեանի, ինչպէս նաեւ հովանաւորեց դասախօսութիւն մը դաշնակահար-երաժշտագէտ Շահան Արծրունիի կատարմամբ, Կոմիտաս Վարդապետի մասին: 2012-2013 տարիներու ընթացքին Թորոնթոյի Հ.Բ.Ը.Մ.-ը հայերէն լեզուի դասընթացքներ կազմակերպեց մեծահասակներու համար: Կազմակերպեց նաեւ տարեկան տաղանդի ցուցադրութիւնը եւ շարք մը երիտասարդական յայտագիրներ մանուկներու եւ պատանիներու համար, պատքէթ պոլի տողոց եւ աղջկանց եօթը խումբերու կազմակերպման կողքին:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԳԱԼԻՖՈՐՄԱ

ԱՐԵՆՍԵԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Ամերիկայի Յանձնաժողովը \$ 125,000 հանգանակեց իր տարեկան կալա ճաշկերոյթի ընթացքին, տեղոյն երիտասարդական ծրագիրներուն համար: Երիտասարդական ծրագիրները կը պարունակեն սկաուտիզմ, Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Օրագիրը, մարզական խումբեր եւ փողերախումբեր: Հանդիսաւոր ճաշկերոյթը նաեւ պատուեց Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի փոխ նախագահ Սեմ Միմոնեանն ու իր Տիկինը, Միլվան, Հայաստանի մէջ անոնց կրթական նախաձեռնութիւններուն համար: Միմոնեանները հիմնադիրներն են Երեւանի Ստեղծագործական Ճարտարագիտութեան Tumo Կեդրոնին: Ճաշկերոյթի ընթացքին, Հ.Բ.Ը.Մ.-ի ցկեանս Պատուոյ Անդամի Կոչումով մեծարուեցաւ նաեւ Հերմինէ Ճանոյեանը, Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Մասնաճիւղի Յատուկ Իրադարձութիւններու Յանձնախումբի նախագահուհին, իր եռեսնամեայ ծառայութեանց համար:



14 Մարտ 2013ին, Մոնթրեալի Մասնաճիւղը ճաշկերոյթ մը կազմակերպեց շնորհակալութիւն յայտնելու իր աջակիցներուն եւ կամաւորներուն:



26 Յունիս 2013ին, Նեսի Գրիգորեան Թորոնթոյի Ալէք Մանուկեան Կեդրոնին մէջ ներկայացուց իր *All the Light There Was* գիրքը:



Փաստեանայի Մասնաճիւղը հիւրընկալեց Հայկական Ժամանակակից Արուեստը ցուցահանդէսը, 2013ին:

ԿԼԵՆՏԵՑԻ/ՓԱՍՏԵՆԱ՝ 2013-ին Կլենտել-Փաստենայի Հ.Բ.Ը.Մ.-ը ցուցահանդես մը կազմակերպեց «Ժամանակակից Հայկական Արուեստ 2013» խորագրով, Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնին մէջ, Փաստենա, Գալիֆորնիա: Ցուցահանդէսը կը ներկայացնէր 14 Հայ արուեստագէտներ, որոնք գործեր ցուցադրեցին իւղանկարով, խառն նիւթերով, նաեւ լուսանկարներ եւ քանդակներ: Արուեստագէտները կը ներկայացնէին Հայաստանը, Լիբանանն ու Մեքսիկան, ինչպէս նաեւ Մ, Նահանգները: Ցուցադրուած էին գործեր Հերմինէ

Տէմիրճեան-Տէմիրոյէն, Ֆելիքս Եղիազարեանէն, Գագիկ Ղազանճեանէն, Ռուբէն Գրիգորեանէն, Մանուէլ Կիրակոսեանէն, Սարգիս Համալպաշեանէն, Սուրէն Խորէնեանէն, Սարատ Սարգարեանէն, Տիգրան Մարուլեանէն, Գարլոս Սայատեանէն, Լիլիթ Սողոմոնեանէն եւ Կայծ Վանիկեանէն, ինչպէս նաեւ քանդակներ Տիգրան Էքիզեանէն եւ լուսանկարներ Փիթըր Կարապետեանէն: 40 արուեստի գործեր վաճառուեցան ձեռնարկի ընթացքին:



Ամերիկահայ տաղանդաւոր գեղանկարչուհի Սիրուն Երեցեանի գործերը զարդարեցին Հ.Բ.Ը.Մ.Հ.Ե.Ը.Ի Քանոկա Փարքի Նագարեան Կեդրոնի պատերը:

ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ-ՄԱՆ ՖԵՐՆԱՆՏՕ ՀՈՎԻՏ՝ 2012-ին եւ 2013-ին Լոս Անճելոսի Ման Ֆերնանտո Հովիտի Հ.Բ.Ը.Մ.-ը դասախօսութիւններ եւ զանազան ձեռնարկներ կազմակերպեց: Այս շրջանին Մասնաճիւղը դասախօսական ձեռնարկ մը կազմակերպեց Տիգրանակերտի վերանորոգուած Մ. Կիրակոս Եկեղեցույ օժման մասին. Ցուցահանդէս մը տեսողական արուեստագիտուհի Սիրուն Երեցեան Lost And Found In Armenia

ֆիլմի ցուցադրութիւն եւ ներկայացումներ, Հայերու ներդրումը Ամերիկեան մշակոյթին եւ Հայկական Ցեղասպանութեան պահանջատիրութիւնը նիւթերով, Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանին մէջ: Մասնաճիւղը շարունակեց իր կեդրոնացումը աթլէթիզմի վրայ, կազմակերպելով յաղթանակի խրախճանք մը Հ.Բ.Ը.Մ.-ի Համաշխարհային Խաղերուն առթիւ, պասքէթպոլի ակադեմիա մը եւ կանանց վոլէյպոլի մրցաշարք մը:



Ասպետներու 10-ամեակի հանդիսութիւնը 2 Մարտ 2013ին:

Հ.Բ.Ը.Մ. ԱՍՊԵՏՆԵՐ՝ 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետները հիւրընկալեցին Էտուարտ Ճերէճեանը, դիւանագէտ եւ Ամերիկայի նախկին դեսպան Սուրիոյ եւ Իսրայէլի մէջ, որպէս «Երեկոյ մը Մտաւորականի մը հետ» շարքին մէկ ձեռնարկը: Ճերէճեանի խօսքը կեդրոնացաւ Արաբական աշխարհի ապստամբութեանց վրայ, թուրքիոյ դերը տարածաշրջանին

մէջ եւ հայերու ապագան Միջին Արեւելքի մէջ: 2013-ին խումբը տօնակատարեց իր 10-ամեակը: Հ.Բ.Ը.Մ.-ի Ասպետները միջավայր մըն է, ուր հայեր կը հաւաքուին քննարկելու համար առկայ խնդիրները Ամերիկահայոց եւ մասնակցելու համար մշակութային, ընկերային եւ մարդասիրական ձեռնարկներու, Հայկական համայնքը հարստացնելու համար:

ՀԱՅ ԿԻՆ ՑԱՆՁԱՆԱՄՈՒՄԲ՝ 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին-ը բացումը կատարեց յոթ կանանց երկու կեդրոններու Հայաստանի մէջ: Նորա Ինձիճեան Յղի Կանանց Կեդրոն Եղվարդի մէջ եւ Արշակունի Դաւիթեան Յղի Կանանց Կեդրոն Երեւանի մէջ: Յղի կանանց կեդրոնները Եղվարդի եւ Երեւանի միացան Թալինի եւ Վանաձորի կեդրոններուն: 2012-ի եւ 2013-ի շրջանին Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին-ը կազմակերպեց երեք խորհրդաժողովներ Հ.Բ.Ը.Մ.-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնին մէջ, Փաստտենա, Գալիֆորնիա: Մայիս 2012-ին Մարմէն Քէշիշեան, Վիրճինիա Կիւլետերեան, Սինթիա Քոսայեան եւ Եոնիկ Քէշիշեան մասնակցեցան կլոր սեղանի մը քննարկման, նիւթ ունենալով «Երիտասարդութիւնը եւ Գոհացումի փնտրութիւնը»: Նոյեմբեր 2012-ին Ռաշել Կոշկարեան ներկայացուց դասախօսութիւն մը «Թուրքիա եւ Հայերուն Յիշողութիւնը» խորագրով: Նոյեմբեր 2013-ին Պայծիկ Արապեան-Գալայճեան, Գործադիր քարտուղար Թէքէան Մշակութային Միութեան, կազմակերպեց խորհրդաժողով մը Մ. Նահանգներու եւ Միջին Արեւելքի Հայկական համայնքներու տարբերութիւններուն մասին: Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին Երիտասարդ Շրջանակն ալ շարունակեց մեծնալ: Յանձնախումբը երկու թիւեր հրատարակեց իր Հայ Կին պարբերաթերթին եւ կազմակերպեց երկու համագումարներ Պրոպէնքի Woodbury University-ին մէջ, Գալիֆորնիա: «Խորհրդապաշտութիւնը Նկարչութեան, Ճարտարապետութեան եւ Գծանկարներու մէջ» 2012-ին եւ «Նոհանոց, մշակոյթի մը դեսպանը. Ինչպէս կրնայ Ճաշը

ներկայացնել մշակոյթ մը եւ անոր ժողովուրդը», 2013-ին: Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին-ը տօնեց իր քսանամեակը Արեւմտեան Թեմի, Պրոպէնքի Ս. Լեւոն հայկական եկեղեցույ մէջ 2013-ին: Հանդիսութիւնը նուիրուած էր Հայ ժողովուրդի վերապրումին: Յայտագիրը կ'ընդգրկէր ասումնք Պարոյր Մեակի բանաստեղծութիւններէն: Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին-ը հիմնուած է 1994-ին Լոս Անձելոսի մէջ, նպատակ ունենալով օգնել եւ ներուժ տալ հայ կնոջ Հայաստանի եւ Սփիւրքի մէջ, ուսումնասիրութեան, կրթութեան եւ իրաւապաշտպանութեան ճամբով:



Հայ Կին Յանձնախումբի ձեռնարկը՝ «Ամերիկահայ գաղութը պէտք է վերաբարձրէ Միջին Արեւելքի յաջողութիւնները» նիւթին շուրջ:

ԼԱՍ ՎԵԿԱՍՄ՝ 2013-ին հիմնուեցաւ Լաս Վեկասի ՀԲԸՄ-ը, ղեկավարութեանը Մասնաճիւղի Ատենապետ Վագրիկ Մակարեանի: Հիմնադրութեան տարուան մէջ Մասնաճիւղը

կազմակերպեց կալա-ճաշկերոյթ մը, ուր ցուցադրուեցաւ միջազգայնօրէն ճանաչում գտած երգիծական ներկայացում մը Գրիգոր Սաթամեանի կատարողութեամբ:.

ՇԻՔԱԿՕ՝ 2012-ին Շիքակոյի Հ.Բ.Ը.Մ.-ը տօնեց իր հիմնադրութեան 100-րդ տարեդարձը: Այս առթիւ Մասնաճիւղը յայտարարեց հիմնադրութիւնը Գոյումճեան-ՀԲԸՄ/Շիքակոյի Հայկական Գեղարուեստական Փառատօնին, շարունակուող շարք մը մշակութային ձեռնարկներու, Շիքակոյի հայկական համայնքին համար, որոնք կը պարունակէին դասախօսութիւններ, համերգներ, թատերական

ներկայացումներ եւ ցուցահանդէսներ: Շիքակոյի Հ.Բ.Ը.Մ.-ականները գործակցեցան Շիքակոյի Համալսարանին հետ, կազմակերպելու ձեռնարկներ, ներկայացնելու համար հայ արուեստագէտներ տեղւոյն համայնքին: Հարիւրամեակի տօնակատարութեան յայտագրին մէջ փայլեցաւ «Ձուլալ» Եռեակը, կանացի երգեցողական համոյթ մը, որ ներկայացուց ասանդական հայկական ազգագրական երաժշտութիւն:

ՆԻՒ ԻՆՎԻԼՆՏԻ ՄԱՍՆԱՃԻՂ՝ 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Ինվընտի Մասնաճիւղը կազմակերպեց համերգ մը, օժանդակելու համար երիտասարդական ծրագիրներուն Պոսթոնի շրջանին մէջ: Համերգը, որ կազմակերպուած էր գործակցութեամբ Հ.Բ.Ը.Մ.-ի Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու

Յանձնախումբին, ներկայացուց Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի կրթաթոշակ ստացողները, որոնք ներկայացուցին դասական եւ հայկական երաժշտական գործեր Խաչատուրեանէն, Մենտելսոնէն, Ռախմանինովէն եւ ուրիշներէ: Ձեռնարկի ընթացքին հանգանակուեցաւ 60,000 ամերիկեան տոլար:

ՆԻՒ ԵՈՒՔ՝ 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական գրասենեակը Նիւ Եորքի մէջ կազմակերպեց Թաներ Ագչամի «Երիտթուրքերու Ոճիւղը Մարդկութեան Դէմ. Հայկական Յեղասպանութիւնը եւ Էթնիք մաքրագործումը Օսմանեան Կայսրութեան Մէջ» գիրքին շնորհահանդէսը, ինչպէս նաեւ քոքթէյլ հիւրասիրութիւն մը, Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի բաժանմունքի բացման առթիւ: 2013-ին Կեդրոնական Գրասենեակը նշեց Դարաբաղի Մշակութային Ժառանգութիւնը, յիշատակի յատուկ ձեռնարկի մը ընթացքին, «Դարաբաղը. Մումկայիթի Յիշողութիւններէն, մինչեւ Անկախ Պետութիւն», Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Գրասենեակին մէջ: Երեկոյին ցուցադրուեցաւ նաեւ «Մումկայիթ, Մովորական Յեղասպանութիւնը, Փետրուար, 1988» վաւերագրական ֆիլմը, ինչպէս նաեւ լուսանկարներու հաւաքածոյ մը, նախապատերազմի շրջանէն, ընթացքին եւ պատերազմէն ետք: Տարուայ վերջաւորութեան Մասնաճիւղը կազմակերպեց Մէթիու Գարանեանի Armenia and Karabakh, The Stone Mountain travel Guide, Ռոճըր Քիւփլեանի War Gods եւ Քրիս Պոհձալեանի The Light In The Ruins գիրքերուն շնորհահանդէսը:



Ռոճեր Քիւփլեան ներկայացուց իր «Պատերազմի Աստուածը» գիրքը Նիւ Եորքի Կեդրոնական Գրասենեակին մէջ, 27 Յունիս 2013ին:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ



Մոնթեվիդեոյի Հ.Բ.Ը.Մ.ի Նուպարեան-Մանուկեան Վարժարանի 40-ամեակը:



Հեյո Պալոբեան արժանացաւ Տարուան Սարդը պատուանունին, 2012ին:

ԱՐԺԱՆԹԻՆ ՊՈՒՔԼՈՍ ԱՅՐԷՄ

Շարժանկարի Բարեկամներ Քոլոնիա տէ Վագանսիոնէս Գրիգոր Մաթամեան Թատերախումբ Մարի Մանուկեան Վարժարան Երիտ. Գործ. ԵԱ

ԳՈՐՏՈՊԱ

Արարատ Պարախումբ Քոլոնիա տէ Վագանսիոնէս Օիրանի Նուագախումբ Երիտ. Գործ.

ՊՐԱՋԻԼ ՄԱՆ ՓԱՌԻՕ

Երիտ. Գործ. ԵԱ

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ ՄՈՆԹԵՎԻՏԵՕ

Երեւան 50 Նուագախումբ Կռունկ Երգչախումբ Նուպարեան-Մանուկեան Վարժարան Երիտ. Գործ.

ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒՔԼՈՍ ԱՅՐԷՄ՝ 2012-ին Պուէնոս Այրէսի Հ.Բ.Ը.Մ.-ը հիմնեց «Գրիգոր Մաթամեան» Թատերախումբը, որ առաջին անգամ ներկայացուց «Հայրս Ո՛վ է» թատերգութիւնը, որ հայերէն տարբերակն է Ray Cooney-ի «It Runs in the Family»-ին: Թատերախումբի հիմնադրութեան զաղափարը ծագեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պուէնոս Այրէսի Մարի Մանուկեան հիմնարկին եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Գալիֆորնիոյ Մանուկեան Տեմբրճեան վարժարանին տարեկան փոխանակումի Ընթացքին: 2013-ին Մասնաճիւղը կազմակերպեց Պուէնոս Այրէսի Հայկական Փառատօնը գործակցաբար Պուէնոս Այրէսի քաղաքապետարանին, ներկայացնելով հայկական ճաշատեսակներու տաղաւարներ, տեղացի եւ այցելու երգի-պարի համայնքներ եւ ի պատիւ Արամ Խաչատուրեանին, Banda Sinfonica de la ciudad de Buenos Aires: Միեւնոյն տարուան մէջ Պուէնոս Այրէսի Հ.Բ.Ը.Մ.-ը նոյնպէս հրամցուց համերգ մը, առ ի մեծարանք Կոմիտաս Վարդապետի:



Ստեպո Նովայի ծննդեան 300-ամեակի տօնակատարութիւն, 4 Սեպտեմբեր 2012:

Համերգի ամբողջ հասոյթը տրամադրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Սուրիոյ մարդասիրական օգնութեան հիմնադրամին: Մասնաճիւղը նաեւ շարունակեց իր կեդրոնացումը մարմնամարզանքի վրայ, հիւրընկալելով ամառնային եւ ձմեռնային մարզական խաղերու բանակումները, որոնք գրաւեցին աւելի քան 200 երէխաներ, ամբողջ տարուայ ընթացքին մարզական մրցումներու կողքին:

ԳՈՐՏՈՊԱ՝ 2013-ին Գորտոպայի Հ.Բ.Ը.Մ.-ը մասնակցեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Հարաւային Ամերիկայի Ողիմպիական Խաղերուն Պրագիլի մէջ եւ ունեցաւ շարք մը գործունէութիւններ, ինչպէս Սցabitos վարժարանի դպրոցական ձեռնարկներն ու դասընթացքներ հայերէն լեզուի, մարզական ձեռնարկներ (Պասքէթպոլ, ֆութսալ, վոլէյպոլ եւայլն.) հանդիսութիւն մը Հայաստանի Հանրապետութեան Անկախացման առթիւ, խորհրդածոյցով մը Փաուլա Գարատաղեանի եւ Կապրիէլա Երէմեանի հետ, Հայաստան ճամբորդելու կապակցութեամբ եւ համերգ մը նուիրուած Կոմիտաս Վարդապետին: Մասնաճիւղը նաեւ շարունակեց կազմակերպել ամառնային բանակումներ երախաներու համար, Colonia de Vacaciones:



Գորտոպայի Մասնաճիւղը կազմակերպեց հայկական խոհանոցի դասընթացներ:



Աւելի քան 350 ներկաներ մասնակցեցան Հ.Բ.Ը.Մ.ի Պրագիլի Մասնաճիւղի 48-ամեակին, որ տեղի ունեցաւ 23 Սեպտեմբեր 2012ին:

ՊՐԱԶԻԼ

ՄԱՆ ՓԱՆԻԼՕ՝ 2012-ին Սան Փաուլոյի Հ.Բ.Ը.Մ.-ը տօնեց իր հիմնադրութեան 45-ամեակը, ձեռնարկով մը, որ գրաւած էր նաեւ տեղացի հիւրեր: Ձեռնարկի ընթացքին, Osasco-ի նախագահ Արի Կեօճէնեանին շնորհուեցաւ Տարուան Մարդը կոչումը, առ ի գնահատանք իր դերակատարումին,

զաղուրդ զօրացնելու գծով: Բենիամին Տիշչէքէնեան, Պրագիլի Հ.Բ.Ը.Մ.-ի հիմնադիրներէն մին ալ մեծարուեցաւ հանդիսութեան մը ընթացքին: Տիշչէքէնեան աշխատած է բարելաւել ընկերային օժանդակութիւնը եւ ուսումնառութեան առիթներ ստեղծել պրագիլահայերուն:

ՈՒՐՈՒՎՈՒՆԷՑ

ՍՈՆՔԵՎԻՏԵՕ՝ 2012-ին Մոնթեվիտոյի Հ.Բ.Ը.Մ.-ը նշեց իր հիմնադրութեան 106-ամեակը, հանդիսութեամբ մը, ի պատիւ կազմակերպութեան տարած աշխատանքին Ուրուկուէլի մէջ: Վերգինէ Պարտագճեան, Մասնաճիւղի նախկին ատենապետուհին, վարեց ձեռնարկը քննարկումով իր գիրքին՝ «Յուշեր Ուրուկուէլի ՀԲԸՄ-էն 1938-1998» խորագրով: 2013-ին մասնաճիւղը տօնեց Մոնթեվիտոյի Հ.Բ.Ը.Մ.-ի Նուպարեան-Մանուկեան վարժարանին 40-ամեակը Հ.Բ.Ը.Մ.-ի «Կռունկ» Երգչախումբի համերգային ելոյթով: Որպէս տօնակատարութեան յայտագրի մէկ բաժինը, աշակերտները ապագայի որպէս յիշատակարան մետաղեայ սնտուկ մը թաղեցին, որուն մէջ դրած էին նկարներ, նամակներ, դպրոցական տարագներ եւ տարբեր յիշատակի առարկաներ, բացուելու համար 2053-ին:



Փրոֆ. Գլոտ Մուրթաքեան Մոնթեվիտոյի Հ.Բ.Ը.Մ.ի հիւրընկալութեամբ դասախօսութիւն մը տուաւ 5 Սեպտեմբեր 2013ին:

ԱԻՍՏՐԱԼԻԱ



2013ին, Սիտնիի Հ.Բ.Ը.Միությունը եւ Ալեքսանդր Շարժարանը տոնախմբեցին իրենց հիմնադրութեան 50-ամեակը:

ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՄԵԼՊՈՒՌՆ՝ 2012-ին Մելպուռնի Հ.Բ.Ը.Մ.-ը երգիծանքի երեկոյ մը կազմակերպեց, թատրոնի սիրահարներուն համար, կազմուած երգիծաբան Յակոբ Պարոնեանի թատերական պատկերներով: Մասնաճիւղը նաեւ կազմակերպեց ֆիլմի մը ցուցադրութիւնը բանաստեղծ Եղիշէ Չարենցի կեանքին մասին, «Փնտռելով իմ Հայ Բանաստեղծս» խորագրով, ինչպէս նաեւ յարգանքի ձեռնարկ մը Սայեսթր Նովայի մասին, անոր ծննդեան 300-ամեակին նուիրուած: Մելպուռնի Հ.Բ.Ը.Մ.ը նաեւ հովանաւորեց «Օժանդակութիւն Սիջին Արեւելքի Գաղթականներուն» վերնագրուած լուսանկարչական ցուցահանդէսը քաղաքի գրադարանին մէջ: 2013-ին մասնաճիւղը ունեցաւ իր տարեկան պարտիզագնացութիւնը «Աւստրալիայի Օր»-ի առթիւ: Այլ ձեռնարկ մը եւս կազմակերպեց պատուելու համար Մասնաճիւղի կամաւորները եւ յանձնախումբի անդամները:



Մելպուռնի Մասնաճիւղը 2013ին շնորհակալական երեկոյ մը կազմակերպեց իր կամաւորներուն ի պատիւ:

ՄԻՏՏԻՆ՝ 2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Սիտնիի Վահրամ Փափազեան Թատերախումբը շրջագայեցաւ Մ. Նահանգներ եւ Գանատա, ներկայացուցանելով Լոս Անճելըս, Թորոնթօ եւ Մոնթրիալ: Նոյն տարին Հ.Բ.Ը.Մ.-ի Սիտնիի Երիտասարդաց Մարմնի

ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՄԵԼՊՈՒՌՆ
Հայկական Չայնասփիլի Օրագիր
Երիտ. Գործ.

ՄԻՏՏԻՆ
Ալեք Մանուկեան Շարժարժայ
Դպրոց
Ալեքսանդր Նախակրթարան
Վահրամ Փափազեան
Թատերախումբ
Երիտ. Գործ.
ԵԱ

պաքեթպոլի խումբն ալ ճամբորդեց դէպի Հիւսիսային Ամերիկա, մասնակցելու համար Հ.Բ.Ը.Մ.-ի համաշխարհային Խաղերուն: 2013-ին Հ.Բ.Ը.Մ. Սիտնի եւ Հ.Բ.Ը.Մ. Ալեքսանդր Շարժարժայ դպրոցը տօնեցին իրենց 50-ամեակը: Այս իրադարձութեան առթիւ մասնաճիւղը ճաշկերոյթ մը կազմակերպեց ի պատիւ համայնքի Վեթերան անդամներուն, իսկ դպրոցը ցուցահանդէս մը կազմակերպեց ներկայացնելու համար Մասնաճիւղի պատմութիւնը:

Հ.Բ.Ը.Մ.Ի ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ 2012 – 2013

ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄ՝ Ռուբեն Քեշիշեան ԳՈՐՏՈՊԱ՝ Խալիեր Փեթենեան (մինչև 30 նոյեմբեր 2013), Լիկոլա Ամալեան

ԱԲՍՏՐԱԼԻԱ

ՄԵԼՊՈՒՌՆ՝ Մարալ Չոքալաճեան ՍԻՏՆԻ՝ Թորոս Պողոսեան

ԱԲՍՏՐԻԱ

ՎԻԵՆՆԱ՝ Ժիրայր Պալմանեան

ՊՐԱԶՄԻ

ՄԱՆ ՓԱՌԻԼՕ՝ Գրիգոր Մանուկեան (մինչև Ապրիլ 2012), Հելլո Պալոսեան

ՊՈՒՎՍԻԻԱ

ՓԼՈՎՏԻԻ՝ Ռուբեն Չաուշեան
ՓԼՈՎՏԻԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՂԻ
ԸՆԿԵՐԱԿԻՑ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ՝
ՊՈՒՐԿԱՄ՝ Յակոբ Մովսեսեան
ՏՈՊՐԻՉ՝ Էտուարտ Քոքոնեան
ՀԱՍՔՈՎՕ՝ Սրբուհի Տեր
Անտոնեան
ՌՈՒՍԷ՝ Պողոս Կարճանեան
ՍԻԼԻՍԹՐԱ՝ Մկրտիչ
Գալուստեան
ՍԼԻՎԸՆ՝ Արշալիր Հուլեան
ԵԱՄՊՈԼ՝ Սոնիա Արշալիր
Յոզիանեան

ՍՈՖԻԱ՝ Սոնիա Ասազեան-
Պետրոսեան

ԳԱՆԱՏԱ

ՍՈՆԹՐԷԱԼ՝ Արամ Եագուպեան
ԹՈՐՈՆԹՕ՝ Քնար Պասաճեան

ԿԻՊՐՈՍ

ԼԱՌՆԱՔԱ՝ Ստեփան Քամաքեան
ՆԻԿՈՍԻԱ՝ Վիգեն Քեյսերլեան

ԵԳԻՊՏՈՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԳԱՀԻՐԷ՝
Պերճ Թերզեան

ԳԱՀԻՐԷ՝ Վիգեն Ճիզվեճեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ՝ Մարգիս
Վարձապետեան

ԵԹՈՎՊԵՏ

ԱՏՏԻՍ ԱՊԱՊԱ՝ Վահագն Ղարիպեան

ԵՒՐՈՊԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՓԱՐԻՉ՝ Ալեքսի Կեօվճեան

ՅՐԱՆՍԱ

Ֆրանսայի Շրջանակային
Յանձնաժողով
Փարիզ՝ Ֆիլիպի Փանոսեան
ԼԻՈՆ՝ Միշել Սանճեան (մինչև
30 նոյեմբեր 2012), Քամիլ Մեսրոպեան
ՄԱՐՍԷՅԼ՝ Սահակ Քարալեքեան
(մինչև 30 նոյեմբեր 2013), Փաթրիք
Մալաքեան
ՆԻՍ-ՔՕԹ Տ՝ԱԶՈՒՐ՝ Շաքե
Յակոբեան-Քլաուսըն
ՓԱՐԻՉ՝ Մասուն Մոճի
ՍԷՆ ՇԱՄՈՆ-ՍԷՆ ԷԹԻԷՆ՝
Լեոնարտո Պասաճեան
ՎԱԼԱՆՍ՝ Ժան Ժաք Վարդանեան
ՎԻԷՆ՝ Շարլ Փալթոպետրոսեան

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԱԹԵՆՔ՝
Տիգրան Ապասեան

ԻՐԱՆ

ԹԵՀՐԱՆ՝ Աստղիկ Պապայեան

ԻՐԱՔ

ՊԱՂՏԱՏ՝ Իսկենտեր Մեյքոնեան
(մինչև Մայիս 2012), Բազրամ Տեր
Յակոբեան

ԻՏԱԼԻԱ

ՄԻԼԱՆ՝ Կեկել Խաչատուրեան

ԼԻԲԱՆԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՊԵՅՐՈՒԹ՝
Ժերար Թիւֆէնքճեան

ՀՈՒԱՆՏԱ

ԱԼՄԷԼՕ՝ Յարութ Փալանճեան

ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ՃՈՀԱՆՆԷՍՊՈՒՐԿ՝ Ժաք Ատանալեան

ՍՈՒՐԻԱ

ՍՈՒՐԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ,
ՀԱԼԷՊ՝ Ներսէս Ներսիսեան
ՀԱԼԷՊ՝ Յակոբ Միքայելեան
ԴԱՄԱՍԿՈՍ՝ Արա Եագուպեան
ԳԱՄԻՇԼԻ՝ Զարեհ Սիմոնեան
ԼԱԹԱՔԻԱ՝ Յակոբ Ադամեան
ԵԱԳՈՒՊԻՅԷ՝ Գեորգ
Խաչատուրեան

ՄԻԱՅԵԱԼ ԱՐԱՐԱԿԱՆ ԷՄԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՈՒՊԱՅ՝ Հրաչ Պուռունսուզեան

ԱՆԳԼԻԱ

ԼՈՆՏՈՆ՝ Նուշիկ Սեդրակեան (մինչև
Մայիս 2013), Ժիրայր Գեորգեան

ՈՒՐՈՒԿՈՒԷՑ

ՄՈՆԹԵՎԻՏԷՕ՝ Հայկազուն Մոսճեան
(մինչև Հոկտեմբեր 2013), Բենիամին
Քեմանեան

ԱՄՆ

ՀԱՐԱԲԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ,
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ՝ Հայկ Մալրլեան
(մինչև Դեկտեմբեր 2012), Գրիգոր
Գարակեօզեան

ՎԼԷՆՏԵՅԼ ՓԱՍՏԻՆԱ՝ Շահէ
Մեյլիմեզեան (մինչև Սեպտեմբեր
2012), Յուլիա Օգնայեան-Մաղրրեան
(մինչև Դեկտեմբեր 2012), Ալին
Խանճեան (մինչև Հոկտեմբեր 2013)
ՀԱՅ ԿԻՆ, ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ՝ Սոնա
Եագուպեան
ՕՐԷՆՃ ՔԱՌՆԹԻ՝ Գրիգոր
Մահտեսեան
ՄԱՆ ՏԻԷԿՕ՝ Անի Գալայճեան-
Լանուգա

ՄԱՆ ՖԵՐՆԱՆՏՈՅԻ ՀՈՎԻՏ՝ Արա
Եսայեան (մինչև Նոյեմբեր 2013)
ՖՐԵՉՆՕ՝ Զարուհի Տեր Մկրտիչեան
ՄԻԼԻՔՈՆ ՀՈՎԻՏ՝ Երուանդ Զօրեան
ՇԻՔԱԿՕ, ԻԼԼԻՆՈՅ՝ Սոնա Տիօրեո
ՆԻԻ ԻՆՎԻԸՆՏ, ՄԱՍՍՉՈՒՍԷՑ՝ Արա
Պալիքեան
ՆԻԻ ԵՈՐՔ, ՅԱՏՈՒԿ
ՁԵՆԱՐԿՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ՝
Լիլա Ֆրաթըքճեան
ՏԻԹՐՈՅԻԹ, ՄԻՇԻԿԸՆ՝ Նատիա
Մարաֆեան
ԳԼԻՎԸՆՏ, ՕՀԱՅՕ՝ Սեպուհ
Սեդրակեան
ՖԻԼԱՏԵԼՖԻԱ,
ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ՝ Էլիզապեթ Պարոն,
Քլարա Մամլեան
ՓՐՈՎԻՏԸՆՍ, ԲՈՏ ԱՅԼԸՆՏ՝ Ուիլեամ
Ազնաուրեան
ՀԻԻՍԹԸՆ, ԹԷՔՍԱՍ՝ Մարգիս
Օհանեան

ԼՌԻՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ



2013-ի Փետրուարին, **Մեմ Միմոնեան** ընտրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի Փոխ-նախագահ, գործելու **Սինան Սինանեանի** կողքին, որ երկրորդ անգամ ընտրուած էր: Սինոնեան, որ նախապէս կը պաշտօնավարէր որպէս գանձապահ, նախագահն է Տալասի մէջ հաստատուած INET ընկերութեան եւ հիմնադիրը Tumo-Երեւանի Ստեղծագործական ճարտարագիտութեան կեդրոնի: **Երուանդ Տեմիրճեան**, Փոխ նախագահը Նիւ Եորքի Interaudi դրամատան, ընտրուեցաւ գանձապահ կազմակերպութեան:

Մարտ 2013-ին Հայաստանի Նախագահ Մերժ Սարգսեան «Մովսէս Խորենացի» մետալով պարգևատրեց Հ.Բ.Ը.Մ.-ի բարերարներէն յիբանանահայ **Կարայիս Նազարեանը**, անոր կրթական եւ հասարակական գործունէութեան համար, ի նպաստ աշխարհի մէջ հայկական համայնքներուն: Նազարեան պարգևատրուեցաւ Հայաստանի մշակութային բարձրագոյն մետալով, հանդիսութեան մը ընթացքին որ տեղի ունեցաւ Հայաստանի դեսպանատան մէջ, Պէյրութ:



Մոնթրէալի Հ.Բ.Ը.Մ.-ի նախկին ատենապետ **Վիգէն Լ. Աղաբեանին** յանձնուեցաւ Էլիզապէթ Բ. Թագուհիի Աղամանդեայ Յոբելէանի Մետալը, Գանատայի իր ասպարէզին յառաջդիմութեան նուիրած իր ջանքերուն համար: Հանդիսութեան ընթացքին Գանատայի Խորհրդարանի անդամ Սթեֆան Տիօն գովեց Աղաբեանի ներդրումը **հ ե ռ ա հ ա դ ռ դ ա կ ց ու թ է ա ն ց ճ ա ր տ ա ր ք ու ե ս տ ի ն** մէջ, ինչպէս նաեւ անոր մտատրական եւ քաղաքական գործունէութիւնը:



2012-ին Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ տեղի ունեցաւ Եգիպտոսի Հ.Բ.Ը.Մ.-ի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Է.Բ.Ը.Մ.-ի Գահիրէի Մասնաճիւղի Պատուոյ նախագահ **Պերճ Թերզեանի** գիրքին շնորհահանդէսը: Գիրքը՝ «Եգիպտոսի մէջ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան Ծննդոցը» խորագրեալ, նուիրուած է Հայաստան-Եգիպտոս յարաբերութեանց սկզբնական շրջանին: Արտագին Գործոց Նախարար Էտուարտ Նալպանտեան դրուատեց Թերզեանը իր յատուկ օժանդակութեան, Եգիպտոսի մէջ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան հաստատման եւ անոր գործունէութեանց իրականցման:

Յունաստանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը պարգևատրումի մը հանդիսութեան հրաւիրեց, որուն ընթացքին Հ.Բ.Ը.Մ.-ի Յունաստանի Կեդրոնական Յանձնաժողովի Ատենապետ **Տիգրան Ապպաւսեանին** յանձնուեցաւ Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան «Ողոս Նուպար» Մետալը, անոր երկարամեայ նուիրումութեան եւ օժանդակութեան Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ կապերը զօրացնելու գծով: Ապպաւսեան, որ բանալի անձնաւորութիւն մըն է յունահայ համայնքին մէջ, վերջին երկու տասնամեակներուն վարած է Աթէնքի Հ.Բ.Ը.Մ.-ի Ատենապետութիւնը:



2013-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Պարզեատրեց **Նագար եւ Արտեմիա Նագարեանները** Ս. Էջմիածնի Ասպետի մետալով, բարձրագոյն պատիւը Հայկական Առաքելական Եկեղեցույ:



Հ.Բ.Ը.Մ.ի Սոֆիայի Մասնաճիւղի Ատենապետուհի Սոնիա-Աւագեան-Պետրոսեան **Դոկտոր Փեթար Կոլիսքիին** կը յանձնէ 2011ի Կարպիս Փափագեան Մրցանակը: Կոլիսքի բանասէր է եւ Սոֆիայի Համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութեանց Բաժանմունքի Տնօրէնը:



2012-ին **Վիգէն Չերչեան** յաջորդեց Կարօ Ճղըլեանին, որպէս Ատենապետ Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի: Չերչեան, որ շրջանաւարտ եղած է Միուքեան վարժարաններէն, եղած է նաեւ գործունէ սկաւտապետ մը Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.ի Զարեհ Նուպար Ակումբի եւ Ալեք Մանուկեան կեդրոնի սկաւտական խումբերուն մէջ:



2013-ին, **Հերմինէ Զանոյեան**, Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Շրջանի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբի Ատենապետուհին, պարգևատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Յկեանս Պատուոյ Անդամ կոչումով, Արեւմտեան Շրջանի Տարեկան Կալա-Ճաշկերոյթի մը ընթացքին: Ան ղեկավարող ուժն էր շատ մը դրամահաւաքի ձեռնարկներու Արեւմտեան Գալիֆորնիայի մէջ, ամբողջ 20 տարի, որոնց ընթացքին հանգանակուած էին շուրջ 100,000 տոլար, համախմբելով 900 հիւրեր:



2013-ին, **Մեմ եւ Միլվա Միմոնեաններ** մեծարուեցան Արեւմտեան Շրջանի Տարեկան Կալա-Ճաշկերոյթի ճաշկերոյթի ընթացքին, Հայաստանի մէջ իրենց բացառիկ կրթական նախաձեռնութեան համար: Միմոնեանները հիմնադիրներն են Tumo ստեղծագործական ճարտարագիտութեան կեդրոնին:




Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Հանրային Առողջապահութեան վարժարանը ստացաւ միակ մրցանակը որ կը տրուի Եւրոպայի մէջ Grand Challenge Canada-ի կողմէ, որ հիմնադրուած է Գանատայի կառավարութեան կողմէ եւ որ կը գործարկէ իր «Նորարական մտեցում Թոքախտի բուժման ծրագրին Հայաստանի մէջ», գործակցութեամբ Առողջապահութեան Նախարարութեան Թոքախտի Վերահսկողութեան Ազգային Ծրագրին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԼԽԱԽՈՐ ՀԱՆԳՐՈՒՄԱՆՆԵՐ

100-Դ ՏԱՐԵՂԱՐԸ – Շիքալօի եւ Միլանի մասնաճիւղեր **80-Դ ՏԱՐԵՂԱՐԸ** – Հալէպի Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն (Հ.Ե.Ը.) եւ Վալանսի մասնաճիւղ **50-Դ ՏԱՐԵՂԱՐԸ** – Հալէպի Պետրոս Ադամեան Թատերախումբ, Պէրյուքի Տէմիրճեան Կեդրոնի Ամառնային Ցերեկային Ճամբար, Պէրյուքի Լեւոն Կ. Նագարեան Նախակրթարան, Նիւ Եորքի Նուպար Ճամբար, Միտնիի Ալէքս Մանուկեան Շաբաթօրեայ Դպրոց **40-Դ ՏԱՐԵՂԱՐԸ** – Փոլսի Էրեբունի Երաժշտական Համոյթ, Մոնթէվիտէի Նուպարեան Մանուկեան Վարժարան **30-Դ ՏԱՐԵՂԱՐԸ** – Ֆրանսայի Ամառնային Արցակուրդի Գործունէութիւն-Ճամբար **25-Դ ՏԱՐԵՂԱՐԸ** – Նիւ Եորքի Ամառնային Ասպարեգային Փորձագիտութեան Ծրագիր **20-Դ ՏԱՐԵՂԱՐԸ** – Արեւմտեան Շրջանակի Հայ Կին Յանձնախումբ, Մոնթէվիտէի Բազմաձայն Երգչախումբ **10-Դ ՏԱՐԵՂԱՐԸ** – Արեւմտեան Շրջանակի Ասպետներ


ՅԱՏՈՒԿ ՇՐՋԱՅՑԵՐ




2012ին, Հ.Բ.Ը.Մ-ը հրատարակեց պատմագետ **Ճորճ Պուռնութեանի** Ճորճ Պուռնութեան Ղարաբաղի հայ բնակչության ժողովրդագրական հարցերուն նուիրում իր գիրքը: Փետրուարին, Մարտին եւ Ապրիլ 2012ին, Պուռնութեան շրջեցաւ Հիւսիսային Ամերիկայի վեց քաղաքներ ներկայացնելու իր գիրքը: Այդ առիթով դասախօսութիւններ տեղի ունեցան Գլիվլընտի, Տիթթոյիթի, Մոնթրէալի, Նիւ Եորքի եւ Թորոնթոյի մէջ: Պուռնութեան հեղինակ է նաեւ «Հայ Ժողովուրդի Համառօտ Պատմութիւն» գիրքին, որուն անգլերէն հրատարակութեան համագործակցած էր Հ.Բ.Ը. Միութիւնը 1993ին: Հ.Բ.Ը.Մ.ի Պուէնտս Այրէսի Մասնաճիւղը գիրքը թարգմանած էր սպաներէնի, իսկ Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ը զայն թարգմանած էր արաբերէնի:

2012-ին Հ.Բ.Ը.Մ-ը կազմակերպեց գիրքի շրջապտոյտ մը Մ.Նահանգներու եւ Գանատայի մէջ «Հայկական Խոհանոց» գիրքի հեղինակներ **Ալին Գամաքեանի եւ Պարպարա Տրեսքեանի** համար: Գիրքը կը պարունակէ լուսանկարներ, յօդուածներ եւ բանաւոր պատմութիւններ եւ որ պատրաստուած էր Գամաքեանի կողմէ, լիբանանահայ շէֆ-խոհարարուհին եւ սեփականատերը Պէյրութի Մայրիկ Ճաշարանին: Ապրիլին Գամաքեան եւ Տրեսքեանս այցելեցին Մոնթրէալ, Պոսթոն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Ֆիլատելֆիա եւ Լոս Անճելըս:





2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ը մասնակցեցաւ հովանաւորելու գիրքի շրջապտոյտ մը **Քրիս Պոհձալեանի** համար, որ հեղինակն է «Աւազէ Ամրոցի Աղջիկները» գիրքին: Գիրքին նիւթը առնուած է Հայկական Ցեղասպանութեան ժամանակէն: Պոհձալեան ներկայացուցած է իր գիրքը եւ ունեցած է հարց-պատասխանի ժամեր Նիւ Եորքի եւ Մասաչուսեթսի մէջ Օգոստոս ամսուն:



2013-ին Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.-ը հովանաւորեց շրջապտոյտ մը պուլկարացի լրագրող **Յվերանա Պասքալեայի** համար, ցուցադրելու համար իր վաւերագրական ֆիլմը՝ «Ղարաբաղի Վերքերը» խորագրով: Ֆիլմը կազմուած էր Պասքալեայի հաւաքած փաստաթուղթերով 1988-էն-1994 պատերազմի տարիներուն: Պտոյտը սկսած է Վալանսէն եւ շարունակուած Մարսելի եւ Լիոնի մէջ:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԼՈՒՍԱՐՁԱԿ





Արթուր Թունճպոյաճեան Կատարողական Արուեստներու Բաժանմունքին կազմակերպած ճազ երաժշտութեան համերգներու ընթացքին, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 2013ին:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ը պաշտօնապէս բացումը կատարեց իր Կատարողական Արուեստի Բաժանմունքին եւ այդ թուականէն սկսեալ ընդարձակեց իր հաստոյթեան սահմանները, օժանդակելու համար աճող արուեստի տաղանդներուն: Իր մեկնարկէն ի վեր Բաժանմունքը հիմնաւէտ «Երաժշտական Հայաստան» Օրագիրը ինչպէս նաեւ հիմնաւէտ է Հայկական Ճազի Շարանը, որ ականատես եղաւ անուանի երաժիշտ Արթուր Թունճպոյաճեանի կատարողութեան, բարձրացող աստղերու կողքին, տեղւոյն Նիւ Եորքի Ճազի ոլորտին մէջ: Բաժանմունքը կազմակերպեց նաեւ Օսմանեան Կայսրութեան հայ երաժիշտներու համերգը Գոլումպիայի Համալսարանին մէջ, ինչպէս նաեւ միացաւ Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբին հրաւիրելու համար Կատարողական Արուեստագէտները համերգային շարքով մը Գարնեկի Յօլ Սրահը: Բաժանմունքը միացուց իր ուժերը Փարիզի Հ.Բ.Ը.Մ.-ին, շարունակելու համար Սայեսթր Նովա Ստեղծագործական

Միջազգային Մրցումը: Նիւ Եորքի մէջ, Բաժանմունքին կազմակերպած Սալոն Գիշերները, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Գրասենեակին մէջ, տեղացի արուեստագէտներուն առիթ ընծայեց հաղորդակցութիւնները զարգացնելու եւ գործակցելու: Իր բացման ձեռնարկին, հիւրերը վայելեցին Սայեսթր Նովայի կեանքին մասին Ս. Փարաճանովի «Նոան Գոյնը» ֆիլմը դիտելով: Կատարողական Արուեստի Բաժանմունքի տնօրէնն է դաշնակահար եւ երգահան Հայկ Արսէնեան, որ Հ.Բ.Ը.Մ.-ի կրթնապատէն օգտուած աշակերտ եղած է անցեալին:

Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի Բաժանմունքը կը նպատակադրէ աշխարհի հայ արուեստագէտներ իրար կապել եւ հայկական արուեստը ներկայացնել տարատեսակ ունկնդիրներու, զանազան միջոցառումներով, ներառեալ շարք մը միջազգային իրադարձութիւններ, որոնք կրնան իրարու մօտ բերել երաժիշտներն ու երաժշտութեան սիրահարները:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՄՈՅԹՆԵՐ

Հ.Ե.Ը.-Ի ԿՈՄԻՏԵԱՍ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒՍԳԱՆՈՒՄԲ

2012-ին Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Հալէպի Կոմիտաս Սենեկային Նուագախումբը, կազմուած 24 երիտասարդ նուագողներէ, երկու համերգ տուաւ Հալէպի մէջ. առաջինը կազմուած էր Վիւալտիի, Հայտընի եւ Պալիի երաժշտական կտորներով, մինչ երկրորդը աւելի միջազգային հնչեղութիւն մը ունէր, իր կտորներով Պարթոքէն, Ապտիլլաքիմէն, Խաչատուրեանէն, Բիագոլլայէն եւ Սպենդիարեանէն: 2013-ին նուագախումբը, Սարգիս Բսկէնեանի ղեկավարութեամբ, ելոյթ ունեցաւ Ամանտրի առթիւ Հայկական եկեղեցիներու մէջ:



«ԳՈՂԹԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (ՓԱՐԻԶ)

2012-ին եւ 2013-ին Հ.Բ.Ը.Մ.-ի «Գողթան» Երգչապախումբը վեց համերգներ տուաւ Փարիզի մէջ: 2012-ին ելոյթ ունեցաւ Փարիզի պատմական Refectoire des Cordeliers-ի մէջ մօտ 400 ունկնդիրներու ներկայութեան: Համերգը կազմակերպուած էր Փարիզի Մշակույթի Բաժանմունքին կողմէ, La Sorbonne-ի հետ, որպէս մէկ բաժինը անոր Բանաստեղծներու Գարունը յայտագրին: Երգչապախումբը դասական եւ ժամանակակից երաժշտութենէն ընտրանի մը ներկայացուց մեծամասնութեամբ օտար ունկնդիրներու եւ անոնց ծանօթացուց Կոմիտասի, Յովհաննէսեանի եւ Պապաջանեանի գործերը: Դարձեալ 2012-ին, Երգչապախումբը ելոյթ ունեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Փարիզի Մշակութային Կեդրոնին մէջ, որպէս մէկ բաժինը Armeniaca ցուցահանդէսին: 2013-ի կարեւոր ձեռնարկները կ'ընդգրկէին ելոյթներ Music School of Antony-ի եւ ֆրանսական երգչախումբի մը հետ, Chinon գիւղաքաղաքի մօտ Tourain շրջանին մէջ: Հ.Բ.Ը.Մ.-ի «Գողթան» Երգչապախումբը շարունակած է տարածել հայկական երաժշտական ժառանգութիւնը Ֆրանսայի եւ արտերկրի մէջ, մօտաւորապէս երկու տասնամեակ:



«ԿՈՒՆԿ» ԲԱԶՄԱԶԱՅՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (ՄՈՆՔԷՎԻՍԷՕ)

2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթեվիտեոյի «Կոունկ» բազմաձայն երգչախումբը, այցելութիւնը ընդունեց Հայաստանի Պետական Երգչախումբի խմբավար Յովհաննէս Զեքիճեանի: Երգչախումբը պատեհութիւնը ունեցաւ փորձեր ընելու իր հետ եւ ծանօթանալու անոր անձին եւ վաստակի ուղիին, ինչպէս նաեւ ծանօթանալու զանազան փորձի ձեւերու եւ երաժշտական կենսագրութեան: 2012-ին նաեւ երգչախումբը ելոյթ ունեցաւ Ուրուկուէյի Նուպարեան Կարծարանի Ճառանգութեան Օրուան առթիւ, ուր տեղացիներ եկած էին ծանօթանալու հայկական մշակույթին եւ արուեստին: Երգչախումբը նաեւ ելոյթ ունեցաւ հայկական հեռատեսիլէն Սփիւռքի ճանապարհը ծրագրին մէջ: 2013-ին Երգչախումբը սօսնեց իր 20-րդ տարեդարձը, սպառած տոմսերով ելոյթով մը Մոնթեվիտեոյի Teatro Ateneo սրահին մէջ: Տարուան ընթացքին խումբը ելոյթ ունեցաւ նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի 107-ամեակին եւ Ուրուկուէյի Նուպարեան վարժարանի 40-ամեակին առթիւ:



ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐ

«ԱՐԻՆ» ՊԱՐԱԽՈՒՄԲ (ՊԵՅՐՈՒԹ)

Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի «Արին» Պարախումբը, որ կազմուած է 200 երիտասարդ պարողներէ, 2012-ին եւ 2013-ին երկու ելոյթ ունեցաւ, Ոսկեայ Կրամաֆօնը եւ Լեռնաշխարհի Կանչը: Ելոյթները եղան գործակցութեամբ գեղարուեստական ղեկավար Գագիկ Գիմսեանի, որպէս յարգանքի տուրք Արամ Խաչատուրեանին, անոր ծննդեան 110-ամեակին առիթով: Յուլիս 2012-ին, Սփիւռքի Նախարարութեան հրաւերով, խումբը իր մասնակցութիւնը բերաւ «Իմ Հայաստան» Մշակութային Փառատօնին:



Տեսարան՝ Հ.Ե.Ը.ի Արին Պարախումբի ելոյթէն, 9 Սայիս 2013:

«ԱՆՂՐԱՆԻԿ» ՊԱՐԱԽՈՒՄԲ (ՆԻՒ ԵՈՐՔ)

2012-ին Հ.Բ.Ը.Մ-ի «Անդրանիկ» Պարախումբը հրաշքում էր Շիքակո, ներկայացնելու համար իր վերջին իրաչառուկ ծրագիրը, Reflections (Արտացոլացումներ): Խումբը ներկայացուց 22 պարեր, 300 հանդիսականներու առջև: Երեկոն կազմակերպուած էր գործակցաբար Parev Monthly (Բարեւ Ամսագիր) Շիքակոյի հայկական թերթին եւ Շիքակոյի Հ.Բ.Ը.Մ.-ին, որպէս մէկ բաժինը Մասնաճիւղի հարիւրամեակի տօնակատարութեան եւ Շիքակոյի Սարդասիրական Փառատօնին: «Անդրանիկ» Պարախումբը, որ հիմնուած է 1969-ին, ելոյթներ ունեցած է այնպիսի դահլիճներու մէջ, ինչպէս Lincoln Center Նիւ Եորքի մէջ եւ Պետական Օփերան Երեսնի մէջ:



ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԵՐ



«ԱՀԱԶԱՆԳ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ (ՓԱՐԻՉ)

2012-ին Հ.Բ.Ը.Մ-ի «Ահազանք» Թատերախումբը ներկայացուց երգիծաբան Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ»-ը Փարիզի Ալէք Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ, 2012-էն 2013-տարիներուն: Թատերախումբը տուած է 20 ներկայացում: Հիմնուած 1991-ին, «Ահազանգ»ը

կը հաւաքէ հայեր Հայաստանէն, Տրանսային, Լիբանանէն եւ Թուրքիայէն թատերական ներկայացումներու համար, ինչ որ կ'արտացոլացնէ սփիւռքահայութեան տարատեսակութիւնը, թէ ոճի իմաստով եւ թէ մատուցումի:

«ՎԱՀՂԱՍ ՓԱՓԱԶԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ (ՄԻՏՆԻ)

2013-ին Հ.Բ.Ը.Մ-ի Սիտնիի «Վահրամ Փափազեան» Թատերախումբը ներկայացուց «Ինքնակոչ Երածիշտը» երկրէն դուրս, առաջին անգամ ըլլալով: Խումբը, որուն ղեկավարն է գրող եւ բեմադրիչ Նուպար Ղարիպեան, ճամբորդէր Գանատա եւ ունեցաւ մօտ 500 հանդիսատես Մոնթրէալի Saint-Laurent College-ի Emile Legault սրահին մէջ եւ Հ.Բ.Ը.Մ-ի Ալէք Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ, Թորոնթօ: Թորոնթոյի ներկայացման, խումբը 3,000 տուար գոյացուց, օժանդակելու համար Հ.Բ.Ը.Մ-ի Սարդասիրական հիմնադրամին Սուրիոյ համար:





ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ (ՓԱՍՏԵՆԱ)

2012-ին Հ.Բ.Ը.Մ.-ի «Արտաւագ» Թատերախումբը շարունակեց իր առաքելութիւնը բեմ բարձրացնելով հայերէն թատերգութիւններ Լոս Անճելըսի մեծ համայնքին համար, տարբեր ելոյթով ներկայացնելով Երուանդ Օտեանի երկու արարնոց կատակերգութիւնը, «Մէր եւ Ծիծաղ», 16 հոգինոց դերակատարներու խումբով: Ներկայացումը համեմատած էր Տիգրան Չուխաճեանի «Լեւոնի Կոչ Վոչ Վոչ» օփերէթէն առնուած մասերով, ինչպէս նաեւ Ճօն Պիլեգիլեանի ժողովրդական երաժշտութիւնով: Առաջին ելոյթներու յաջողութենէն քաջալերուած, թատերախումբը չորս ելոյթներ եւս աւելցուց Փասատենայի, Օրէյնճ Քաունթիի եւ Ֆրէզնոյի համար:



ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ (ՊՈՒԵՆՈՍ ԱՅՐԷՍ)

2013-ին Պուենոս Այրէսի Գրիգոր Սաթամեան Թատերախումբը ներկայացուց Երգիծարան Երուանդ Օտեանի «Մէր եւ Ծիծաղ» թատերգութիւնը: Ձեռնարկին ամբողջ հասոյթը տրամադրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի բարեսիրական հիմնադրամին, Սուրիոյ համար: Թատերախումբը հիմնուած է 2011-ին, նպատակ ունենալով հայերէնը վերակենդանացնել թատրոնի ճամբով եւ Արժանթինի հայկական համայնքին մեծ ընդարձակել հայ գրականութեան ճանաչողութիւնը:



ՊԵՏՐՈՍ ԱՂԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ (ՀԱԼԷՊ)

2012-ին Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Պետրոս Աղամեան Թատերախումբը սօսեց իր 50-ամեակը, շարք մը ձեռնարկներով, սկսելով ցուցահանդէսով մը, որ կը ներկայացնէր թատերախումբի պատմութիւնը: Տօնակատարութիւնը կ'ընդգրկէր նաեւ դասախօսութիւններ թատերագետ Լեւոն Մուրաֆեանի կողմէ, ինչպէս նաեւ ներկայացում մը ներկայի եւ անցեալի

դերակատարներու մասնակցութեամբ, ընկերակցութեամբ Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-ի Կովիտաս Մենեկային Նուագախումբին: 2012-ին նաեւ Թատերախումբը իր 25 անդամներով բեմ բարձրացուց Արփիար Արփիարեանի Կարմիր Ժամուց-ը, բեմադրութեամբ Յակոբ Միքայէլեանի:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐԸ ՀԱՄԵՐԳՆԵՐՈՒ ՇԱՐՔՈՎ ՄԸ

2012-ին եւ 2013-ին, հինգերորդ եւ վեցերորդ Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբիի Կատարողական Արուեստագետները Համերգով ծրագիրը ներկայացուցաւ Գարնեկի Յօլ-ի մէջ: Շնորհիւ Հ.Բ.Ը.Մ.-ի առատաձեռն նուիրատուներուն, այս համերգները հանգանակեցին \$100,000, ի նպաստ Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստներու Մասնագիտութեան Ծրագրին եւ կատարողական Արուեստներու ծրագրաւորման: 2012-ի համերգը նուիրուած էր Սայեաթ Նովային: Համերգին, առաջին անգամ ըլլալով ներկայացուցաւ Արթիւր Ազգէլեանի «Տիեզերքը Ընկոյզի Կճէպի Մէջ» կտորը, որ 2006-ին Սայեաթ Նովա Երգահանութեան Միջազգային Մրցանքի մրցանակակիրն էր: Սպիտակի երկրաշարժի 25-րդ տարելիցի առթիւ, Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի բաժանմունքը գործակցեցան յատուկ համերգ մը կազմակերպելու համար: Երեկոյի յայտագիրը ներկայացուց կարգ մը ծանօթ հայկական երաժշտական կտորներ, ինչպէս նաեւ հեղինակային կտորներ, մասնաւոր պատրաստուած համերգին համար: Համաշխարհային իր առաջին կատարումը ունեցաւ Թոմաս Պարրէիրոսի «Rosignol Mecanique» -ը, որ տարբերակ մըն էր «The Death of the Nightingal»-ին. երաժշտական կտոր մը, որ Հ.Բ.Ը.Մ.-ի Սայեաթ Նովա Մրցանքի 2012-ի մրցանակակիրը եղած էր: Համերգին ներկայացուած երաժիշտները Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստի Մասնագիտական Կրթութեան կրթանպաստ ստացողներն էին, կրթանպաստ մը, որ առիթ կ'ընծայէ իրենց բարձրագոյն ուսում ստանալու, աշխարհի ամենանշանաւոր երաժշտանոցներուն եւ համալսարաններուն մէջ, ներառեալ Juilliard երաժշտանոցը, Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոցը, Վիեննայի Երաժշտանոցը եւ Փարիզի Երաժշտանոցը:

2008-էն ի վեր Նիւ Եորքի Յատուկ Իրադարձութեանց Յանձնախումբը հովանաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Միացեալ Ազգերու Մնայուն Առաքելութեան,



սօնած է ձեռքբերումները տաղանդաւոր հայ երիտասարդներու, որոնք կրթանպաստ ստացած են Հ.Բ.Ը.Մ.-էն, իրենց ուսանողութեան ընթացքին, Կատարողական Արուեստագետներ Համերգներու Շարքով ծրագրի ընդմէջէն:

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՄՐՑԱՆՔ

2012-ին Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.-ը եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստից Բաժանմունքը, գործակցեցան կազմակերպելու համար Սայեաթ Նովա Միջազգային Հեղինակային երկրորդ Մրցանքը, որուն մասնակցելու դիմում ներկայացուցած էին 18 երկիրներէ երաժշտահաններ: Մասնակիցներէն պահանջուած էր ստեղծագործել իւրայատուկ երաժշտութիւն մը, մէկտեղումովը ասանդական եւ արդի տարրերու, հինգ արեւմտեան դասական նուագարաններ, տուտուկ եւ մէջբերում մը Սայեաթ Նովայի բանաստեղծութիւններէն: Մրցումի դատական կազմը, տեղացի երաժիշտներէ բաղկացած էր, որուն կը նախագահէր Ֆրանսայի Մշակոյթի Նախարարութեան վերաքննիչ Laurent Chassignain: Մրցանակներ շնորհուեցան Tomas Barreir-ին Մեքսիկայէն եւ Էրնեստ Դուլգարեանին Հայաստանէն: 2012-ին 400 հրաւիրեալներ հաւաքուած էին Փարիզ, պատուելու համար Սայեաթ Նովան, կալա համերգի մը ընթացքին: Մրցանքի Կալա Համերգը կազմակերպուած էր հովանաւորութեամբ Փարիզի Հայաստանի Դեսպանութեան, գործակցութեամբ Միացեալ Ազգերու Կրթական, Գիտական եւ Մշակութային Կազմակերպութեան UNESCO: Համերգին երկրորդ բաժինը ներկայացուցին Հ.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստից-ի կրթանպաստ ստացողները Եւրոպայէն եւ Մ. Նահանգներէն:



ԿԻԶԱԿԷՏ ՇԱԲԱԹԱՎԵՐՁ-ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՕ



«ԿԻԶԱԿԷՏ» ձեռնարկի 400 մասնակիցների Սան Ֆրանսիսկոյի քաղաքապետարանի պատմական սրահին մեջ շքահանղէս հասարոյթի ընթացքին, որ կազմակերպուած էր ի նպաստ Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Աջակցութեան Ծրագրին:

ՄՐՅԱՆՇԱՅԻՆ ՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ 80,000 ՏՈՒՐ ՀԱՆՎԱՆԱԿՈՒԵՑԱԻ Հ.Բ.Շ.Մ.-Ի ՅԱԶՈՐԴ ՄԵՐՈՒՆԴ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՐ ՕԳՈՏՈՍ 1-4, 2013-ԻՆ:

ԿԻԶԱԿԷՏ-ի եօթներորդ երկամեայ հանդիսութիւնը տեղի ունեցաւ Սան Ֆրանսիսկոյի մեջ: Մօտաւորապէս 400 երիտասարդ հայեր աշխարհի չորս կողմերէն, ճամբորդեցին Գալիֆօրնիա հոծ ներկայութիւն ապահոված շաբաթավերջի մը մասնակցելու, որ պիտի նպաստէր համացանցի, մշակոյթի եւ մարդասիրական ծրագիրներու: Այս տարուան ձեռնարկը հիւրեր բերաւ Սան Ֆրանսիսկո 115 քաղաքներէ եւ 18 երկիրներէ, ինչպէս **Արժանքին, Աւստրալիա, Պահրէյն, Պուկարիա, Գանատա, Չինաստան, Դանիա, Ֆրանսա, Գերմանիա, Յունաստան, Բարայէլ, Բուալիա, Լիբանան, Սոնաքո, Ռուսիա, Սպանիա, Արաբական Միացեալ Էմիրութիւն** եւ **Միացեալ Թագաւորութիւն**: Հիւրերը վայելեցին շաբթ մը ձեռնարկներ, որոնք կ'ընդգրկէին թէ՛ զիրենք հիւրընկալող քաղաքին մշակոյթը եւ թէ՛ Հայկական մշակութային ժառանգը: Դրամահասարկ ջանքերէն եղած հասոյթը օժանդակեց Հ.Բ.Շ.Մ.-ի Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագրին – կամաւորներու մասնակցութեամբ իրագործուող նախաձեռնութիւն մը, որ դրական ներդրում կը կատարէ Հարաւային Գալիֆօրնիոյ պատանիներու կեանքին մեջ, անհատական հոգածութեան առարկայ դարձնելով զիրենք:

Սան Ֆրանսիսկոյի Union Square-ի Adagio հիւրանոցը ծառայեց որպէս առանցք ԿԻԶԱԿԷՏ-ի հիւրերուն: Անհամբերութեամբ սպասուած ԿԻԶԱԿԷՏ 2013-ի շաբաթավերջը սկսաւ Հինգշաբթի երեկոյեան, ուշագրաւ խմբային քննարկումով մը եւ խմբային փոխ-յարաբերական գործունէութեան առիթներով, ծանօթ որպէս Perspectives (հեռանկար) Spur Urban Կեդրոնին մեջ, ոչ-շահամետ կեդրոն մը, որ կը նպաստէ յաջող ծրագրաւորման եւ յաջող կառավարման, հետազօտութեան, կրթութեան եւ իրաւապաշտպանութեան ճամբով: Երեկոյեան քննարկումը ներգրաւեց մօտ 160 հոգի, որոնք մասնակցեցան Բաց գրոյցի մը, թէ՛ ինչ կը նշանակէ հայ ըլլալ: Քննարկումի ընթացքին, համադրող Լարա Սեդրակեան-լրագրող եւ հիմնադիր SyriaDeeply.org-ի–ուսնկողիներու մտածումները





կեդրոնացուց մէկ բանալի հարցումի,- Սփիւռքը ինչպէ՞ս կը կրնայ պահպանել աւանդոյթները, այսօրուան արագօրէն փոփոխուող աշխարհին մէջ:

Հաճելի եւ օգտակար մթնոլորտը շարունակուեցաւ Ուրբաթ օր, տեսարժան վայրերու շրջապտոյտով, դէպի Sonoma Valley եւ գինի համոտեսելու այցելութեամբ St. Jean խաղողի այգին: Հիւրերը վայելեցին, Սան Ֆրանսիսքոյի լաւագոյն գիշերային ժամանցներէն մին, Roe-ի մէջ, որ այդ իմաստով քաղաքի առաջնակարգ վայրերէն մին է:

Շաբաթ օրուան ԿԻԶԱԿԷՏ-ի արուեստի նուիրուած ծրագիրը տեղի ունեցաւ 111 Minna Gallery-ի մէջ եւ ներկայացուց ճեպանկարներ եւ գորգագործութեան գծանկարներ հոշակաւոր ամերիկահայ արուեստագէտներու կողմէ, որոնց մէջ, հանգ. Հայկ Փաթիկեան, Նատին Թազուրեան, Ժագ Թերզեան եւ Լեսլի Թերզեան-Սարքոֆ: Յուշադրուած էր նաեւ արուեստի գործ մը Ուիլիլմ Սարոյեանէն, որ կախուած էր GenNext-ի բարձրացող տաղանդ, 19-ամեայ Արփա Շիրվանեանի գործին կողքին:

Սան Ֆրանսիսքոյի հոյակերտ քաղաքապետարանը, ԿԻԶԱԿԷՏ-ի շաբաթ օրուայ կալալի վայրը հանդիսացաւ: Հիւրերը ընթրեցին եւ պարեցին այս պատմական վայրին մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ի համար իրենց դրամահաւաքի յաջողութիւնը տօնելու կողքին: Յաջորդ Սերունդ-ի տնօրէն Սարօ Սյվազեան հետաքրքրական ծրագիրներ ներկայացուց յաջորդ տարուան համար: ԿԻԶԱԿԷՏ-ի փոխ տնօրէններ Սթիւ Չերեզեան եւ Կրէյ Նեմէթ շնորհակալութիւն յայտնեցին ներկաներուն եւ ԿԻԶԱԿԷՏ-ի Յանձնախումբին, այս չորսօրեայ ձեռնարկին յաջողութեան համար իրենց տուած ջանքերուն:

Կիրակի առաւօտ, ողջերթի նախաճաշը ANZU ճաշարանին մէջ, հին եւ նոր ընկերներուն առիթ ընծայեց վերապրելու իրենց ԿԻԶԱԿԷՏ-ի յիշատակները, լուսանկարներ առնելու, հեռախօսային թիւեր փոխանակելու, դիմատետրով կապուելու եւ վերջին մնաց բարոյվը ըսելու:

2001-ի իր մեկնարկէն ի վեր Հ.Բ.Ը.Մ.-ի ԿԻԶԱԿԷՏ-ը ի մի բերած է 2,500 հայեր ամբողջ աշխարհէն, Նիւ Եորքի մէջ (2001-2007), Մոնթրէալ (2003), Մայամի (2005), Շիքագօ (2009) եւ Փարիզ (2011): Մինչեւ այսօր ԿԻԶԱԿԷՏ-ը հանգանակած է \$ 330,000 Հ.Բ.Ը.Մ.-ի ծրագիրներուն համար, կեդրոնացած կրթութեան, կանանց առողջութեան եւ երիտասարդութեան:



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՇԵՍՏԱՎԱՐԺՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՐԾՄԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԻԶԱԿԷՏ» ՁԵՆՆԱՐԿԻ ԸՆԹԱՑՔԻՆ

ԿԻԶԱԿԷՏի շաբաթավերջին, կայացաւ նաեւ Ե.Ա.ներու խորհրդակցական, ծրագրային առաջարկներու սերտողութեան եւ համագործակցական կարելիութիւններու քննարկման հանդիպում մը: ԿԻԶԱԿԷՏի հիւրընկալ խումբը Հիւսիսային Գալիֆորնիա, պարզեւատրուեցաւ «Համագործակցական Ոգի»ի Սրցանակով, Հ.Բ.Ը.Միութեան հանդէպ իր նուիրումին եւ մատուցած ծառայութիւններուն համար: Նախ քան ձեռնարկը կատարուած տեղեկատուական արհեստավարժ եւ բազմաբնոյթ աշխատանքը մեծապէս նպաստեց անոր փայլուն յաջողութեան:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՆԵՐ



ԵԱ Ընդհանուր Ժողովի մասնակիցներ Ման Ֆրանսիսքոյի մէջ Հիւսիսային Գալիֆորնիոյ ԵԱ-ու հիւրընկալութեամբ FOCUSի Շարքաւերջին տեղի ունեցած հաւաքին:

Հ.Բ.Ը.Մ.-ի Երիտասարդ Արհեստավարժներու շարժումը 22էն - 40 տարիքը ընդգրկող արհեստավարժ երիտասարդներու համախմբում մըն է (Հ.Բ.Ը.Մ.-Ե.Ա.), որ աշխարհի տարածքին արագ զարգացող ցանց մը կը հանդիսանայ: Գլխաւորաբար ասպարեզային եւ ընկերային բնոյթով յարաբերութիւններ եւ գործունէութիւն զարգացնող այս շարժումը, որ իր ազատ կառոյցով կ'ընդգրկէ երիտասարդ գործարար երիտասարդներու լայն շրջանակ մը, իր նախաձեռնութիւններով սատար կը հանդիսանայ հայ ինքնութեան արդի հասկացողութեան մշակումին եւ յարաբերութիւններու զարգացումին, նաեւ իր կարելիութեան սահմաններուն մէջ նիւթական օժանդակութիւն կ'ընձեռէ Միութեան տարբեր ծրագիրներուն, միաժամանակ երիտասարդութեան մօտ մշակելով հանրային կեանքի մասնակցութեան ոգին: Ե.Ա.ներու գործունէութիւնը կը դրսեւորուի հետեւեալ իրագործումներով.

- Աշխարհի չորս կողմէն 17,000 Երիտասարդ Արհեստավարժ մասնակից դարձնել 300 կրթական, մշակութային եւ ընկերային ձեռնարկներու, որ կը ներկայացնէ մօտաւորապէս Հ.Բ.Ը.Մ.-ի համաշխարհային գործունէութեանց մէկ երրորդը:
- Նուիրաբերելով \$147,000 նախաձեռնութիւններու համար, որուն կէտը տրամադրուեցաւ Հայաստանին: \$45,327 օժանդակութիւն տրուեցաւ Ե.Ա.-ի նուիրատուութեան ֆոնտին Հ.Բ.Ը.Մ.ի Հայորդեայց տուններուն: Յանգային կապը մեկնարկելէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.-ի Ե.Ա.-ն յաջողեցաւ հանգանակել \$519,000 զանազան ծրագիրներու համար:
- Միացնելով աշխարհի ԵԱ-ի խումբերը, որպէսզի կիրառէ իր երկրորդ համաշխարհային ներդրումով իրականացած ծրագիրը բանջարանոցի ջերմոցներ սպահովելով Հայաստանի Բարեկամաւան գիւղի ընտանիքներուն համար:
- Հիմը դնելով Ե.Ա.-ի խումբերուն Աթէնքի մէջ, Յունաստան եւ Լիոն-Ռոն-Ալպ, Ֆրանսա:

Երիտասարդ Արհեստավարժները նաեւ գործակից դարձան Հ.Բ.Ը.Մ.-ի Շրջանակներու, մասնաճիւղերու, դպրոցներու եւ ծրագիրներու, ինչպէս նաեւ հայ եւ ոչ-

հայ կազմակերպութիւններու, բազմաթիւ ծրագիրներու եւ ձեռնարկներու գծով, ներառեալ Լոս Անճելըսի Ե.Ա.-ի գործակցութիւնը Հ.Բ.Ը.Մ.-ի Արեւմտեան Շրջանակի Յանձնաժողովին հետ, Հ.Բ.Ը.Մ.-ի Համաշխարհային Խաղերուն առթիւ եւ Մեծն Նիւ Եորքի Ե.Ա.-ի գործակցութիւնը Նիւ Եորքի Հ.Բ.Ը.Մ.-ի Ամառնային Ասպարեզային Փորձառութեան ծրագրին, անոր 25-րդ տարեդարձին առթիւ:

